98. 2008 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 20:36-ից մինչև 20:38-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Ա.Մանուկյան 10 հասցեում տեղադրված A829 բանկոմատից 4659020183202005 և 4539793819131329 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 250.000 դրամ, ընդ որում, 150.000 դրամ հափշտակել է 4659020183202005 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 100.000 դրամ 4539793819131329 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

99. 2008 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 21:13-ից մինչև 21:21-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրազոշ Իոնուց Բոտեգատուն և «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Գ. Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից փորձել են ստանալ 1.425.000 դրամ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով կարողացել են հափշտակել ընդամենը 450.000 դրամ, ընդ որում, «Իգրեկ»-ը, օգտագործելով 4539791172011336, 4539791313259414,

4539797993802050, 6759684725825203, 4539791521675401 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, 150.000 դրամ հափշտակել է 4539791313259414 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 100.000 դրամ 4539791521675401 համարի քարտի կեղծ կրկնօրինակով, իսկ Ղրազոշ Իոնուց Բոտեգատուն, օգտագործելով 4539794575501176, 4539789040892309, 4539789170288161, 6759684424505130, 4929407733128000 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, 100.000-ական դրամ հափշտակել է 539789170288161 և 4539794575501176 համարների քարտերի կեղծ կրկնօրինակներով:

100. 2008 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 21:58-ից մինչև 22:00 ընկած

ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից 4659220211818000 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 225.000 դրամ, իսկ «Իգրեկ»-ը վերահսկել է հարակից տարածքը:

101. 2008 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 22:28-ին Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանի Մաշտոցի 18 հասցեում «AG էլեկտրո-նիքս» վաճառատանի մոտակայքում տեղադրված A825 բանկոմատից 4539787547999239 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

102. 2008 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 23:09-ին «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանի Կոմիտասի 3 հասցեով «Կոմիտաս» մասնաճյուղի A805 բանկոմատից 4659210041138000 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

103. 2008 թվականի օգոստոսի 16-ին Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերության՝ Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցում տեղադրված N 15 բանկոմատից, 4539785775743527 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

104. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 14:01-ից մինչև ժամը 14:06-ն ընկած ժամա-նակահատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն և «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Էրեբունի 18 հասցեում տեղադրված բանկոմատից փորձել են ստանալ 850.000 դրամ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով կարողացել են հափշտակել ընդամենը 475.000 դրամ, ընդ որում Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն, օգտագործելով 4539794575501176, 4921816975464527 և 4659220211818000 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները, 275.000 դրամ հափշտակել է 4659220211818000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 100.000 դրամ՝ 4921816975464527 համարի քարտի կեղծ կրկնօրինակով, իսկ «Իգրեկ»-ը 4659110342684001 համարի քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

105. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 14:38-ին Կ«Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Խորենացի 26«ա» հասցեում տեղակայված բանկոմատից 4658580274960036 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 50.000 դրամ:

106. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:05-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանում տեղադրված A842 բանկոմատից 4539786905542508 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

107. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:10-ից մինչև 15:13-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից 4539789698637139, 4539785775743527, 4539781490138101, 4539787547999239, 4539785209876505, 4539789170288161, 4539789874126162 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով փորձել է ստանալ 775.000 դրամ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով կարողացել է հափշտակել ընդամենը 100.000 դրամ 4539785775743527 համարի քարտի կրկնօրինակով:

108. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:25-ից մինչև 15:27-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից 4658580421905009, 4539786905542508 և 4659110047511004 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 300.000 դրամ, ընդ որում, 150.000 դրամ հափշտակել է 4658580421905009 համարի քարտի կեղծ կրկնօրինակով, 50.000 դրամ՝ 4539786905542508 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 100.000 դրամ՝ 4659110047511004 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

109. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:48-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանի Ա. Մանուկյան 10 հասցեում տեղադրված A829 բանկոմատից 4659010281344023 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

110. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:51-ից մինչև 15:56-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երե-վանի Ա.Մանուկյան 10 հասցեում տեղադրված A829 բանկոմատից 4462783322901566, 4539786043376512, 4539785450801525 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 450.000 դրամ, ընդ որում, 150.000-ական դրամ հափշտակել է յուրաքանչյուր քարտի կեղծ կրկնօրինակով:

111. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 15:57-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Ա.Մանուկյան 10 հասցեում տեղադրված A829 բանկոմատից 4658580746654001 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

112. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 16:32-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Բաղրամյան 85 հասցեում գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A828 բանկոմատից 4539789949636302 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

113. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 16:37-ին, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Կիլյան 19 հասցեում տեղադրված բանկոմատից 4658580029597000 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

114. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 16:48-ից մինչև 16:55-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Կոմիտասի 3 հասցեով «Կոմիտաս» մասնաձյուղի A805 բանկոմատից 4539781004834138 և 4659210191045005 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 575.000 դրամ, ընդ որում 150.000 դրամ հափշտակել է 4539781004834138 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 425.000 դրամ 4659210191045005 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

115. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 17:07-ից մինչև 17:12-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանում տեղադրված A813 բանկոմատից 4539788858721204, 4539789881836159 և 4539789984357145 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է 450.000 դրամ, ընդ որում 150.000-ական դրամ ստացել է յուրաքանչյուր քարտի կեղծ կրկնօրինակով:

116. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 17:30-ից մինչև 17:31-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Սարկավազի 123 հասցեով տեղադրված բանկոմատից 4659010310545103 և 4659011217980005 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 150.000 դրամ, ընդ որում, 100.000 դրամ հափշտակել է 4659010310545103 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 50.000 դրամ 4659011217980005 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

117. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 21:06-ից մինչև 21:14-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Սարկավազի 123 հասցեում տեղադրված բանկոմատից 4659210041138000, 4539791313259414 և 4658590847140016 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 500.000 դրամ, ընդ որում, 300.000 դրամ հափշտակել է 4659210041138000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով, 150.000 դրամ՝ 4539791313259414 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 50.000 դրամ՝ 4658590847140016 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

118. 2008 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 21:18-ին Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Սարկավազի 123 հասցեում տեղադրված բանկոմատից 4539792213547601 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

119. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 14:57-ից մինչև 14:58-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Գ. Լուսավորիչ փողոցում տեղադրված A832

բանկոմատից 4539781004834138 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

120. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 15:40-ին, Դրագոշ Իոնուց Բոտեզատուն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Գ.Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից 4539792213547601 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

121. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 15:59-ին, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Գ. Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից 4539785450801525 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 75.000 դրամ:

122. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 17:01-ից մինչև 17:02-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Բաղրամյան 85 հասցեում գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A828 բանկոմատից, 453978690554250 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

123. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 17:39-ից մինչև 17:41-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանում տեղադրված A813 բանկոմատից 4658580029597000 և 4539791313259414 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 250.000 դրամ, ընդ որում 150.000 դրամ հափշտակել է 4658580029597000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 100.000 դրամ՝ 4539791313259414 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

124. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 18:00-ից մինչև 18:01-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Ներսիսյան 1 հասցեով «Զեյթուն» մասնաճյուղում տեղադրված A836 բանկոմատից 4659210041138000 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

125. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 19:16-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Գ. Լուսավորիչ փողոցում տեղադրված A832 բանկոմատից, 4659011217980005 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 25.000 դրամ:

126. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 19:26-ից մինչև 19:27-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Խանջյան 19 հաս-ցեում տեղադրված բանկոմատից 4539786356982443 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

127. 2008 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 21:44-ից մինչև 21:45-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Բաղրամյան 85 հասցեով գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A828 բանկոմատից 4539791313259414 և 4659210041138000 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 200.000 դրամ, ընդ որում 50.000 դրամ հափշտակել է 4539791313259414 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 150.000 դրամ՝ 4659210041138000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

128. 2008 թվականի օգոստոսի 18-ին «Իգրեկ»-ը «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերության Երևանի Գայի պողոտա 12/10 հասցեով տեղադրված բանկոմատից 4539789984357145 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 75.000 դրամ և 4659010310545103 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով՝ 100.000 դրամ:

129. 2008 թվականի օգոստոսի 18-ին Դրագոշ Իոնուց Բոտեզատուն «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերության Երևանի Գայի պողոտա 12/10 հասցեում տեղադրված բանկոմատից 4462783322901566 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

130. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 16:33-ից մինչև 16:35-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Գ. Լուսավորիչ փողոցում տեղադրված A832 բանկոմատից 4539785450801525 և 4659020636932000 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր

առնամբ 250.000 դրամ, ընդ որում 100.000 դրամ հափշտակել է 4539785450801525 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 150.000 դրամ 4659020636932000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

131. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 16:38-ից մինչև 16:39-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երե-վանի Գ.Լուսավորիչ փողոցում տեղադրված A832 բանկոմատից 4462783322901566 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

132. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 16:59-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Թումանյանի 31 հասցեով գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A837 բանկոմատից 4539781004834138 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

133. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 17:08-ին, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Թումանյանի 31 հասցեով գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A837 բանկոմատից 4539789984357145 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 10.000 դրամ:

134. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 17:32-ից մինչև 17:40-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երե-վանի Բաղրամյան 85 հասցեով գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A828 բանկոմատից 4539796463422068 և 4539789984357145 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է 250.000 դրամ, ընդ որում, 100.000 դրամ հափշտակել է 4539796463422068 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 150.000 դրամ՝ 4539789984357145 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

135. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 17:47-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Հ. Քոչարի 2«ա» հասցեով «Հայաստան» հանրախանութում տեղադրված A810 բանկոմատից 4659010310545103 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 170.000 դրամ:

136. 2008 թվականի օգոստոսի 19-ին Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերության Երևանի Կոմիտասի 49 հասցեում տեղադրված բանկոմատից, 4539792213547601 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

137. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 18:43-ից մինչև ժամը 18:49-ն ընկած ժամա-նակահատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն և «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Ազատության 23 հասցեում տեղադրված բանկոմատից փորձել են ստանալ 1.050.000 դրամ, ընդ որում, 4659011217980005, 4658590847140016, 4658590459745029, 4659210191045005, 4539782794872007, 4658590901127008 համարների քարտերի կեղծ կրկնօրինակներն օգտագործել է Ղրագոշ Իոնուց Բոտեգատուն, իսկ 4462784430752586, 4539786905542508, 6767104722491859 համարների քարտերի կեղծ կրկնօրինակներն օգտագործել է «Իգրեկ»-ը, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով կարողացել են հա-փշտակել ընդամենը 100.000 դրամ, որը 4539786905542508 համարի քարտի կրկնօրինակով ստացել է «Իգրեկ»-ը:

138. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 20:05-ին, «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Երևանի Սարկավազի 123 հասցեում տեղադրված բանկոմատից 4539786356982443 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

139. 2008 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 20:40-ից մինչև 20:41-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության Երևանի Բաղրամյան 85 հասցեով գործող «ՍԱՍ» հանրախանութում տեղադրված A828 բանկոմատից 4658580029597000 և 4539786356982443 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 200.000 դրամ, ընդ որում, 150.000 դրամ հափշտակել է 4658580029597000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 50.000 դրամ՝ 4539786356982443 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

140. 2008 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 10:27-ից մինչև 10:28-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեզատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ «Հայ-րենիք» կինոթատրոնի մոտակայքում՝ Երևանի Արշակունյաց 41 հասցեում, տեղադրված A826 բանկոմատից 4462783322901566 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

141. 2008 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 10:36-ից մինչև 10:56-ն ընկած ժամանակա-հատվածում, Ղրագոշ Իոնուց Բոտեզատուն և «Իգրեկ»-ը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Գ. Նժդեհի 8 հասցեում տեղադրված բանկոմատից փորձել են ստանալ 775.000 դրամ, ընդ որում, 4921818334456913, 4539789984357145, 4539792213547601, 4659010310545103, 4462788325603663, համարների քարտերի կեղծ կրկնօրինակներն օգտագործել է Ղրագոշ Իոնուց Բոտեզատուն, իսկ 4539786905542508, 4539791313259414 համարների քարտերի կեղծ կրկնօրինակներն օգտագործել է «Իգրեկ»-ը, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով կարողացել են հափշտակել ընդամենը 150.000 դրամ, որը Ղրագոշ Իոնուց Բոտեզատուն հափշտակել է 4462788325603663 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

142. 2008 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 11:03-ից մինչև 11:05-ն ընկած ժամանակա-հատվածում, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ «Հայրենիք» կինոթատրոնի մոտակայքում՝ Երևանի Արշակունյաց 41 հասցեով տեղակայված A826 բանկոմատից 4539786356982443 և 4659020636932000 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակել է ընդհանուր առմամբ 250.000 դրամ, ընդ որում, 150.000 դրամ հափշտակել է 4659020636932000 համարի քարտի կեղծ կրկնօրինակով և 100.000 դրամ՝ 4539786356982443 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

143. 2008 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 13:10-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանի Սայաթ-Նովա 4 հասցեով Տիկնիկային թատրոնի մոտակայքում տեղադրված A808 բանկոմատից 4658580029597000 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

144. 2008 թվականի օգոստոսի 21-ին՝ ժամը 7:55-ին, Ղրագոշ Իոնուց Բոտեզատուն «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանի Հյուսիսային պողոտա 1/5բ հասցեում տեղադրված A840 բանկոմատից 4462788325603663 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ:

145. 2008 թվականի օգոստոսի 21-ին Ղրագոշ Իոնուց Բոտեզատուն «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Թումանյան 54 հասցեում տեղադրված բանկոմատից 4462783322901566 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 75.000 դրամ:

146. 2008 թվականի օգոստոսի 21-ին՝ ժամը 22:06-ին, «Իգրեկ»-ը «HSBC բանկ-Հայաստան» ՓԲ ընկերության՝ Երևանի Գ. Լուսավորիչ փողոցում տեղադրված A832 բանկոմատից 4917495505576310 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 100.000 դրամ:

Մեծ Բրիտանիայից հանցակիցների գործողությունները համակարգող ամբաստանյալը Լոնդոնում բնակվող և նույնանման գործունեությամբ զբաղվող, Ռումինիայի քաղաքացի Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին հայտնել է, որ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով հափշտակություններ հնարավոր է կատարել Հայաստանում գործող բանկերի բանկոմատներից և, տեղեկանալով, որ վերջինս ու նրա կողմից համերկրացիական սկզբունքով կազմակերպված մեկ այլ հանցավոր խումբը նույնպես նպատակադրվել է մեկնել ք.Երևան՝ հանցավոր գործունեություն ծավալելու համար, առաջարկել է իր բացակայության ընթացքում Հայաստանի տարածքում վերահսկել Ղրագոշ Իոնուց Բոտեզատունի և «Իգրեկ»-ի գործունեությունը: Ք.Երևան ժամանելուց հետո, Կ.Ստենգաչուն կապ է հաստատել ամբաստանյալի և «Իքս»-ի ստեղծած հանցավոր խմբի անդամների հետ, իսկ Ադի Իոան Բլազան որոշ դեպքերում վերջիններիս հետ միասին մասնակցել է բանկոմատներից գումարներ հափշտակելուն: Մասնավորապես, 2008 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 21:08-ից մինչև ժամը 21:37-ն ընկած ժամանակահատվածում, «Իգրեկ»-ը և Ադի Իոան Բլազան «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ

ընկերության՝ Երևանի Գ. Նժդե-իի 8 հասցեում տեղադրված բանկոմատից փորձել են ստանալ 1.950.000 դրամ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով կարողացել են հափշտակել ընդամենը 350.000 դրամ, ընդ որում, «Իգրեկ»-ն օգտագործել է 4539794189245137, 4921817935084637, 4539796826858040, 4547422004940076, 4539797889942069, 4917495505576310 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և 4917495505576310 համարի քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 150.000 դրամ, իսկ Ա.Բլազան օգտագործել է 4539781189503110, 4539791651421600, 4539780318697108, 4659010372044102, 4659010365422109, 4921819681606423, 4921817824602820, 4921817655832421, 4921819282764738, 4921819624863719 համարների կեղծ կրկնօրինակները և 100.000-ական դրամ հափշտակել է 4539791651421600 ու 4921817655832421 համարների քարտերի կեղծ կրկնօրինակներով:

2008թ. օգոստոսի 21-ին՝ ժամը 00:37-ից մինչև 00:50-ն ընկած ժամանակահատվածում, «Իգրեկ»-ը և Ա.Բլազան «Անելիք Բանկ» ՓԲ ընկերության՝ Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի մոտակայքում տեղադրված բանկոմատից հափշտակել են ընդհանուր առմամբ 300.000 դրամ, ընդ որում, «Իգրեկ»-ն օգտագործել է 6767104952478204, 6767104981344120, 6767104981316722, 6759672387230945, 6767081381050046, 6759674831962909 համարների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները և 200.000 դրամ հափշտակել է 6767081381050046 համարի քարտի կեղծ կրկնօրինակով, իսկ Ա.Բլազան օգտագործել է 4547422208223097, 4917315146734252, 4547423202356347, 4547427422457504, 4547429262361440, 4462785321131442 համարների կեղծ կրկնօրինակները և 100.000 դրամ հափշտակել է 4917315146734252 համարի քարտի կեղծ կրկնօրինակով:

Բացի այդ, ըստ «Իքս»-ի հետ նախնական պայմանավորվածության, Դ.Բոտեզատուն ձեռնամուխ է եղել ՀՀ դրամի տեսքով գողացված գումարներն արտարժույթի փոխարկելուն և միջազգային վճարային համակարգերով Մեծ Բրիտանիա փոխանցելուն, այսինքն՝ նշված եղանակներով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելուն: Գողացված 30.290.000 դրամից 7.211.000 դրամը մի քանի դեպքով ՀՀ տարբեր բանկերում նա փոխարկել է տարադրամի՝ ընդհանուր առմամբ 23.813 ԱՄՆ դոլարի, իսկ 5.980.494 դրամը քննությանը չպարզված անձանց միջոցով փոխարկել է 19.851 ԱՄՆ դոլարի: Դրա հետ մեկտեղ, գողացված և 39.664 ԱՄՆ դոլարի փոխարկված գումարը (համարժեք 11.983.494 ՀՀ դրամի) նա «Վեսթերն Յունիոն» և «Մոնեյ Գրամ» միջազգային համակարգերով 2008թ. օգոստոսի 11-ից մինչև 20-ն ընկած ժամանակահատվածում 8 գործարքով փոխանցել է Մեծ Բրիտանիա՝ ընկերոջը, դրանով իսկ խեղաթյուրելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի ծագման աղբյուրը և իրական բնույթը, իսկ «Իքս»-ը վերջինիցս ստացել է փոխանցված գումարները: Իր հերթին, ամբաստանյալի հետ նախնական պայմանավորվածության համաձայն, «Իգրեկ»-ը նույնպես ձեռնամուխ է եղել ՀՀ դրամի տեսքով գողացված գումարներն արտարժույթի փոխարկելուն և միջազգային վճարային համակարգերով Ռումինիա փոխանցելուն: Գողացված 30.290.000 դրամից 6.902.974 դրամը մի քանի դեպքով ՀՀ տարբեր բանկերում նա փոխարկել է տարադրամի՝ ընդհանուր առմամբ 22.766 ԱՄՆ դոլարի, իսկ 3.906.785 դրամը քննությանը չը-պարզված անձանց միջոցով փոխարկել է 12.950 ԱՄՆ դոլարի: Դրա հետ մեկտեղ, գողացված և 35.716 ԱՄՆ դոլարի փոխարկված գումարը (համարժեք 10.809.759 ՀՀ դրամի) նա «Վեսթերն Յունիոն» և «Մոնեյ Գրամ» միջազգային վճարային համակարգերով 2008թ. օգոստոսի 11-ից մինչև 21-ն ընկած ժամանակահատվածում 9 գործարքով փոխանցել է Ռումինիա՝ դրանով իսկ խեղաթյուրելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի ծագման աղբյուրը և իրական բնույթը: Կազմակերպիչներից մեկի՝ «Իքս»-ի ցուցումով հետքերը թաքցնելու նպատակով գումարները փոխարկելիս և փոխանցելիս Դ.Բոտեզատուն և «Իգրեկ»-ը ըստ նախնական պայմանավորվածության, բանկերի մասնաճյուղերում որպես բնակության վայր նշել են կեղծ հասցեներ, մասնավորապես՝ «Լմրոց», «Ղվին» և

«Եվրոպա» հյուրանոցները:
Այսպես.

1. 2008 թվականի օգոստոսի 11-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Արովյան-18» մասնաձյուղից 4.957 ԱՄՆ դոլարը (համարժեք 1.492.899 ՀՀ դրամի) «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
2. 2008 թվականի օգոստոսի 11-ին «Իգրեկ»-ն «Ամերիա-Բանկ» ՓԲ ընկերության Երևանի Վ.Սարգսյան 2 հասցեում գտնվող մասնաձյուղում 1.385.042 դրամը փոխարկել է 4.556 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:
3. 2008 թվականի օգոստոսի 12-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «Արարատ Բանկ» ԲԲ ընկերության «Ամիրյան» մասնաձյուղից 4.928 ԱՄՆ դոլարը (համարժեք 1.485.545 ՀՀ դրամի) «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
4. 2008 թվականի օգոստոսի 12-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Թումանյան-17» մասնաձյուղից 4.966 ԱՄՆ դոլարը (համարժեք 1.497.000 ՀՀ դրամի) «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
5. 2008 թվականի օգոստոսի 13-ին «Իգրեկ»-ը «Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Ռոսիա» մասնաձյուղից 4.950 ԱՄՆ դոլարը (համարժեք 1.493.365 ՀՀ դրամի) «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:
6. 2008 թվականի օգոստոսի 14-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «ԱմերիաԲանկ» ՓԲ ընկերության Երևանի Վ. Սարգսյան 2 հասցեում գտնվող մասնաձյուղում 1.520.000 դրամը փոխարկել է 5.000 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
7. 2008 թվականի օգոստոսի 15-ին «Իգրեկ»-ը «Յունիբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Կենտրոն» մասնաձյուղից 3.000 ԱՄՆ դոլարը (համարժեք 903.420 ՀՀ դրամի) «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:
8. 2008 թվականի օգոստոսի 16-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «ԱմերիաԲանկ» ՓԲ ընկերության Երևանի Վ.Սարգսյան 2 հասցեում գտնվող մասնաձյուղում 1.458.000 դրամը փոխարկել է 4.813,73 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
9. 2008 թվականի օգոստոսի 16-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Արովյան-18» մասնաձյուղից 5000 ԱՄՆ դոլարը (համարժեք 1.505.050 ՀՀ դրամի) «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
10. 2008 թվականի օգոստոսի 16-ին «Իգրեկ»-ն «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Թումանյան-17» հասցեում գտնվող մասնաձյուղում 1.346.216 դրամն փոխարկել է 4.450,30 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:
11. 2008 թվականի օգոստոսի 16-ին «Իգրեկ»-ն «Ամերիա-Բանկ» ՓԲ ընկերության Երևանի Վազգեն Սարգսյան 2 հասցեում գտնվող մասնաձյուղում 1.348.440 դրամն փոխարկել է 4.450,30 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:
12. 2008 թվականի օգոստոսի 19-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «Արդշինինվեստ-տրանկ» ՓԲ ընկերության «Երևան» մասնաձյուղում 1.515.000 դրամը փոխարկել է 5000 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Մոնեյ գրամ» համակարգով փոխանցել է Մեծ Բրիտանիա:
13. 2008 թվականի օգոստոսի 19-ին Ղրազոշ Իոնուց Բուտեգատուն «Արդշինինվեստ-բանկ» ՓԲ ընկերության «Էրեբունի» մասնաձյուղում 1.510.000 դրամը փոխարկել է 5000 ԱՄՆ դոլարի:
14. 2008 թվականի օգոստոսի 19-ին «Իգրեկ»-ն «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Տիգրան Մեծ» մասնաձյուղից 5.000 ԱՄՆ դոլարը (համարժեք 1.510.000 ՀՀ դրամի) «Մոնեյ գրամ» համակարգով փոխանցել է Ռումինիա:
15. 2008 թվականի օգոստոսի 19-ին «Իգրեկ»-ն «Ամերիա-Բանկ» ՓԲ

ընկերության՝ Երևանի Վազգեն Սարգսյան 2 հասցեում գտնվող մասնաձյուղում 1.349.359 դրամը փոխարկել է 4.453,33 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:

16. 2008 թվականի օգոստոսի 19-ին «Իգրեկ»-ն «Ամերիա-Բանկ» ՓԲ ընկերության՝ Երևանի Վազգեն Սարգսյան 2 հասցեում գտնվող մասնաձյուղում 89.957 դրամը փոխարկել է 296,89 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Վեսթերն Յունիոն» համակարգով փոխանցել է Ռումինիա:

17. 2008 թվականի օգոստոսի 20-ին Դրագոշ Իոնուց Բուտեզատուն «Արդշինինվեստ-բանկ» ՓԲ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաձյուղում 1.208.000 դրամը փոխարկել է 4000 ԱՄՆ դոլարի և նույն օրն այդ մասնաձյուղից «Մոնեյ գրամ» համակարգով 5000 ԱՄՆ դոլար փոխանցել է Մեծ Բրիտանիա:

18. 2008 թվականի օգոստոսի 21-ին «Իգրեկ»-ը «Ինելկոբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Թումանյան 17» մասնաձյուղում 1.383.960 դրամը փոխարկել է 4.560 ԱՄՆ դոլարի, որը նույն օրն այդ մասնաձյուղից «Մոնեյ գրամ» համակարգով փոխանցել է Ռումինիա:

2008 թվականի օգոստոսի 21-ին ամբաստանյալի և «Իքս»-ի կողմից ղեկավարվող խմբի անդամ Դ.Բուտեզատուն մեկնել է Հայաստանից՝ Երևան-Լոնդոն չվերթով, իսկ հաջորդ օրը Հա-յաստանից մեկնել է նաև նրա հանցակիցը՝ «Իգրեկ»-ը՝ նախապես Կ.Ստեփանյանի հանձնելով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները: Այդ ընթացքում ամբաստանյալը խմբի կազմում ընդգրկել է նոր անդամի, նրան ուղարկել է 139 հատ բանկային քարտերի կեղծ կրկնօրինակ-ների նոր խմբաքանակ և հանձնարարել է 1000 եվրո վարձատրության դիմաց դրանք տեղափոխել Հայաստան: 2008թ. օգոստոսի 23-ին նշված անձը Լոնդոն-Երևան չվերթով ժամանել է Հայաստան, որտեղ Կ.Ստեփանյանի օրինակով, բնակվել է «Կոնգրես» հյուրանոցում վարձակալ-ված համարում: Նույն անձը Կ.Ստեփանյանից ստանալով «Իգրեկ»-ի թողած կեղծ քարտերը, Կ.Ստեփանյանի հետ համաձայնության է եկել առ այն, որ վերջինիս կողմից կազմակերպած խմբի անդամ Ա.Բլազան դրանց միջոցով բանկոմատներից հափշտակություններ իրականացնի նաև իր համար: Իրագործելով այդ մտադրությունը և չստանալով ակնկալած գումարը, ամբաստանյալը եկել է եզրահանգման, որ այդ քարտերի օգտագործման հնարավորությունն սպառվել է և անձամբ ձեռնամուխ է եղել ՀՀ դրամի տեսքով գողացված գումարներն արտարժույթի փոխարկելուն՝ դրանով իսկ խեղաթյուրելով հանցավոր ձանապարհով ստացված գույքի ծագման աղ-բյուրը և իրական բնույթը: Մասնավորապես, 2008 թվականի օգոստոսի 25-ին ամբաստանյալն «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության Երևանի «Տիգրան Մեծ» մասնաձյուղում 2.250.000 դրամն իր անձնագրային տվյալներով փոխարկել է 5.000 եվրոյի, իսկ 2008 թվականի օգոստոսի 27-ին, զգուշանալով հնարավոր բացահայտումից և ձերբակալությունից, մեկնել է Հայաստանից՝ Երևան-Պրահա չվերթով: Նույն օրը որոշ ժամանակ անց, Ռիգա-Երևան չվերթով Հայաստան է ժամանել խմբի մեկ այլ անդամ՝ ներկրելով բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների խոշոր խմբաքանակ, սակայն չկարողանալով կապ հաստատել արդեն իսկ Հայաստանի տարածքը լքած ամբաստանյալի հետ, նույն օրը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության վարչական շենքին կից բանկոմատից ժամը 18:47-ից մինչև 18:55-ն ընկած ժամանակահատվածում 4921817596998323 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով հափշտակել է 160.000 դրամ, որից հետո բռնվել է բանկի աշխատակիցների կողմից:

Ապացույցների հետազոտում և գնահատում.

Դատաքննությամբ ամբաստանյալ Մարիուս Գիոչելի Պրուտեանուն (Լուպուն) ՀՀ քրեա-կան օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչեց, սակայն հրաժարվեց ցուցմունք տալուց: Ամբաստանյալ Ս. Պրուտեանունի (Լուպուի) դատաքննությամբ

հետազոտված նախաքըն-նական ցուցմունքների համաձայն՝ 2007-2008 թվականներից ինքը բնակվել է Մեծ Բրիտանիա-յում՝ Լոնդոն քաղաքում: Մանուկ հասակից ծանոթ է եղել Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի հետ, միասին ապրել են Բաքաու քաղաքում, այնուհետև հանդիպել են Լոնդոնում: Իրենց միջև եղել են ընկերական հարաբերություններ, հանդիպել են, մասնակցել են ճաշկերույթների տար-բեր ուրախ առիթներով: Կոռնելի «Բողո» մականունով եղբայրը միշտ գլուխ է գովացել, որ Կոռնելը լավ գումարներ է աշխատում Երևանում բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներով, այսինքն՝ կեղծ բանկային քարտերով: Կոռնել Ստենգաչուն այդ ժամանակ գտնվել է Հայաստանում, ինչի համար խնդրել է Բողոյին տալ նրա հեռախոսահամարը: Այդ ժամանակ ապրել է իր նախկին կնոջ՝ Սվետայի հետ, կինը հղի է եղել, իսկ դուստրն աչքի վիրահատության կարիք է ունեցել, ինչն առ այսօր չի կատարվել: Ինքը գումարի կարիք է ունեցել, ինչի համար զանգահարել է Հայաստան Կոռնելին, գրուցել է նրա հետ, հարցրել, թե նա ի՞նչ է անում Հայաստանում և ասել է, որ ըստ լուրերի լավ գումարներ է վաստակել: Նա հաստատել է դա և առաջարկել է կեղծ բանկային քարտերով գալ Հայաստան՝ ասելով, որ իրեն այդ քարտերով հափշտակված գումարներից տոկոս կհատկացնի: Ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների խմբաքանակ 22-ից 26 հատ: Դրանց միջոցով Լոնդոնի բանկոմատներից գումարներ հափըռ-տակել ենարավոր չի եղել, քանի որ այնտեղ գործող բանկոմատները սպասարկել են չիպերով հագեցված բանկային քարտերը: Ինքն այդ կեղծ քարտերը ձեռք է բերել Լոնդոնում բնակվող, ազգությամբ ռումինացի Վասիլե Փուկոյից, ով ծնունդով Օնեշտ քաղաքից է: Իր իմանալով, նա անձամբ է պատրաստել այդ կեղծ քարտերը, սակայն նրա հասցեն և հեռախոսահամարը չի իմացել, այլ տվյալներ նրա մասին իրեն հայտնի չեն:

Կեղծ քարտեր ձեռք բերելուց հետո՝ 2008 թվականի օգոստոս ամսին, ինքն ինքնաթիռով ժամանել է Հայաստան: Օդանավակայանում իրեն դիմավորել է Կոռնել Ստենգաչուն և գնացել են Երևանում գտնվող հյուրանոց, որի անվանումը չի տալավորվել հիշողության մեջ: Ինքը սենյակ է վարձակալել: Կոռնելը և Ադի Իրան Բլազան բնակվել են նույն հյուրանոցի մեկ այլ համարում: Վերջինիս հետ իրեն ծանոթացրել է Կոռնելը: Ինքն իր մտը եղած կեղծ բանկային քարտերը տվել է Կոռնել Ստենգաչուին, վերջինս դրանք փոխանցել է Բլազային, որպեսզի նա դրանցով բանկոմատներից գումարներ հափշտակի: Իրենք պայմանավորվել են, որ Բլազան գողացված գումարները կտա Կոռնել Ստենգաչուին, իսկ վերջինս այդ քարտերով հափշտակված գումարների 50 տոկոսը կտա իրեն: Թե մնացած 50 տոկոսը Կոռնելը ինչպես էր բաշխելու, տալու էր արդյոք մասնաբաժին Բլազային, թե ոչ՝ չի հետաքրքրվել:

Պայմանավորվածությունը եղել է Կոռնել Ստենգաչուի հետ, Բլազայի հետ այդ թեմաների շուրջ չի գրուցել:

Որոշ ժամանակ անց հասկացել է, որ այլևս անելիք չունի Հայաստանում, որովհետև Կոռնելն անընդհատ ասել է, որ այդ քարտերով գումարներ հափշտակել չի ստացվում, դրանցով շատ քիչ գումար է ելքագրվում բանկոմատներից: Այդ կեղծ բանկային քարտերի միջոցով բանկոմատներից գումարները հափշտակել է Ադի Իրան Բլազան, ինքը վերջինիս գործողությունները չի վերահսկել, նրան վերահսկել է Կոռնել Ստենգաչուն: Երբ Բլազան վերադարձել է հյուրանոց, Կոռնելը նրան սենյակ է կանչել, այնտեղ տարբեր հարցեր է տվել, այդ ժամանակ նրանք առանձնացել են, ինքը դրա մեջ չի խառնվել: Պիտի, որ Կոռնելը Բլազայի ձեռքից բոլոր գումարը վերցրել է և պահել է սենյակի սեյֆում: Իր հիշելով, Հայաստան իր գալուց հետո Կոռնել Ստենգաչուն զանգահարել է ընկերոջը՝ Օլիվեր Ռադուկու Մարիանին, որին ինքը ճանաչել է դեռ Լոնդոնից, երբ հանդիպել են խնջույքի ժամանակ: Օլիվերի մականունը Ռադու է եղել, նա Կոռնելի ընկերն է եղել: Թե ի՞նչ պայմանավորվածություն է եղել Կոռնել Ստենգաչուի և Ռադուի միջև, հստակ չգիտի, սակայն տեսյակ է եղել, որ Կոռնելն է կանչել Ռադուին Լոնդոնից Երևան: Ռադուի Հայաստան ժամանելուց հետո Երևան է ժամանել ևս մի ռումինացի երիտասարդ, ում չի ճանաչել: Ռադուն այդ երիտասարդի հետ բնակվել են այլ հյուրանոցում: Կոռնելից և Ռադուից իմացել է, որ Ռադուն և նրա ընկերը նույն գործով են զբաղվել Երևանում, սակայն նրանց կողմից հափշտակություններ

կատարելն անձամբ չի տեսել: Ռադուի և Կոռնել Ստենզաչուի պայմանավորվածության մանրամասներն իրեն հայտնի չեն եղել, կարող է միայն ենթադրել, որ Ռադուն ինքնուրույն է աշխատել Երևանում: Քանի որ Կոռնելի ներկայացմամբ իր բերած կեղծ քարտերով բանկոմատներից գումար գրեթե հափշտակել հնարավոր չի եղել, որոշել է վերադարձնալ Ռումինիա, ինչի մասին հայտնել է Կոռնելին և պահանջել է գողոնի իր բաժինը: Ընթացքում Կոռնել Ստենզաչուն իրեն տվել է հափշտակված փողերից որոշակի գումարներ՝ ՀՀ դրամի տեսքով, ասել է, որ դրանք փոխարկի եվրոյի և վերադարձնի նրան: Ինքն այդպես էլ արել է, մտել է Երևանի փոխանակման կետերից մեկը, որի գտնվելու վայրն այժմ վերհիշել չի կարող և այդ գումարը ՀՀ դրամի տեսքով վերածել է 5000 եվրոյի, որը փոխանցել է Կոռնել Ստենզաչուին: Երբ նրանից պահանջել է գողոնի իր բաժինը, Կոռնելը հյուրանոցային սենյակի սեյֆից հանել է 11800 ԱՄՆ դոլար և տվել է իրեն որպես իր մասնաբաժին: Ինքը կասկածել է, որ նա իրեն խաբել է, որ գողոնի իրական չափը իր քարտերից ավելի մեծ է եղել, և նա այն գրպանել է, սակայն դա ստուգել չէր կարող: Կոռնելին հայտնել է իր կասկածները, սակայն նա նորից իրեն խաբել է՝ ասելով, որ իր բաժինն այդքան է: Վերցնելով այդ 11800 ԱՄՆ դոլարը, գնացել է ինչ-որ ոսկերչական շուկա և գնել է 1000 ԱՄՆ դոլար արժեքով ոսկյա ժամացույց, հագուստ և նվերներ երեխաների համար, որից հետո մենակ գնացել է օդանավակայան և մեկնել է Երևան-Պրահա չվերթով, այնուհետև գնացել է Ռումինիա:

Ինչ վերաբերում է Կատալին Յոնուց Ապետրի Ֆուրդույին և Դրագոշ Իոնուց Բոտեզա-տուին, ապա նրանց չի ճանաչել և որևիցե առնչություն նրանց կողմից կատարված հափշտակությունների և բանկային փոխանցումների հետ չի ունեցել: Նրանց ոչ մի կեղծ բանկային քարտերի խմբաքանակ չի տրամադրել: Ծանոթ չէ նաև Կոնստանտին Հաջիի և Մարգարիտա Սպրուդանեի հետ, նրանց կողմից կատարված հանցագործություններին առնչություն չի ունեցել, կեղծ բանկային քարտերի խմբաքանակ չի տրամադրել:

Ինչ վերաբերում է Կոնստանտին Շերբանին, ապա նա իր մորաքրոջ աղջկա ամուսինն է: Իրենց հարաբերությունները եղել են բարեկամական, սակայն նա իրեն ոչ մի կեղծ բանկային քարտ չի տվել և իրենք Հայաստան ոչ մեկին հափշտակություններ կատարելու համար չեն ուղարկել: Հայաստան իր կողմից բերված կեղծ բանկային քարտերով հափշտակված գումարի իր մասնաբաժինը կազմել է 11800 ԱՄՆ դոլար ըստ Կոռնել Ստենզաչուի հավաստման: Թե ինչ-քան գումար է իրականում դրանցով հափշտակվել, հստակ ասել չի կարող: Այդ քարտերի իրացման, 5000 եվրոյի փոխարկման պահով մասով և ստացած գումարի չափով ինքը մեղավոր է և հարազատների միջոցով կարող է հատուցել այդ չափով պատճառած վնասը:

Դատապարտյալ Դրագոշ Իոնուց Բոտեզատուի դատաքննությամբ հետազոտված նա-խաքննական ցուցմունքների համաձայն՝ մինչև 2008 թվականի հունիսի վերջը կամ հուլիսի սկիզբն ինքը բնակվել է Հոլանդիայում, մոտ 7 տարի օգտագործել է «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց և թարգելու համար տեղափոխվել է բնակվելու Լոնդոն, որտեղ որոշ ժամանակ ապրել է ընկերների տանը և բնակարան է որոնել: Աշխատանք չի ունեցել, ֆինանսական ծանր վիճակի պատճառով ընկել է դեպրեսիայի մեջ, նույնիսկ ծխելն է թարգել: Իմացել է, որ Լոնդոնում ռումինացիներին պատկանող խանութներում հնարավոր է գտնել հայտարարություններ՝ աշխատանքի և վարձակալությամբ հանձնվող բնակարանների վերաբերյալ: Գնացել է այդ խանութներից մեկը, այնտեղ հանդիպել է մի խումբ ռումինացիների, որոնց թվում է եղել նաև «Քիշտրույա» մականունով անձնավորությունը, ով խոսելաձևից դատելով գնչու է: Ծանոթացել է նրա հետ և զրուցել են ավտոմեքենայի մեջ, որի սրահում տեսել է վերջինիս վարորդական իրավունքը և Կոստել Շերբանի տվյալներով ինչ-որ ապահովագրության փաստաթղթեր: Ինքը նկարագրել է իրավիճակը, «Քիշտրույա»-ն ասել է, որ կարող է օգնել բնակավայր և աշխատանք գտնելու հարցում՝ իր կողմից որոշ ծառայություններ մատուցելու դեպքում: Գտնվելով ֆինանսական շատ ծանր վիճակում, ինքն առանց մանրամասնությունները ճշտելու համաձայնվել է: «Քիշտրույա»-ն ասել է, որ շատ զբաղված է և չի կարող իրեն ուղեկցել

ամենուրեք, հայտնել է, որ կտա որոշ քա-նակությամբ կրեդիտ քարտեր, որոնց հետ ինքը պետք է մեկնի Հայաստան և այնտեղ բան-կոմատներին գումարներ ելքագրի: Ըստ պայմանավորվածության, իր փայաբաժինը պետք է կազմեր ելքագրված գումարի 10 տոկոսը: «Քիշտրուլյա»-ն բացատրել է, որ Հայաստան մեկնելու համար անհրաժեշտ է ձևակերպել վիզա, ինչ-որ մանր գումար է հատկացրել և ցուցում է տվել գնալ Լոնդոնում Հայաստանի դեսպանություն ու նկարագրել է դրա գտնվելու վայրը: «Քիշտ-րուլյա»-ն պահանջել է նաև իր անձնագրային տվյալները՝ ավիատոմս գնելու համար, ասել է, որ իր հետ միասին դեսպանություն է մտնելու մի տղա՝ նույնպես վիզա ստանալու նպատակով, որին ուրիշ իրեն անծանոթ մարդ է ուղարկելու: Հայաստան: Ղա Ապետրի Ֆուրդույն է եղել: «Քիշտ-րուլյա»-ն զգուշացրել է, որ ինքն այդ տղայի հետ ոչ մի գործ չունենա և չասի, թե ի՞նչ է անում և ու՞մ համար: «Քիշտրուլյա»-ն ասել է, որ միասին են մեկնելու Հայաստան, որովհետև երկուսն էլ ռումինացի են, բայց յուրաքանչյուրը կատարելու է սեփական գործը: Ինքն ըստ այդ ցուցումի գնացել է դեսպանություն, որտեղ առաջին անգամ է հանդիպել «Ռոկա» մականունով Կատալին Իոնուց Ապետրի Ֆուրդույի հետ: Մտել են դեսպանություն, ինքը կատարել է վճարումը և մի երկու-երեք օրից ստացել է անձնագիրը վիզայով: «Քիշտրուլյա»-ն իրեն տվել է մագնիսական շերտով մոտավորապես 130-150 հատ պլաստիկ քարտ, որոնք չափերով համապատասխանել են բանկային քարտերին, սակայն արտաքնապես տարբերվել են դրանցից. ավելի հասարակ են եղել, դրանց վրա բացակայել են քարտապանի տվյալները և բանկային քարտին բնորոշ այլ հատկանիշները: «Քիշտրուլյա»-ն իրեն չի վստահել և ասել է, որ պին-ծածկագրերը կհայտնի Հայաստան հասնելուց հետո:

Մի քանի օրից գնացել են օդանավակայան, «Քիշտրուլյա»-ից ընթացիկ ծախսերի համար ստացել է մոտավորապես 4500 ֆունտ ստերլինգի չափով գումար: Ֆուրդույի հետ հանդիպել են օդանավակայանում և միասին մեկնել են Հայաստան: Քարտերի խմբաքանակը պահել է պայու-սակում, իր իմանալով, նույն եղանակով դրանք Հայաստան է ներկրել նաև Ֆուրդույը: Իր կար-ծիքով քարտերի գրեթե նույն խմբաքանակն ունեցել է Ֆուրդույը, ստույգ քանակով ինքը չի հե-տաքրքրվել, քանի որ պետք է առանձին աշխատեին: Երևան են հասել օգոստոսի 9-ին, գնացել են նախապես ամրագրած մի հյուրանոց և տեղավորվել այնտեղ միևնույն համարում: Այդ երե-կոյան կամ հաջորդ օրը մետրոպոլիտենի կայարանի մոտակայքում գտնվող խանութից հեռա-խոսային կապ ունենալու համար միասին գնել են «Սիմ» քարտեր, որոնց ձևակերպման համար ամեն մեկը տվել է սեփական անձնագիրը: Իր հիշելով քարտերը հեռախոսների մեջ տեղադրել են արդեն հյուրանոցում և մի գուցե, իր բջջային հեռախոսի մեջ տեղադրել է այն քարտը, որը ձևակերպված է եղել Ֆուրդույի տվյալներով: Ամեն դեպքում, ինքն օգտվել է ոչ թե 077-346342 այլ 077-346329 հեռախոսահամարից: Չանգահարել է «Քիշտրուլյա»-ին, խոսակցության ժա-մանակ վերջինս ասել է, որ կտա պին-ծածկագրերը և ցուցում է տվել դրանց միջոցով իր հետ բերած քարտերով բանկոմատներից գումարներ ելքագրել և ուղարկել իրեն: Ինքը սկսել է փնտրել բանկոմատներ և ստանալ դրանցից գումարներ «Քիշտրուլյա»-ի կողմից տված քար-տերով: Պայմանավորվածության համաձայն, երեկոյան կամ հաջորդ օրն առավոտյան գան-գահարել է նրան և տեղյակ է պահել ելքագրված գումարի չափի մասին: «Քիշտրուլյա»-ն հե-ռախոսով իրեն հայտնել է քարտերի պին-ծածկագրերը, քարտերը համարակալված են եղել և ինքը դրանց վրա ձեռագիր նշումներ է կատարել, իսկ հետագայում, կարդալով քարտի վրա նշած պին-ծածկագրերը, դրանք մուտքագրել է բանկոմատի մեջ և ստացել է գումարները: Ապետրի Ֆուրդույը երբեմն իր հետ է եղել բանկոմատներից գումարներ ստանալիս, նա սեփական քար-տերով է գումարներ ելքագրել: Նա այդ քարտերը ստացել է այլ անձից: Իր իմանալով, Ֆուրդույն աշխատել է Մարիուս անունով տղամարդու համար, թե վերջինս ի՞նչ հարաբերությունների մեջ է եղել «Քիշտրուլյա»-ի հետ, ինքը չի իմացել: Ֆուրդույը հեռախոսով Մարիուսին մանրամասներ է հայտնել և իր պես պին-ծածկագրերն է ստացել: Թե ի՞նչ պայմանավորվածություն է ունեցել Մարիուսի հետ, ինքը չի իմացել, բնական է, որ ինչ-որ փայաբաժին ունեցել է ելքագրված գու-մարներից, սակայն մանրամասնություններով ինքը չի հետաքրքրվել: Ֆուրդույը

Մարիուսի հա-մար ունեցել է նույն նշանակությունը, ինչ ինքը «Քիշտրույա»-ի համար: Անծամբ Մարիուսին երբեք չի տեսել, նրա հետ չեն հանդիպել: Վերջինիս հետ գտնվելով Հայաստանում, ընդամենը մեկ անգամ է գրուցել բջջային հեռախոսով, քանի որ վիճաբանել է Ֆուրդույի հետ, որն անընդ-հատ իրեն հակաճառել է, կոպիտ է պատասխանել: Մարիուսն ուզեցել է խոսել իր հետ և հաշտեցնել Ֆուրդույի հետ: Իր հիշելով, Կատալինը Հանրապետության հրապարակի մոտակայքում զբոսնելուց խոսել է Մարիուսի հետ և պատմել է միջադեպի մասին, որից հետո փոխանցել է հեռախոսն իրեն: Ջրուցակիցը բարևել է և ներկայացել է Մարիուս անունով, ասել է, որ Կատալինը տարիքով ավելի փոքր է և հիմար, որ ինքը տարիքով ավելի մեծ է և իմաստ չունի կռվել և պրոբլեմներ ստեղծել, առաջարկել է ամեն մեկին սեփական գործով զբաղվել և խելոք մնալ, որ պրոբլեմներ չաջանան: Այլևս Մարիուսի հետ երբևիցե չի գրուցել:

Շատ դեպքերում ինքը և Ֆուրդույը Երևանում տարբեր ուղղություններով են գնացել, հե-տո պատահական հանդիպել են ինչ-որ բանկոմատի մոտ: Հաճախակի միասին են գնացել գու-մարներ ելքագրելու, քանի որ ինքն ավելի լավ է կողմնորոշվել քաղաքում: Որևիցե ստույգ դերա-բաշխում, տարածքը վերահսկելու մասին պայմանավորվածություն իրենց միջև չի եղել, ուղղակի մեկը բանկոմատից քարտերով ստացել է գումարները, իսկ մյուսը սպասել է իր հերթին: Միասին լինելուց ինչ-որ ձևով, ինչ-որ հարցերում աջակցել են միմյանց, սակայն որպես կանոն ամեն մեկն իր համար է գործել:

Այդ ընթացքում Կատալին Ֆուրդույի հետ տեղափոխվել են այլ հյուրանոց, որտեղ կրկին բնակվել են միևնույն համարում: Երբ իր մոտ հավաքվել է 5 հազար ԱՄՆ դոլարի չափով գումար, ինքն այն փոխարկել և ուղարկել է Լոնդոն՝ իր ծանոթ Լաուրենտիու: Կապմարեի տվյալներով և վերջինիս խնդրել է այդ գումարները փոխանցել «Քիշտրույա»-ին: Լաուրենտիուն իր ընկերու-հու՝ Օլիվիա Կապմարեի եղբայրն է և տեղեկություն չի ունեցել այդ գումարների ծագման աղ-բյուրի մասին, «Քիշտրույա»-ի հետ մինչ այդ ծանոթ չեն եղել: Փոխանցումներ կատարելուց «Քիշտրույա»-ն ցուցում է տվել որպես բնակության վայր նշել այլ հյուրանոցների տվյալներ՝ բռնվելուց խուսափելու համար: Ինքը կատարել է այդ ցուցումը: Նույն կերպ վարվել է նաև Ֆուրդույը: Այդպես տևել է մոտ մեկ շաբաթ, ելքագրված գումարները շատ մեծ են եղել և իր մեջ կասկած է առաջացել, որ դրանք կարող են գողացված կամ այլ անօրինական ծագում ունեցող փողեր լինել: Մինչ Հայաստան ժամանելն ինքը չի իմացել, որ «Քիշտրույա»-ն մտադիր է եղել գողություններ կատարել, մտածել է, որ ինչ-որ փոխանցումներ են կատարվել քարտից քարտ: Իհարկե, արտաքննապես վերջինիս տված քարտերը տարբերվել են նորմալ քարտերից, բայց ինքը մտածել է, որ Հայաստանում ինչ-որ հաշվեհամարների վրա մեծ գումարներ են եկել և հնարավոր չէ այլ վայրում դրանք ելքագրել: Իր կասկածների շուրջ գրուցել է Ֆուրդույի հետ և վերջինս հայտնել է, որ իրենց քարտերը վերագրառվել են անգլիացիների բանկային քարտերից և դրանց միջոցով բանկամոտներից հափշտակվել են անգլիացիներին պատկանող գումարները: Հասկանալով դա, ինքը զանգահարել է «Քիշտրույա»-ին և ասել, որ այլևս համաձայն չէ շարունակել այդ գործը, սակայն վերջինս բարկացել ու ասել է, որ շարունակի կատարել իր առա-քելությունը և ոչինչ չի պատահի, օրենքի հետ կապված խնդիրներ չի ունենա, հիշատակել է, որ ունի իր բոլոր տվյալները և հակառակ դեպքում կարող է պրոբլեմներ առաջացնել: «Քիշտ-րույա»-ն ասել է, որ իրեն հասանելիք գումարը կավելացնի, միայն անի այն, ինչի համար եկել է Հայաստան: Վախենալով ծնողների համար, ինքը որոշել է մնալ և մի քանի օր շարունակել է այդ գործը: Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի և վերջինիս խմբի անդամների, մասնավորապես Ադի Իոան Բլազայի և Օլիվեր Ռադուկու Մարիանի հետ ծանոթ չի եղել, Երևանում նրանց չի հան-դիպել և չի իմացել, որ բացի իրենից և Ֆուրդույից այլ ռումինացիներ էլ են Հայաստանում հափշտակություններով զբաղվել: Այն մասին, որ Ֆուրդույը Երևանում հանդիպել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի և Ադի Իոան Բլազայի հետ և նույնիսկ վերջինիս հետ բանկոմատ-ներից գումարներ է գողացել, ինքը ոչինչ չի իմացել, Ֆուրդույն այդ մասին ոչինչ չի հայտնել, եթե նման

հանդիպումներ եղել են, ապա իր բացակայությամբ:
Ի վերջո «Քիշտրուլյա»-ին ասել է, որ չի շարունակելու զբաղվել դրանով, դեն է նետելու իր մոտ եղած քարտերը և վերադառնալու է այն օրը, որը նշված է եղել հետադարձ տոմսի վրա: «Քիշտրուլյա»-ն ասել է, որ քարտերը վերադարձնի, սակայն ինքը, արդեն իրողությունը հասկանալով, դրանք պատռել և դեն է շարտել: Այդ ամենն այդպես է վերջացել, «Քիշտրուլյա»-ի կամքին հակառակ վերադարձել է Լոնդոն, հանդիպել է նրա հետ, նա ասել է, որ ոչ մեկին չասի իրենց ծանոթության և Հայաստանում կատարվածի մասին: «Քիշտրուլյա»-ն գումարն ստացել էր Լաուրենտիո Կապմարեից, որևիցե պարտք ու պահանջ չի ներկայացրել: Դրանից հետո երբևիցե չեն հանդիպել, «Քիշտրուլյա»-ն իրեն ոչինչով չի օգնել և խոստումները չի պահել՝ աշխատանք և բնակարան գտնելու հարցում: Ինքը բավարարվել է հափշտակված գումարի 10 տոկոս գումարով՝ մոտ 3000 ԱՄՆ դոլարով: Իր հաշվարկով, Հայաստանում ինքը գողացել է մոտ 30000 ԱՄՆ դոլար: Գողոնից հասանելիք իր բաժնի մի փոքր մասը Երևանից փոխանցել է Լաուրենտիո Կապմարեին, մնացածը պահել է իր մոտ: Լոնդոն վերադառնալուց հետո ծա-նոթացել է մի մարմնավաճառի հետ և միասին մեկնել են Ադրբեջան՝ ժամանակ անցկացնելու, այնտեղ հափշտակություններ չի իրականացրել, ինչ Հայաստանում ձեռք է բերել, այնտեղ ծախսել է:
Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ ինքը, Ֆուրդույը, Կոռնել Կոնստանտին Ստենգաչուն զանգահարել են Մեծ Բրիտանիայում և Ռումինիայում գործող միևնույն հեռախոսահամարներին կամ նույն հեռախոսահամարներից զանգեր են ստացել, ապա դա պարզաբանել չի կարող, կարող է ենթադրել, որ Ֆուրդույի հեռախոսահամարի հաշվեկշիռն գումար չի եղել և նա օգտվել է իր հեռախոսահամարից կամ էլ զանգահարել են իրեն և խնդրել են լսափողը փոխանցել Ֆուրդույին:
Ղատակարտյալ Ադի Իոան Բլագայի դատաքննությամբ հետազոտված նախաքննա-կան ցուցմունքների համաձայն՝ ինքը միմիայն Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի ճնշման ներքո է կատարել իրեն վերագրված բոլոր հանցագործությունները և մեղավոր է միայն «Վեսթերն Յունիոնի» համակարգի միջոցով Ռումինիա՝ հարազատներին 2940 ԱՄՆ դոլարի չափով փոխանցված գումարի հափշտակության մեջ, իսկ մնացած գումարները գողացել ու հանձնել է Կոռնել Կոնստանտին Ստենգաչուին: Հայաստանում գտնվելու ընթացքում անգամ նույնիսկ ցանկացել է դիմել իրավապահ մարմիններին և հայտնել ամբողջ իրողությունը, սակայն լինելով օտարերկրացի և գտնվելով Ստենգաչուի ու վերջինիս ընկերների ճնշման և հսկողության ներքո, չի կարողացել դիմել այդ քայլին:
Հայաստանում աշխատելով նրանց համար, նկատել է, որ վերջիններս իրենից որոշ հանգամանքներ թաքուն են պահել, խաբել են իրեն: Ստենգաչուն հանցավոր գործողությունն իրականացնելու նպատակով իրենից վերցրել է նանձնագիրը և ստիպել, որպեսզի ինքը կատարի նրա թելադրած բոլոր վտանգավոր արարքները: Միաժամանակ իրենից վերցրել է ամբողջ գողոնը, որպեսզի ինքը, չունենալով գումար, չկարողանա փախուստի դիմել և հեռանալ Հայաստանից:
Ինքը հանդիպել է Կոռնել Ստենգաչուին Մեծ Բրիտանիայում, որտեղ շատ գումար չի վաստակել, աշխատել է մի շինարարական կազմակերպությունում՝ որպես սալիկապատող, շաբաթական վաստակել է 250 ֆունտ ստերլինգ, ամեն օր առավոտյան գնացել է աշխատանքի և երեկոյան վերադարձել: Ինքն այդ ժամանակ ապրել է «Ղրագոշ» մականուն ունեցող Միհայ Ֆաուրի հետ և Ստենգաչուն մի օր եկել է իրենց մոտ: Ղա երկհարկանի շենք է եղել, որի սենյակները տրվել են վարձակալությամբ և ինքն ունեցել է առանձին սենյակ՝ շենքի ետնամասից մուտքով: Ստենգաչուն վարձակալել է մի սենյակ Միհայ Ֆաուրից, բնակվել է այնտեղ եղբոր՝ Բոդոյի հետ: Գալով իրենց մոտ, Ստենգաչուն ասել է, որ կարող են ավելի մեծ գումարներ վաստակել այլ եղանակով, առանց աշխատելու: Նա ձեռք է բերել ամեն ինչ՝ հանցավոր գործու-նեությամբ զբաղվելու նպատակով, վերջինս ինչ-որ կապ է ունեցել այն անձանց հետ, որոնք զբաղվել են կրեդիտային քարտեր կեղծելով: Ստենգաչուն իրենց տրամադրել է ինչ-որ հատուկ սարքեր, որոնք նախատեսված են եղել բանկային քարտերի վրա առկա տեղեկությունները պատճենահանելու և դրանց տիրանալու համար,

բացատրել է դրանց կիրառման մանրամասները: Նշված սարքերն արտաքինապես պլաստիկից են պատրաստված եղել, բանկոմատին կցելու միջոցով պատճենահանվել են դրա մեջ մտցված բանկային քարտերի տեղեկությունները, որոշ տեղեկություններ ստացվել են միկրոտեսախցիկի միջոցով: Ինքը մանրամասներով չի հետաքրքրվել, մի երկու անգամ այդ սարքերը փակցրել է բանկոմատներին: Ստենգաչուի տված սարքերով ինքը կարողացել է տիրանալ բանկային քարտերի վրա առկա տեղեկություններին և դրանք՝ սարքով հանդերձ, փոխանցել է Ստենգաչուին: Նա ասել է, որ պետք է այլ անձանց օգնությամբ պատրաստի կեղծ բանկային քարտեր: Այդ անձանցից մեկի անունը «Քիշտրույա» է եղել, իսկ մյուսի անունը Մարիուս, որը Բաքաու քաղաքից է: Վերջինիս ազգանունը չի իմացել, սակայն այդ Մարիուսը ոչ թե Մարիուս Լուպուն էր, այլ մի այլ տղամարդ: Բաքաու քաղաքից: Այդ բոլոր անձինք Բաքաու քաղաքից են եղել: Մի քանի անգամ Ստենգաչուն իր կողմից փոխանցված սարքերի և դրանց վրա առկա տեղեկությունների կապակցությամբ ասել է, որ այդ տեղեկությունները պատշաճ չեն, որպեսզի դրանց օգտագործմամբ կեղծ բանկային քարտեր պատրաստվեն: Մի քանի օրից Ստենգաչուն իրեն և Ֆաուրին ասել է, որ ձեռք է բերել պատշաճ տեղեկություններ՝ կեղծ բանկային քարտեր պատրաստելու համար:

Ստենգաչուն հաճախակի ցույց է տվել, որ ինքն է ղեկավարը, իրենց հետ կոպիտ է խոսել և խստորեն զգուշացրել է, որպեսզի լսեն իրեն ու կատարեն իր հրահանգները: Դրանից հետո նա սկսել է որոնել երկիր, որտեղ կարելի կլիներ օգտագործել այդ տեղեկություններով կեղծված քարտերը, քանի որ դրանց միջոցով Մեծ Բրիտանիայում հափշտակություններ կատարել հնարավոր չի եղել: Այդ ընթացքում Ստենգաչուն հաճախակի առանձին է զրուցել Միհայ Ֆաուրիի հետ, քննարկել են, թե որ երկրում կարելի է նման կեղծ բանկային քարտերով գումարներ հափշտակել: Ինքը հաճախակի է լսել Ստենգաչուի և Ֆաուրիի խոսակցությունները, երբ նրանք առանձնացած քննարկել են այդ հարցերը: Դրանից մի քանի օր անց Ստենգաչուն այդ հարցով Լոնդոն քաղաքում կապ է հաստատել համերկրացիների հետ, որոնք ծնունդով Բաքաու քաղաքից են եղել: Նա հանդիպել է համաերկրացուն և լավ ընկերոջը՝ Մարիուս Լուպուին, վերջինս Ստենգաչուին հայտնել է, որ գումարների հափշտակության համար կարող է մի երկիր մատնանշել և պայմանավորվել են միասին աշխատել, որ հայտնած տեղեկությունների դիմաց Ստենգաչուն նրան որոշ տոկոսով փայաբաժին վճարի՝ քարտերի տեսքով կամ գումարով: Մանրամասներով չի հետաքրքրվել, նրանք երկուսով են զրուցել իրեն անձանոթ գնչուական լեզվով, երբ ինքը վարել է «Ֆոլքսվագեն Պասատ» մոդելի ավտոմեքենան, որն, իր իմանալով, պատկանել է Ստենգաչուի ընկերոջը: Այդ խոսակցությունից մեկ-երկու օր հետ Ստենգաչուի առաջարկով գնացել են Լոնդոնի կենտրոն, որտեղ նա հանդիպել է խոսել է ինչ-որ անձնավորության հետ: Երբ Կոռնելը վերադարձել է, իր հարցին պատասխանել է, որ դա Մարիուսն է: Ավելի ուշ՝ արդեն Հայաստանում, իմացել է, որ այդ անձնավորությունը Մարիուս Լուպուն է, ով նախկինում վիճած է եղել Ստենգաչուի հետ և նրա դեմքը վնասած է եղել դանակով: Վերադառնալուց Ստենգաչուն իրեն ասել է, որ եթե նրա հետ աշխատի, հնարավորություն կստանա լավ գումարներ վաստա-կելու: Նա առաջարկել է այդ գումարներն աշխատել Հայաստանում և ինքը մտածել է, որ վաստակած գումարը կիսվելու է հավասար: Կոռնելն իրեն առաջարկել է միասին գնալ դեսպա-նատուն և ձևակերպել Հայաստանի մուտքի վիզաներ: Ինքը համաձայնվել է Ստենգաչուի հետ գնալ, ակնկալելով վաստակել խոշոր գումարներ: Վերջինս խոստացել է գործարքի ավարտին իր համար գնել ավտոմեքենա կամ էլ գումար վճարել իր աշխատանքի դիմաց: Իրենք կոնկրետ չեն պայմանավորվել փայաբաժնի տոկոսի մասին, կոնկրետ գումար չի նշվել, սակայն ինքն ենթադրել է, որ գործարքից կարող է վաստակել խոշոր գումար՝ գողոնի կեսը, քանի որ երկուսով են եղել: Նույն օրն ինքը և Ստենգաչուն ներկայանալով դեսպանատուն՝ դիմել են ՀՀ մուտք գործելու վիզա ստանալու համար: Երբ վերադարձել են Ստենգաչուի բնակարան, վերջինս վիճել է Ֆաուրիի հետ: Կոռնելն իրենից պահանջել է մի քանի օր առաջ 120 ֆունտ ստերլինգով գնած իր ձեռքի «Դոլչե Գաբանա» տեսակի

նոր ժամացույցը, սակայն ինքը չի համաձայնվել, գնացել է Ֆաուրի սենյակը և նրան է պատմել այդ մասին: Վերջինս իրեն խորհուրդ է տվել ժամացույցը չտալ Ստենգաչուին: Կոռնելը, լսելով իր և Ֆաուրի խոսակցությունը, բարկացել, ծեծել է իրեն և խլել է այդ ժամացույցը: Դրա պատճառով Ստենգաչուն և Ֆաուրը վիճել են, ինքը լսել է, որ նրանք հրաժարվել են այլևս միասին աշխատել և որոշել են բաժանել ծեռք բերված տեղեկությունները, որոնց օգտագործմամբ հնարավոր էր պատրաստել կեղծ բանկային քարտեր: Ինքն չի տեսել, թե ինչպես և ինչ են նրանք բաժանել, սակայն դրա հաջորդ օրը Ֆաուրը լքել է այդ բնակարանը:

Մի երեք օր անց ինքը և Ստենգաչուն կրկին գնացել են Լոնդոնում Հայաստանի դեսպանություն, ստացել են վիզաներով անձնագրերը և վերադարձել են տուն, որտեղ եղել է Ստենգաչուի եղբայրը՝ Բոդոն: Ստենգաչուն ասել է Բոդոյին, որ պետք է պատրաստել քարտերը, խորհրդ-դակցել են, թե ինչպես տեղեկությունները փոխանցեն պլաստիկների վրա: Նրանք գանգահարել են ինչ-որ մեկին, իր կարծիքով «Քիշտրույա» անունով մի տղամարդու, քանի որ նա ամենագիտակն է եղել այդ բնագավառում և ունեցել է «քարտրիդեր» կոչվող սարքերը, որի միջոցով հափշտակված տեղեկությունները գրառվել են պլաստիկների վրա: Ստենգաչուն և Բոդոն «Քիշտրույա»-ից խնդրել են տրամադրել «քարտրիդեր»-ը, որը Բոդոն ավելի ուշ բերել է իրենց բնակարան: Մեկ գիշերվա ընթացքում Ստենգաչուն և Բոդոն միասին պատրաստել են կեղծ քարտերը, որոնք իրենց հարկավոր են եղել գումարների հափշտակություն հրականացնելու համար: Քարտերը պատրաստելու ժամանակ, երբ ինքն ուզեցել է մտնել նրանց սենյակը, իրեն դուրս են հրաՎիրել, որպեսզի չտեսնի քարտերի պատրաստման եղանակը: Այնուհետև Ստենգաչուն գնացել է և իրենց համար Հայաստան մեկնելու նպատակով ավտոմոտեր է գնել: Ինքը կարծել է, որ կեղծ քարտերը Բոդոն պիտի ուղարկեր իրեն և Ստենգաչուին Հայաստան, սակայն դեպի օդանավակայան ճանապարհին Ստենգաչուն կատակի տեսքով իրեն ասել է, որ քարտերն իր ճամպրուկում են: Ինքը սաստիկ վախեցել է և որոշել է վերադառնալ, սակայն Ստենգաչուն խորհուրդ է տվել չվախենալ, վստահեցնելով, որ այդ քարտերն այնպես են թաքցվել, որ դժվար է հայտնաբերել, հույս է տվել, որ ոչինչ չի լինի, դա առաջին անգամ չէ: Լոնդոնի օդանավակայանում իրոք ոչինչ չի պատահել և իրենք ուղևորվել են Երևան: Հասնելով Երևան, իրենք բարեհաջող անցել են մաքսային ստուգումը և ուղևորվել «Եվրոպա» հյուրանոց, որի մասին Ստենգաչուն տեղեկացել է տաքսու վարորդից, նախորոք այն չի ամրագրվել: Երևան հասնելուց հետո, նա անմիջապես վերցրել է իր անձնագիրը: Հասնելով «Եվրոպա» հյուրանոց, ինքն ու Ստենգաչուն վարձակալել են մեկ սենյակ: Հյուրանոցի համարում, երբ իրենք դասավորել են իրերը, Ստենգաչուն ցույց է տվել իր ճամպրուկում սև գույնի գուլպայի մեջ թաքցված քարտերը և մոտ 10-20 րոպե անց առաջարկել է իրեն վերցնել դրանց մի մասը, իր հետ գնալ քաղաք և փորձարկել այդ քարտերը: Միասին դուրս գալով հյուրանոցից, «Երևան» հյուրանոցի մոտակայքում նկատել են մի բանկո-մատ, Ստենգաչուին ասել է, որ կսպասի մոտակայքում, քանի որ վճարել է իրեն, որ բոլոր գործողություններն ինքը պետք է կատարի անձամբ, իսկ ինքը հեռվից վերահսկելու է դա: Ստենգաչուն հանձնարարել է իրեն մի քանի կեղծ քարտերով մենակ մոտենալ այդ բանկոմատին և փորձարկել դրանք: Նա նաև ցուցում է տվել հափշտակված գումարը գործածված քարտի հետ դնել մի փոքր պայուսակի մեջ, իսկ այն քարտերը, որոնց միջոցով չի ստացվել գումար հափշտակել, տեղադրել առանձին գրպանում: Ինքը փորձել և առաջին իսկ բանկոմատից ստացել է որոշ գումար: Ստենգաչուն հանձնարարել է շարժվել իր հետևից և, մատնանշած բանկոմատներին մոտեցնելով, կատարել նույն գործողությունները: Կատարելով վերջինիս հանձնարարությունները, մոտեցել է մի երկու բանկոմատի: Երևանի կենտրոնում գտնվող սրահից իրենք ծեռք են բերել բջջային հեռախոսի 2 հայկական «sim-քարտ» մեկն իր համար, քարտերը գնելուց Ստենգաչուն ներկայացրել է իր անձնագիրը: Այդ օրն ինքը կարողացել է հափշտակել մոտավորապես 1000-2000 եվրոյին համարժեք դրամ և ի վերջո ավարտել են գործը, քանի որ ուշ է եղել: Հյուրանոց վերադառնալուց առաջ Ստենգաչուն պահանջել է այդ

օրվա գողոնը պարունակող պայուսակը և ասել է, որ իր մոտ պահի այն քարտերը, որոնց միջոցով չի կարողացել գումարներ ստանալ բանկոմատներից: Հյուրանոցում Կոռնելն ասել է, որ հաջորդ օրը տեղափոխվելու են այլ հյուրանոց: Դրանից հետո Ստենգաչուն զանգահարել է Լոնդոն կամ Բոդոյին, կամ Մարիուս Լուպուին, կամ «Քիշտրույա»-ին, խոսել է իրեն անհասկանալի գնչուական լեզվով, այդ խոսակցությունից ինքը հասկացել է, որ մի այլ ռումինացի այդ ժամանակ նույնպես Հայաստանում է եղել և կարող է ցույց տալ բանկոմատների տեղակայման վայրերը՝ նոր գումարներ հափշտակելու համար: Ստենգաչուն իրեն հայտնել է, որ այդ անձնավորության անունը Կատալին է: Թե կոնկրետ ումից է հեռախոսահամարը ճշտել, ինքը չի իմացել, որովհետև նրանք բոլորն ընկերներ են եղել: Կոռնելը զանգահարել է Կատալինին, ինքը լսել է խոսակցությունը, այդ երիտասարդը գնչուական լեզվով չի խոսել: Կատալինի հետ հեռախոսային խոսակցությունը ընթացքում Ստենգաչուն խընդ-րել է, որպեսզի գա Երևանի կենտրոն և ցույց տա բանկոմատների գտնվելու վայրերը, որի դիմաց կվճարի, ավելացնելով, որ նրա դեմ ոչինչ չունի և վերջինիս չի վնասի: Կատալինը գումարներ էր գողացել Մարիուս Լուպուի և «Քիշտրույա»-ի համար, իր իմանալով, նրանք վիճվել էին ինչ-որ գումարային հարցով, որի կապակցությամբ Ստենգաչուն հավաստիացրել է Կատալինին, որ նրան չի վնասի: Ստենգաչուի հետ Երևանի կենտրոնում հանդիպել են Կատալինին, Ստենգաչուն իրեն ծանոթացրել է վերջինիս հետ և Կատալինին հանձնարարել է իրեն ցույց տալ բանկոմատների գտնվելու վայրերը, որտեղից կարելի է հափշտակել գումարներ: Իր իմանալով Ստենգաչուն Կատալինին տրամադրած տեղեկությունների դիմաց պետք է վճարեր որոշ գումար, քա-նի որ վերջինս, իրենցից շուտ ժամանելով Երևան, ավելի լավ էր ծանոթ Երևան քաղաքում բանկոմատների տեղակայման վայրերին:

Ժամանելու հաջորդ և հետագա բոլոր օրերին ինքն Ստենգաչուի հետ միասին գնացել են քաղաք՝ գումարներ հափշտակելու, փողն ինքն է ստացել բանկոմատներից, իսկ Կոռնելը հսկել է իրեն: Երկրորդ օրը հափշտակություններն ավարտելուց հետո, երբ վերադարձել են հյուրանոց, Ստենգաչուն կապվել է Լոնդոնում գտնվող Ռադու անունով ընկերոջ հետ, ինքը լսել է ռումինե-րեն լեզվով խոսակցությունը: Ստենգաչուն նրան առաջարկել է ուղևորվել Հայաստան և միանալ իրեն՝ պատճառաբանելով, որ այստեղ մենակ է, «այս անբարոյականի որդու», այսինքն՝ իր հետ լավ չի զգում: Որևիցե առաջարկ Ռադուին բերել լրացուցիչ քարտեր ինքը հեռախոսագրույցի ընթացքում չի լսել: Ինքը Ռադուին մեկ անգամ հանդիպել է Լոնդոնում, նա մեքենայով եկել և գրու-ցել է Ստենգաչուի հետ մի քանի թուպե: Ինքը տեսել է վերջինիս դեմքը, սակայն չեն ծանոթացել և չեն գրուցել:

Իր հիշելով, ինքն ու Ստենգաչուն մեկ կամ երկու օր ապրել են «Եվրոպա» հյուրանոցում, այնուհետև տեղափոխվել են «Էրեբունի» հյուրանոց, բնակվել են միևնույն սենյակում: Սկզբից ինքն ու Ստենգաչուն ոտքով են շրջել Երևանով, հետո տաքսիով՝ այլ բանկոմատների գտնվելու վայրը ճշտելու համար, որից հետո այնտեղից ինքը գողություններ է կատարել է: Իր հիշելով, մինչև Ռադուի Հայաստան գալը, ինքը Ստենգաչուին առաջարկել է վարձակալել ավտոմեքենա և համապատասխան սրահից վարձակալել են «BMW Z-3» մոդելի ավտոմեքենա: Ռադուն՝ Օլի-վեր Ռադուկու Մարիանը, ժամանել է Հայաստան երեք օր անց, միայնակ, իր կարծիքով, տաք-սիով եկել է քաղաք և բնակություն հաստատել «Եվրոպա» հյուրանոցում: Ինքը նրան դիմավորելու համար օդանավակայան չի գնացել, իր հիշելով նույն օրը Ստենգաչուի հետ միասին գնա-ցել են նույն սրահը և Ռադուն ևս վարձակալել է ավտոմեքենա, որը չափերով ավելի փոքր է եղել, քան իրենց վարձակալած «BMW Z-3»-ը: Ինքը և Ստենգաչուն ամեն օր միասին կրկին կատարել են հափշտակություններ, Ռադուն մեկերկու օր մենակ նստել է հյուրանոցում, սակայն հափշտակություններն ավարտելուց հետո Ստենգաչուն միշտ խոսել է նրա հետ, գնացել է «Եվրոպա» հյուրանոց: Օլիվերը ոչ մի դերակատարություն չի ունեցել, եղել է Ստենգաչուի ընկերը և գրեթե միշտ եղել է վերջինիս հետ: Ինքը հանդիպել և ծանոթացել է Օլիվերի հետ, վերջինս ներկայացել է Ռադու անունով: Ինքը ներկա է եղել

նրանց խոսակցություններին, սակայն վերջիններս խոսել են իրեն անհասկանալի գնչուական լեզվով: Երբ Ստենգաչուն իր հետ կոպիտ է խոսել, Օլիվերն աշխատել է մեղմել դրությունը և չի թողել, որ Ստենգաչուն կոպիտ վերաբերվի իր հետ: Նա դա արել է լուրջ միջադեպերից խուսափելու համար, որպեսզի ինքը շարունակի գողություններ կատարելը:

Այդ երկու-երեք օրվա ընթացքում գումարներ գողացել են միայն Երևանում գտնվող բան-կոմատներից, Ստենգաչուն կեղծ քարտերով, ոչ հաճախ, փորձել է գումարներ հափշտակել բան-կոմատներից, սակայն արդյունքներն իրեն հայտնի չեն եղել: Հիմնականում նա միշտ կանգնած է եղել իր թիկունքում, հետևել է իրեն, հսկելով իր կողմից իրականացված բոլոր գործողությունները և ամեն օր խուզարկել է իրեն և իր անձնական իրերը:

Երբ ինքը և Կատալինն առանձին են քայլել, վերջինս իրեն զգուշացրել է, որ Ստենգաչու եղբայրները և Ռադուն՝ Օլիվերը, մեծ հավանականությամբ իրեն ոչինչ չեն վճարի: Կատալինն իրեն առաջարկել է կուտակել հափշտակված գումարները և ուղարկել ծնողներին: Հաջորդ օրն ինքը նորից հեռախոսով կապվել է Կատալինի հետ և, ցանկանալով վերջինիս հետ միասին մեկ-մեկ, խնդրել է օգնել անձնագիրն ստանալու հարցում, քանի որ այն եղել է Ստենգաչուի ձեռքին: Հաջորդ օրը Ստենգաչուն, որը հավաքել էր մեծ գումար հյուրանոցում, իրեն մենակ է ուղարկել հափշտակություններ կատարելու: Լսելով Ստենգաչուի և վերջիններիս ընկերների միջև խոսակցությունները, հասկացել է, որ նրանք չեն ցանկանում որևիցե գումար վճարել իրեն: Այդ պատճառով, լինելով մենակ, այդ օրվա գողոնի մի մասը թաքցրել է Ստենգաչուից և մոտավորապես 3000 եվրո «Վեսթերն Յունիոն» համակարգի միջոցով ուղարկել է ծնողներին Ռումինիա: Վե-րադառնալով հյուրանոց, Ստենգաչուին է հանձնել իր կողմից հափշտակած մնացած գումարը, վերջինս ստուգել է իրեն և հավաստիացել, որ ինքը գումար չի թաքցրել: Ցանկություն ունենալով դադարեցնել հանցավոր գործունեությունը և մեկնել Ռումինիա, ինքը, շրջելով քաղաքի կենտրոնում և նկատելով մի ավիագործակալություն, արագ մտել է ներս և Ստենգաչուի կեղծ քարտերով գողացված գումարներով գնել է Երևան-Բուխարեստ չվերթի ավիատոմս, օգտվելով այն առիթից, որ այդ անձնագիրն եղել է իր ձեռքին: Ընդհանրապես, քա-դաքում շրջելուց Կոռնելն անձնագիրը տվել է իրեն, որպեսզի հարկ եղած դեպքում՝ ստուգման ժամանակ ոստիկաններին կարողանա ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Երբ դուրս է եկել, Ստենգաչուն իրեն հարցրել է, թե որտեղ է եղել այդ ընթացքում, ինքը պատասխանել է, որ գնացել է զուգարան: Ինքն ավիատոմսը թաքցրել է ճամպրուկի մեջ, բայց երեկոյան Ստենգաչուն, զննելով իրեն, ճամպրուկները և հագուստը, գտել է այդ տոմսը և իրեն ստիպել է պատռել այն, սպառնալով, որ հակառակ դեպքում կօծեօի: Այդ պահին միջամտել է Օլիվերը և Ստենգաչուին խնդրել, որ իրեն չօծեօի այդ սխալի համար, ասելով, որ ինքն աշխատել է նրանց համար: Ինքն փորձել է համոզել Ստենգաչուին, որ նպատակ է ունեցել միմիայն մի քանի օրով բացակայել Հայաստանից և վերադառնալ: Ինքն իմացել է, որ այդ ավիատոմսի տվյալները մուտքագրվել են տեղեկատվական համակարգ և նույնիսկ առանց դրա կարող է մեկնել Երևանից, սակայն Կոռնելը վերցրել է իր անձնագիրը:

Հայաստան ժամանելու չորրորդ օրն ինքը սովորականի պես մենակ է հափշտակություններ կատարել, Ստենգաչուն հսկել է իրեն: Նույն օրը գնացել են «BMW Z-3»-ը փոխանակելու «Մերսեդես» ֆիրմայի արտադրության ավտոմեքենայով, քանի որ ոստիկանությունը կանգնեցրել էր իրենց, բացի դրանից «BMW Z-3»-մոդելի ավտոմեքենայում միայն երկու նստատեղ է եղել, իսկ «Մերսեդես»-ի մեջ եղել է 4 նստատեղ՝ Ռադուի, Ստենգաչուի և իր համար: Օլիվերի Հայաստան ժամանելու հաջորդ օրն իրենք «Մերսեդես» մականիշի ավտոմեքենայով մեկնել են Երևանից դուրս՝ դեպի Սևան քաղաք, որի մոտակայքում գտել են մի բանկոմատ: Ստենգաչուն իրենից մի քարտ է պահանջել, ասելով, որ առաջինը կգնա՝ Ռադուին գործը ցույց տալու: Ինքը մնացել է մեքենայի մեջ և նրանք միասին են մոտեցել բանկոմատին, երկուսն էլ գումար են հափշտակել: Հետո իրեն են ցուցում տվել մոտենալ բանկոմատին, ինքը

մի քանի գործարքով գումար է հա-փըշտակել, վերադարձել է մեքենայի մոտ, տվել է գումարը, որից հետո վերադարձել են Երևան, Օլիվերին թողել են հյուրանոցում և գնացել են «Էրեբունի» հյուրանոց: Ավելի ուշ ինքը նորից հանդիպել է Կատալինին, առանց Ստենգաչուին տեղյակ պահելու: Կատալինն ասել է, որ իր պես, գողոնի մի մասը թաքցրել է Մարիուս Լուպուից և «Վեսթերն Յու-նիոն» համակարգով ուղարկել է հարազատներին, իսկ մնացածը՝ Մարիուս Լուպուին, վերջինս էլ, բացահայտելով դա, խիստ զայրացել է և սկսել է նրան փնտրել: Կատալինն իրեն առաջարկել է միասին հեռանալ Հայաստանից, սակայն իր անձնագիրը Ստենգաչուի մոտ է եղել: Կատալինը խոստացել է իր համար գնել ավիատոմս, առաջարկել է իրեն հնարավորության դեպքում թաքուն Ստենգաչուից վերցնել իր անձնագիրը և փախչել: Միաժամանակ նա առաջարկել է իրեն Լոնդոն ուղևորվելուց առաջ մի որոշ գումար էլ հափշտակել և պահել Ստենգաչուից: Ինքը վերադարձել է «Կոնգրես» հյուրանոց, ուր արդեն տեղափոխվել էին բնակվելու Կոռնելի հետ, հյուրանոցային համարում լսել է Ստենգաչուի և Մարիուս Լուպուի հեռախոսագրույցը, որի ընթացքում Ստեն-գաչուն Լուպուին առաջարկել է հաջորդ օրը ժամանել Երևան և բռնել Կատալինին: Միաժամա-նակ Ստենգաչուն իրեն հանձնարարել է, որ հաջորդ օրը Կատալինին մի կերպ բերի հյուրանոց, որտեղ պլանավորել է հանձնել վերջինիս Մարիուս Լուպուին: Ինքն այդ մասին հայտնել է Կատալինին և ասել է, որ փախչի: Մինչև Մարիուս Լուպուի Երևան ժամանելը Կատալինը, իր իմա-նավով, կեղծ բանկային քարտերի մնացորդը հանձնել է Ստենգաչուին և Օլիվերին, ինքն այդ հանդիպմանը ներկա չի եղել: Ինքը լսել է Կատալինի և Ստենգաչուի միջև բջջային հեռախոսով զրույցը, նրանք խոսել են ռումիներեն լեզվով: Վերջիններս պայմանավորվել են հանդիպել՝ այդ քարտերը փոխանցելու համար: Իր հիշելով, Օլիվերն այդ հեռախոսագրույցին ներկա չի եղել, բայց իր իմանալով, Ստենգաչուն գնացել է Օլիվերի ետևից և նրանք միասին են գնացել ժամադ-րության վայր՝ քարտերը ստանալու:

Դրանից հետո ինքը, Ստենգաչուն և Օլիվերը գնացել են Երևանի օդանավակայան Մա-րիուս Լուպուին դիմավորելու նպատակով: Ստենգաչուն Մարիուս Լուպուին ուղեկցել է «Կոնգ-րես» հյուրանոց, որտեղ վերջինս տեղավորվել է առանձին համարում: Այդ ընթացքում Ստենգա-չուն և Օլիվերը Կատալինի կողմից Մարիուս Լուպուին թողնված քարտերը բերել են «Կոնգրես» հյուրանոց, թե որտեղից՝ ինքը չի իմացել, հանձնել են Մարիուս Լուպուին, դրանք տեղադրված են եղել սև գուլպայի մեջ: Ստենգաչուն իրեն հանձնարարել է, որ ինքը պետք է գողություններ կատարի նաև Մարիուս Լուպուի համար: Բայց ինքն ասել է, որ այլևս չի ցանկանում ոչ մեկի հետ համագործակցել և ցանկություն է հայտնել վերադառնալ տուն: Այդ ընթացքում Օլիվերն իրեն ասել է, որ Լուպուի և Ստենգաչուի հետ չաշխատելու դեպքում վերջիններս կծեծեն իրեն և խոստացել է օգնել: Նա Մարիուսից վերցրել է կեղծ քարտերի խմբաքանակ և իրենք սկսել են շրջել Երևանի բանկոմատներով, հափշտակելով որոշ գումարներ, հետո վերադարձել են հյուրա-նոց և Օլիվերը գնացել է օդանավակայան ընկերոջը՝ Դանիել Ֆեռառուին դիմավորելու: Վերջի-նըս, իր ենթադրությամբ, եկել էր Երևան Օլիվերի հրավերքով և Լոնդոնից բերել է բանկային կեղծ քարտերի խմբաքանակ՝ նրա և Օլիվերի համար: Ինքն այդ քարտերը չի տեսել, այդ ենթադրույ-թյունն արել է, մինչ այդ լսելով Ռադուի և Ստենգաչուի խոսակցությունն այն մասին, որ մի քանի օրից մեկը գալու է Հայաստան բանկոմատներից հափշտակություններ կատարելու համար: Այդ մասին ասել է Օլիվերը, նրանք անուն չեն տվել, բայց ինքն ենթադրել է, որ այդ անձնավորույթ-յունը Ֆեռառուն է:

Երբ Օլիվերը գնացել է օդանավակայան, ինքը, Ստենգաչուն և Լուպուն մնացել են հյու-րանոցում, հետո միասին գնացել են Երևան քաղաքում գտնվող բանկոմատներից գումարներ հափշտակելու: Մինչ այդ, երբ մենակ է մնացել Ստենգաչուի հետ իրենց հյուրանոցային համա-րում, վերջինս ասել է, որ ինքը Լուպուի համար հափշտակված գումարների մի մասը թաքուն հանձնի նրան, որի դիմաց խոստացել է լրացուցիչ վարձատրել 200-300 ԱՄՆ դոլարի չափով: Այ-նուհետև ավտոմեքենայով գնացել են քաղաք գողություն կատարելու, տարբեր բանկոմատներ

տեսնելուց նրանք կանգնեցրել են ավտոմեքենան և իրեն ուղարկել են դրա մոտ: Այդ ընթացքում Մարիուսի քարտերը և Ստենգաչուի քարտերն իր մոտ պահվել են տարբեր գրպաններում: Մա-րիուսի քարտերով հափշտակված գումարների մի մասն ինքն աննկատ դրել է Ստենգաչուի գու-մարների հետ: Մարիուս Լուպուի մոտ նրա քարտերի միջոցով կատարված անհաջող հափշտակությունները կատարված են հարուցել, նա ասել է, որ իրեն պետք է զննի յուրաքանչյուր գործողութ-յունից հետո: Ջննելով իրեն, որևէ թաքցված գումար չի գտել, որոշել է հափշտակված գումարով բավարարվել և վերադառնալ տուն: Նա մտածել է, որ Կատալինն այդ քարտերով արդեն ելքագ-րել է գումարներ և դրանք այլևս պիտանի չեն գումարներ հափշտակելու համար: Մարիուսն ասել է, որ երբ բռնի Կատալինին, նրա դեմքը ջարդելու է, որովհետև նրա բոլոր ծրագրերը խախտել է, նրան չի լսել, գումարները չի ուղարկել: Ավելի ուշ, երբ վերադարձել են հյուրանոց, Մարիուս Լու-պուսն, տեսնելով, որ նրան պատկանող կեղծ քարտերով չի կարողացել ստանալ ակնկալված գու-մարը, որոշել է հեռանալ Հայաստանից, առաջարկել է Ստենգաչուին վերցնել այդ քարտերը և դրանց համար վճարել ինչ-որ մի գումար: Փաստացի, Ստենգաչուն խաբել է հանցակցին՝ Մա-րիուս Լուպուին, մինչև վերջինիս մեկնելը, նրանք հյուրանոց են հրավիրել մի քանի թեթևաբարո աղջիկներ, մեծ քանակով օգտագործել են ակոհոլային խմիչքներ և որպես իր աշխատանքի վարձատրություն այդ աղջիկներից մեկին հանձնել են իրեն, առաջարկելով գվարձանալ նրա հետ:

Այդ օրերին Ստենգաչուն, հանձնելով իրեն ՀՀ դրամի տեսքով խոշոր գումար, ուղեկցել է դեպի Երևան քաղաքում գտնվող արտարժույթի փոխանակման կետ, հանձնարարելով այնտեղ ներկայացնել անձնագիրը և ՀՀ դրամը փոխանակել եվրոյով, իսկ ինքը դրսում սպասել է իրեն: Ստենգաչուի հանձնարարությամբ ինքը մեկ-երկու օրվա ընթացքում մի քանի անգամ կատարել է նույնանման գործարքներ արտարժույթի փոխանակման տարբեր կետերում, որի ընթացքում ՀՀ դրամի տեսքով գումարը փոխանակել է մոտավորապես 20.000 եվրոյով: Այդ գործողություն-ները կատարելու համար Ստենգաչուի հետ որևիցե նախնական պայմանավորվածություն չի ունեցել և վերջինս իրեն որևիցե գումար չի վճարել:

Դրանից հետո, երբ ինքը և Ստենգաչուն առանձին են մնացել հյուրանոցում, ինքը նրան հիշեցրել է, որ հետադարձ չվերթը հաջորդ օրն է: Ստենգաչուն իրեն առաջարկել է կամ հաջորդ օրը մեկնել առանց որևէ գումար ստանալու, կամ մի քանի օրով երկարացնել իրենց մեկնման ժամկետը, հափշտակել այլ գումարներ, որից հետո խոստացել է իրեն վճարել հասանելիք գու-մարը և թույլատրել մեկնել Հայաստանից: Տեսնելով եվրոյի տեսքով Ստենգաչուի սեյֆում պահ-վող գումարը, որն անձամբ էր հանձնել վերջինիս, ինքն ասել է, որ մտադիր է հետաձգել թռիչքը մեկ օրով: Ինքն ու Ստենգաչուն գնալով ավիագործակալություն, իրենց մեկնելու օրը հետաձգել են երկու օրով: Դրանից հետո Ստենգաչուի հանձնարարությամբ Օլիվերը և Ֆեռառուն մի ավ-տոմեքենայով, իսկ ինքն ու Ստենգաչուն մյուս ավտոմեքենայով ուղևորվել են Հայաստանի հա-րավային քաղաքներից մեկը: Այդ ընթացքում Ստենգաչուի հանձնարարությամբ ինքը մի բանկո-մատից գումար է հափշտակել է, հանձնել է նրան, որից հետո վերադարձել են Երևան: Ինքը և Ստենգաչուն իրենց վարձակալված ավտոմեքենայով հաճախակի շրջել են Երևանով և կանգնել են բանկոմատների առջև, իսկ Օլիվերը և Դանիելն մյուս ավտոմեքենայով ուղեկցել են իրենց: Երբ ինքը Ստենգաչուի հանձնարարությամբ մոտեցել է բանկոմատին և կատարել է գողութ-յուններ, ավարտից հետո նույն բանկոմատին է մոտեցել Դանիելը և գումարներ է հափշտակել, կամ հակառակը: Հափշտակված գումարներն ինքը միշտ տվել է Ստենգաչուին, իսկ թե ու՞մ է դրանք տվել Ֆեռառուն՝ չի իմացել:

Այնուհետև Ստենգաչուն իրեն և Դանիելին հանձնելով կեղծ բանկային քարտերի մի խմբ-բաքանակ, հանձնարարել է շրջել Երևանում, գտնել նոր բանկոմատներ և հափշտակել գումար-ներ: Ինքը և Ֆեռառուն ըստ այդ ցուցումի մեկ-երկու օրվա ընթացքում կատարել են մի քանի գո-ղություններ: Ինքը գրեթե տեղեկություններ չի ունեցել Դանիելի մասին, որովհետև վերջինս ժա-մանել է իր մեկնելուց երկու օր առաջ, նույնիսկ չի

իմացել, թե նա Օլիվերի և Ստենզաչուի ըն-կե՞րն է եղել, թե իր նման աշխատել է ճնշման ներքո: Իր իմանալով, վերջինս աշխատել է սկզբից Օլիվերի, իսկ հետագայում նաև Ստենզաչուի համար:

Ֆեռառուի հետ գողություններ կատարելուց հետո վերադառնալով հյուրանոց, ինքը հանձ-նել է գողոնը Ստենզաչուին և հայտնել է Լոնդոն վերադառնալու ցանկության մասին, նշելով, որ այլևս չի ցանկանում գողությամբ զբաղվել: Հաջորդ օրն ակնկալած 600-700 ԱՄՆ դոլարի փո-խարեն Ստենզաչուն իրեն տվել է 200 ԱՄՆ դոլար և ինքն Երևանում կատարել է որոշ գնումներ թռիչքից առաջ:

Այդ օրը Ստենզաչուն, Օլիվերը և Ֆեռառուն իրեն թողնելով հյուրանոցում, գնացել են Երևան քաղաքի փոխանակման կետերում դրամն այլ արտարժույթների փոխանակելու համար: Թե նրանցից ո՞վ է փոխանակել գումարը տարադրամով, ինքը չի իմացել, նրանց հետ չի գնացել, այդ ընթացքում պատրաստվել է մեկնելուն, լոգանք է ընդունել: Ստենզաչուն, վերադառնալով հյուրանոց, հայտնել է, որ թեև չէր պատրաստվում իրեն որևէ գումար վճարել, բայց խոսելով Լոն-դոնում գտնվող եղբոր՝ Բոդոյի հետ, նրա հանձնարարությամբ իրեն տալու է 1000 եվրո վերջինիս կողմից և 1000 եվրո էլ անձամբ՝ իր կատարած աշխատանքի դիմաց: Նա հանձնարարել է չժա-խսել այդ փողը և սպասել, մինչև նա կվերադառնա Լոնդոն և այդ գումարի վրա ավելացնելով հավելյալ գումար, իր համար կգնի մի ավտոմեքենա, դրա արժեքի մասին չի իշխատակել: Այդ 2000 եվրոն Ստենզաչուն տվել է միայն այն պայմանով, որ ինքը Լոնդոնում բնակվի նրա եղբոր՝ Բոդոյի հետ և սպասի նրա վերադարձին: Ինքը գնացել է օդանավակայան, նստել է ինքնաթիռ և ուղևորվել է Լոնդոն, զանգահարել է Բոդոյին և նրան է հայտնել եղբոր տված հանձնարարության մասին: Բոդոն իրեն տվել է տան հասցեն և երբ ինքը հասել է վերջինիս բնակության վայրը, կապնվել է եղբոր՝ Ստենզաչուի հետ: Բոդոն այդ օրն իրեն ոչինչ չի ասել եղբոր հետ խոսակցու-թյան մանրամասնությունների մասին, միայն հաջորդ օրն իրենց պահանջել է Ստենզաչուի տրո-ված 2000 եվրոն և հայտնել է, որ վերջինս Հայաստանում իրավապահ մարմինների հետ ինչ-որ պրոբլեմներ ունի և այդ գումարը հարկավոր է, որպեսզի մի կերպ կարողանա հեռանալ Հայաստանից: Դրանից մի քանի օր անց Բոդոն իրեն ասել է, որ նշված գումարը նա ուղարկել է Հայաստան՝ Ստենզաչուի համար ներգրավված պաշտպանի ծախսերը վճարելու նպատակով: Երբ Բոդոն իրենց պահանջել է այդ գումարը, ինքը հասկացել է, որ նրանք՝ Բոդոն, Ստենզաչուն և նրանց հանցակից ընկերները բոլորն էլ խաբել են իրեն և ինքը սխալվել է, հավատալով նրանց:

Երբ ինքը գտնվել է Բոդոյի լոնդոնյան բնակարանում, վերջինս հայտնել է, որ շուտով «Քիշտրույա» անունով մի անձնավորություն է գալու իր հետ հանդիպման: Բոդոն չի ցանկացել բացահայտել իրենց բնակության վայրը, իրեն ուղեկցել է նախապես պայմանավորված մի վայր, ուր եկել է «Քիշտրույան»: Վերջինս ասել է, որ ուզում է պարզել, թե ինչ կատարվել Հայաստա-նում Կատալինի հետ և խնդրել է իրեն պատմել մանրամասնությունները: Ինքն ասել է, որ ոչինչ չգիտի և չի ցանկանում այդ կապակցությամբ ոչինչ հայտնել: «Քիշտրույա»-ն հայտնել է, որ նրա ունեցած տեղեկությունների համաձայն Ստենզաչուն որևիցե դժվարություններ չի ունեցել Հայաստանում և հաջորդ օրը հափշտակված գումարներով պիտի վերադառնա Լոնդոն: «Քիշտ-րույա»-ն հայտնել է, որ տեղյակ է այն մասին, որ ինքը որևիցե գումար չի ստացել կատարած աշխատանքի դիմաց և առաջարկել է նրա հետ համագործակցել: Մանրամասնելով առաջարկը, ասել է, որ պատրաստ է հանձնել իրեն բանկային կեղծ քարտերի խմբաքանակ և Կալու անունով մի այլ ռումինացու հետ ուղարկել Հայաստան՝ այնտեղ գումարներ հափշտակելու նպատակով և խոստացել է գողոնից իրեն հատկացնել մի որոշ փայաբաժին, թե կոնկրետ ինչքան, իրենք չենք պայմանավորվել: Ինքը Կալուին երբեք չի տեսել, ծանոթ չեն եղել, սակայն համաձայնվել է մեկնել Հայաստան, մույն օրը «Քիշտրույա»-ն գնել է Լոնդոն-Երևան չվերթի ավիատոմս և այն հանձնելով իրեն, ասել է, որ մեկնելու է 3-4 օրից, հանձնարարել է պատրաստվել և սպասել նրա հեռախոսազանգին՝ Հայաստանում կատարվելիք գործողությունների կապակցությամբ մանրա-մասն ցուցումներ հաղորդելու համար: Մի քանի ժամ անց ինքը գնացել է

տուն և Բողոն, ստու-գելով իրեն, գտել է Լոնդոն-Երևան չվերթի տոմսը և իրեն արգելել է մեկնել Երևան, որովհետև, ըստ նրա տեղեկությունների, եղբայրը Հայաստանում ունեցել է լուրջ պրոբլեմներ իրավապահ մարմինների հետ: Դրանից հետո ինքը, դիմելով ավիագործակալություն, վերադարձրել է ավիա-տոմսը, ստացել է գումարի մի մասը և որոշել է այլևս Երևան չմեկնել: Միաժամանակ լքել է Բո-դոյի բնակարանը և խզել կապը վերջինիս հետ: Դրանից հետո Մեծ Բրիտանիայում մնացել է մոտավորապես երեք շաբաթ, Բոդոյի և նրա ընկերների հետ չի հաղորդակցվել և վերադարձել է Ռումինիա:

Ադի Իոան Բլազայի լրացուցիչ նախաքննական ցուցմունքի համաձայն՝ 2008թ. ամռանը ինքը Լոնդոն քաղաքում սենյակ է վարձակալել Միհայ Ֆաուրի մի քանի սենյականոց տանը: Երկու կամ երեք շաբաթ անց այդ տուն է եկել Կոռնել Ստենգաչուն և վարձակալել մալ այլ սենյակ: Մի քանի օրից ծանոթացել են և Կոռնել Ստենգաչուն առաջարկել է լինել իր վարորդը: Ինքն ասել է, որ աշխատելու պատճառով մշտական վարորդ լինել չի կարող, սակայն հանգըստ-յան օրերին կարող է վարել նրա ավտոմեքենան: Երկուշաբթուց մինչև ուրբաթ ինքն աշխատել է որպես սալիկապատող, իսկ հանգստյան օրերին ազատ է եղել: Մի քանի օր անց Ստենգաչուն տուն է բերել «Քիշտրուլյա» անունով անծից վերցված պլաստմասե սարք՝ էլեկտրոնային պարու-նակությամբ: Միհայ Ֆաուրի հետ կանչել և իրեն ցույց են տվել այդ սարքը, հարցրել են, թե արդ-յոք գիտի, թե դա ինչ է: Ինքը բացասական պատասխան է տվել և նրանք ասել են, որ այդ պլաստ-մասե սարքը բավականին թանկ արժե և օգտագործվում է փող աշխատելու նպատակով: Մի քանի օր անց Կոռնելն իրեն տվել է մի հասցե և խնդրել է այնտեղ տանել իրեն: Ինքը վերջինիս «Ֆոլքսվագեն պասատ» մոդելի ավտոմեքենայով Ստենգաչուին և Միհայ Ֆաուրին տարել է պա-հանջված վայր: Կոռնել Ստենգաչուն և Միհայ Ֆաուրը վերցրել են այդ պլաստմասե սարքերը, գնացել և ամրացրել են մի բանկոմատի վրա, հետ ասել են, որ դրանց հետևից պետք է վերա-դառնան երեկոյան: Այդ ժամանակահատվածում շրջել են քաղաքով և ինքը նրանցից հարցրել է, թե ինչպե՞ս են գումար հանելու այդ սարքն ամրացնելուց հետո, քանի որ դրա մասին ոչինչ չի իմացել: Նրանք ասել են, որ այդքան հարցեր չտա և մեքենան վարի: Վերադառնալուց նրանք հանել են այդ սարքերը բանկոմատից և միասին գնացել են տուն: Դրանից հետո նրանք երկուսով գնացել են այդ սարքերի տիրոջ հետ հանդիպման, ավելի ուշ ինքն իմացել է, որ վերջինիս անունը «Քիշտրուլյա» է: Երբ առանց այդ սարքերի վերադարձել են տուն, նրանց խոսակցությունից հաս-կացել է, որ դրանք չեն աշխատել և պետք է կրկին փորձել: Մի քանի օր հետո նույն տուն տեղա-փոխվել է ապրելու Կոռնել Ստենգաչուի եղբայրը՝ Բողոն: Մեկ կամ երկու շաբաթ անց Կոռնել Ստենգաչուն Միհայ Ֆաուրի հետ նորից բերել են այդ սարքերը և ցուցում են տվել ավտոմեքե-նայով նրանց նշած հասցեով տանել: Երբ տեղ են հասել, նրանք կրկին այդ սարքերն ամրացրել են բանկոմատին: Վերադարձել են տուն, հետո երկուսով նորից գնացել են արդյունքները տեսնելու, իսկ վերադառնալուց ասել են, որ ինչ-որ խնդիրների պատճառով այդ սարքը չի աշխատել: Ինքն ասել է, որ դա իր խնդիրը չէ, քանի որ ինքը տարել է նրանց ցանկացած վայրը, իրեն տվել են մի 20-30 ֆունտ ստերլինգ 2-3 շաբաթվա համար: Ըստ նրանց ցանկության վարել է այդ ավտո-մեքենան, բայց միայն աշխատանքից ազատ լինելու ժամանակ: Մի կիրակի Կոռնելի եղբորը՝ Բոյին ավտոմեքենայով տարել է քաղաք, որտեղ ինքը 100-120 եվրոյով «Ղուլչե Գաբանա» ֆիր-մայի արտադրության ժամացույց է գնել և տուն են վերադարձել մի 2-3 ժամից: Տանը Ստենգա-չուն եկել է իր սենյակ և ցանկացել է տեսնել ժամացույցը, պահանջել է այն տալ իրեն: Ինքը հրա-ժարվել է, այդ ժամանակ Կոռնելն իրեն մի քանի անգամ հարվածել է և խլել է ժամացույցը: Միհայ Ֆաուրն եկել է իր սենյակ ու ասել է Ստենգաչուին, որ իրեն հանգիստ թողնի ու չծեծի, որ ինքը հանկարծ ուստիկանություն չկանչի, քանի որ տանը բազմաթիվ ապօրինի առարկաներ են եղել, ինչի մասին ինքը ոչինչ չի իմացել: Այդ ժամանակ Ստենգաչուն և Ֆաուրը սկսել են վիճա-բանել, զործը համարյա հասել է ծեծկռտուկի, ինքը հասկացել է, որ նրանք ուզել են կիսել ինչ-որ քարտեր կամ դրանց տեղեկությունները: Այդ ժամանակ է առաջին անգամ է լսել, որ գբաղվել են բանկային քարտերով: Ինքը չի տեսել, բայց իմացել է, որ

նրանք կիսել են այդ քարտերն ու դրանց տեղեկությունները, և Միհայ Ֆաուրը տնից հեռացել է:

Միհայ Ֆաուրի գնալուց անմիջապես հետո Ստենգաչուն իրեն ասել է, որ դա այլևս չի կրկնվի, որ ամեն ինչ նորմալ է լինելու, պետք չէ ոստիկանություն կանչել: Այնուհետև, ասել է, որ մեքենայով իրեն տանի Լոնդոնի կենտրոն, երբ տեղ են հասել, Կոռնել Ստենգաչուն հանդիպել է մի մարդու հետ: Որոշ ժամանակ հետո՝ արդեն Հայաստանում ինքն իմացել է այդ մարդու անունը՝ Մարիուս Լուպու: Ստենգաչուն խոսել է Մարիուս Լուպուի հետ կես ժամից մի ժամի չափով, վեր-ջինս նրան հայտնել է, որ այդ քարտերը հնարավոր է օգտագործել Հայաստանում: Այդ տեղեկատվության համար, իր իմանալով, Ստենգաչուն Մարիուս Լուպուին տվել է փող կամ քարտեր: Հետո Կոռնելն մոտեցել է իրեն, ցույց է տվել մոտ 200 մետր հեռավորության վրա գտնվող Հայաստանի դեսպանատունը և ասել է, որ եթե նրա հետ գնա Հայաստան, ապա կտեսնի, թե ինչ է կատարվել, որ նա Հայաստանից պետք է փողեր վերցնի: Ինքը ստույգ չի իմացել, թե ումի՞ց և ինչպե՞ս: Ինքը համաձայնվել է, ասել է, որ կմտածի, Ստենգաչուն ասել է, որ պետք է շտապ պա-տասխանել, որ դա գեղեցիկ երկիր է:

Առանց որևիցե մանրամասնություններ իմանալու ինքը հա-մաձայնվել է, գնացել են դեսպանատուն, ստացել են վիզա, Կոռնելն ասել է, որ կհոգա ձանա-պարհածախսի համար: Հայաստան գալուց մի օր ամառ ցանկանալով խոսել Կոռնելի հետ, մետել է նրա սենյակ և տեսել, որ նա եղբոր հետ ինչ-որ քարտ գրելու սարքի և համակարգչի միջոցով քարտեր են պատրաստում: Դա տեսել է մի քանի վարկյան, իրեն ասել են, որ դուրս գա սենյակից: Ինքը դուրս է եկել ու պատրաստել է ձամպրուկը:

Հայաստան գալուց ամառ զիշերը, Կոռնելը բոլոր քարտերն ամառն իրեն տեղյակ պահելու տեղադրել է իր ձամպրուկի մեջ: Գնացել են օդանավակայան, ինքը չի իմացել ձամպրուկի մեջ պահված քարտերի մասին: Լոնդոնից մեկնել են Հայաստան, Երևանի օդանավակայանում Կոռնելն իրեն ասել է, որ ինքնուրույն գնա և ստանա ուղեբեռը և ձամպրուկը վերցնելուց հետո անմիջապես դուրս գա օդանավակայանից: Ինքը հետաքրքրվել է պատճառով, հասկացել է, որ ինչ-որ բան նորմալ չէ: Կոռնելն ասել է, որ ինքը հետո կտեսնի, թե ի՞նչ է դրվել ձամպրուկի մեջ, որ չվախենա: Երևանի օդանավակայանից վերցրել են տաքսի և Կոռնելը խնդրել է վարորդին իրենց տանել մի հյուրանոց: Հասել են «Եվ-րոպա» հյուրանոց, այնտեղ ինքը ձամպրուկը տվել է Կոռնելին, բացելուց տեսել է գուլպայի մեջ թաքցված բազմաթիվ քարտեր: Ինքը հարցրել է, թե ինչու՞ են դրանք դրվել իր ձամպրուկի մեջ, նա ասել է, որ լռի և այդքան հարցեր չտա, կատարի նրա ցուցումները և ոչ մի խնդիր չի ունենա: Ստենգաչուն վերցրել է մոտ 10 հատ քարտ և առաջարկել է գնալ քաղաք: Հասել են Երևանի կենտրոն, նա ասել է, որ բանկոմատ նկատելուց իրեն քարտեր կտա և ինքը պետք է բանկոմատ-տից գումար հանի: Ինքն ասել է, որ ցանկություն չունի դրանով զբաղվելու, սակայն Կոռնելը սկսել է սպառնալ իրեն և Ռումինիայում գտնվող հարազատներին՝ մորը և 7 տարեկան քրոջը, ասել է, որ եթե չգնա գումարներ հանելու, ապա մեծ պրոբլեմներ կունենա: Ինքը վերցրել է քար-տերը, մոտեցել է բանկոմատին և կատարել է գործարք: Ստենգաչուն գտնվել է իրենից 10 մետր հեռավորության վրա, երբ վերջացնելուց մոտեցել է նրան, Կոռնելն ասել է, որ քարտերը և գումար-ը հանձնի և գնա իր հետևից: Վերադարձել են հյուրանոց, այդ ժամանակ կրկին սպառնացել է իրեն, այլ քարտեր է վերցրել և սկսել է բացատրել, թե ի՞նչ է պետք է անել: Ամեն քարտի վրա զրո-ված է եղել PIN-ծածկագիրը, նա բացատրել է մանրամասնությունները, ասել է, որ քարտը պետք է մոցնել բանկոմատի մեջ, իսկ բանկոմատից փողը ստանալուց հետո այն պետք է ծալել և ա-րանքը դնել օգտագործված քարտը՝ հաշվարկ կատարելու համար: Ինքն այլընտրանք չի ունեցել, շարունակել է գումարներ հանել Կոռնելի, վերջացնելուց ասել է, որ ցանկություն չունի դրանով զբաղվելու և ուզում է վերադառնալ: Նա ասել է, որ հանգիստ լինի, որ ուշադիր է լինելու իր հան-դեպ և ոչինչ չի պատահի: Ինքն կրկին հրաժարվել է այդ գործից, Կոռնելն ասել է, որ եթե ցանկու-թյուն ունի Ռումինիա վերադառնալու, ապա պետք է դա անի, նորից սպառնացել է մորը և քրոջը, նշելով, որ նրանք Ռումինիայում պրոբլեմներ կունենան, իսկ ինքն այստեղ: Կոռնելն ասել է, որ եթե փախչելու դեպքում իրեն յուրաքանչյուր վայրում կգտնի, որ իր վրա արդեն

գումար է ծախսել: Իր ընտանիքի համար վախճենալով, ստիպված համաձայնվել է, իմանալով, որ Կոռնելը վը-տանգավոր գնչու է: Ուստի կանոնություն չի դիմել, քանի որ Կոռնելն ասել է, որ նրան ավելի շուտ կհավատան, որովհետև արդեն մի օր գողություն է արել, իսկ նրա ձեռքով ոչինչ չի կատարվել:

Հաջորդ օրն ինքը լսել է նրա և Լոնդոնում գտնվող ինչ-որ մարդու միջև հեռախոսազրույցը: Այդ անձնավորությունն եղել է «Ռադուն» Օլիվեր Ռադուկու Մարիանը, որի հետ ինքը ծանոթ չի եղել և որին Ստենգաչուն կանչել է Հայաստան: Հաջորդ օրը Օլիվերն ժամանել է Հայաստան, իրենց գալուց երկու օր անց: Մինչև Օլիվերի ժամանելը Ստենգաչուն վարձակալել է մի ուրիշ սենյակ «Էրեբունի» հյուրանոցում, իսկ Օլիվերը Հայաստան ժամանելուց հետո տեղավորվել է «Եվ-րոպա» հյուրանոցում: Միասին Ստենգաչուի հետ գնացել են վարձակալելու մի ավտոմեքենա, վարձակալել են «ԲՄՎ Z3» մոդելի ավտոմեքենա: Այդ ավտոմեքենայով շրջել են քաղաքով բան-կոմատներ գտնելու նպատակով, որպեսզի ինքը գումարներ հանի Ստենգաչուի համար: Կոռնելը գնչուական լեզվով խոսացել է ինչ-որ մեկի հետ Լոնդոն քաղաքում, իր կարծիքով, Մարիուս Լուպուի հետ և վերցրել է Կատալին անունով մի անձնավորության հեռախոսահամարը: Կատալինն իրենցից առաջ է ժամանել Հայաստան: Կոռնելը զանգահարել է Կատալինին, պայմանավորվել են հանդիպել, որպեսզի վերջինս տեղեկություններ տրամադրի բանկոմատների տեղակայման մասին: Իր հասկանալով, Կատալինն աշխատել է Մարիուս Լուպուի համար, իրենք հանդիպել են Կատալինի հետ, Կոռնել Ստենգաչուն ասել է վերջինիս, որ իր հետ առաջ անցնելով ցույց տա բանկոմատները, իսկ նա հետևից է գալու: Կոռնելն իրեն տվել է քարտեր և ցուցում է տվել գու-մարներ հանել մատնացույց արած բանկոմատներից: Երբ ինքը բանկոմատից գումար է հանել, Կոռնելը շատ մոտ է կանգնել, որ հանկարծ չկարողանա փախչել, գործարքը վերջացնելուց մո-տեցել և վերցրել է գումարը և քարտերը: Կոռնելն իրենց համար գնել է հայկանան Սիմ-քարտեր և ցուցում է տվել գործարքը վերջացնելուց զանգահարել նրան և հայտնել գործարքի արդյունքների մասին, որից հետո ինքը հեռախոսով հայտնել է, թե ինքը ո՞ր ուղղությամբ գնա գումարը փոխան-ցելու համար: Երբ վերադարձել են հյուրանոց, սկսել է իրեն ստուգել պարզելու համար, թե գու-մար գողացել է նրանից, թե ոչ: Նա պահանջել է հագուստը հանել, անգամ պայուսակն է ստու-գել: Այդ ժամանակ ինքը հասկացել է, որ ինչ-որ բան լավ չէ: Կոռնելն իր անձնագիրն առաջին իսկ օրն է վերցրել, բայց քանի որ պետավտոտեսուչները մի քանի անգամ կանգնեցրել են իրենց ավտոմեքենան, նա վերադարձրել է իր անձնագիրը: Ինքն ասել է, որ այլևս ցանկություն չունի այդպես աշխատելու և հայտնել է վերադառնալու ցանկության մասին, սակայն Կոռնելն ասել է, որ մինչև բոլոր քարտերը չսպառվեն, մինչև իր առաքելությունը չվերջացնի՝ չի վերադառնա: Նա սպառնացել է, որ իրեն կվնասի, որ մարդ կուղարկի Ռումինիա՝ մորը կամ քրոջը վնասելու, ինքը դրանից շատ է վախեցել: Երբ Օլիվերն եկել է, ապա ասել է, որ հանգիստ լինի, որ ոչինչ չի պա-տահի և նա իրեն կօգնի, կատարի Կոռնելի ցուցումները: Ինքը չի իմացել, թե նրանք ի՞նչ հարա-բերությունների մեջ են եղել Ստենգաչուի հետ, տեղյակ է եղել, որ ընկերներ են: Նույն կամ հա-ջորդ օրն Երևանից ավտոմեքենայով՝ քարտեզի օգնությամբ ուղևորվել են դեպի Սևան, որտեղ Կոռնելն իրեն տվել է քարտեր և ցուցում է տվել մոտենալ բանկոմատին, գումար հանել և վերա-դառնալ փողերով հանդերձ: Գործարքը վերջացնելուց հետո մոտեցել է նրան, տվել է գումարը, Կոռնելը Օլիվերի հետ նույնպես գնացել են գումար հանելու: Վերադարձել են Երևան, տարբեր բանկոմատների մոտ կանգնելուց Կոռնելն իրեն ստիպել է գումարներ հանել:

Երբ վերադարձել են հյուրանոց, նա իրեն ամբողջությամբ ստուգել և հարցրել է, թե իր մոտ գումար ունի՞, ինքը բացասական է պատասխանել: Իրականում իր հետ Մեծ Բրիտանիայից բե-րել է մոտ 3000 եվրո, մտածելով, որ մեկնել է ձամփորդելու, բայց տեսնելով իր մոտ գումար փնտրելու Կոռնելի փորձերը, ինքը հաջորդ օրը մենակ գնացել է մոտակա «Վեսթերն Յունիոն» համակարգի կետ, զանգահարել է մորը և իր անձնական գումարից 1000 ԱՄՆ դոլարը փոխանցել է վերջինիս Ռումինիա: Սկզբից ուզեցել է ամբողջ գումարն ուղարկել, սակայն հետո

որոշել է մի մասը պահել, ցանկանալով մի կերպ ավիատոմս գնել և մեկնել Հայաստանից: Մտել է մի ավիա-գործակալություն, մոտ 200 եվրոյով գնել է Երևան-Բուխարեստ չվերթի ավիատոմս՝ Ռումինիա փախչելու համար: Տոմսը գնելուց հետո ուղարկել է նաև իրեն պատկանող մնացած գումարը, քանի որ Կոռնել Ստենգաչուն իրեն անընդհատ ստուգել է և ինքը վախեցել է, որ նա այն կգտնի և կվերցնի: Ավիատոմսը գնելու հաջորդ օրը Կոռնել Ստենգաչուն ստուգել է իր հազուստը և ճամպուրկը և դրա մեջ գտել է ավիատոմսը: Օլիվերն այդ ժամանակ իրենց մոտ է եղել, Կոռնելը գտել և պատռել է ավիատոմսը, հետո ուզել է իրեն ծեծել, այդ ժամանակ խառնվել է Օլիվերը, բաժա-նել է իրենց և համոզել է իրեն չգնալ Հայաստանից: Ինքն խոստացել է մնալ, Կոռնելն իրենից նո-րից վերցրել է անձնագիրը և ասել է, որ այն երբեք չի վերադարձնի, քանի որ ինքը փորձել է փախչել: Տեսնելով, որ այլևս ոչինչ անել չի կարող, ստիպված շարունակել է աշխատել Կոռնելի համար:

Կոռնելի սպառնալիքները կրկնվել են ամեն օր: «Էրեբունի» հյուրանոցից տեղափոխվել են «Կոնգրես» հյուրանոց: Օգոստոսի 25-ին Հայաստան է ժամանել Ղանիել Ֆեռառուն և իր ենթադրելով, ճամպուրկի մեջ բերել է քարտերի խմբաքանակ նրա և Օլիվերի համար: Իր կարծիքով, Ղանիելին Հայաստան է հրավիրել Օլիվերը, քանի որ նա բնակվել է վերջինիս հյուրանոցային համարում, սակայն որևիցե պայմանավորվածություն հեռախոսով այդ մասին չի լսել: Գրեթե միաժամանակ Հայաստան է ժամանել նաև Մարիուս Լուպուն: Վերջինիս գալուց առաջ Օլիվերը և Ստենգաչուն հանդիպել են Կատալինի հետ և նրանից վերցրել են բոլոր քարտերը, քանի որ Հայաստան էր ժամանելու Մարիուս Լուպուն: Ինքն այդ հանդիպմանը չի մասնակցել: Իր իմա-նավով, Կատալինը Մարիուս Լուպունին ամբողջ գողոնը չէր ուղարկել և վախենում էր հանդիպել Կոռնելի և Օլիվերի հետ, սակայն հեռախոսագրույցի ընթացքում Ստենգաչուն Կատալինին վրս-տահեցրել է, որ Մարիուս Լուպունի հետ կապված նրան ոչինչ չի անի, քանի որ վերջինիս հետ նույնպես պրոբլեմներ ունի: Ղրանից հետո Կոռնելը և Օլիվերը հանդիպել են Կատալինի հետ և քարտերը վերցրել, որից հետո վերջինս փախել է Հայաստանից, վախենալով, որ կարող է բռնվել Մարիուս Լուպունի կողմից: Մարիուսի քարտերը սկզբից տարել են Օլիվերի մոտ «Եվրոպա» հյուրանոց, որտեղ նա բնակվել է Ղանիել Ֆլորին Ֆեռառունի հետ:

Մարիուս Լուպուն ժամանել է «Կոնգրես» հյուրանոց: Ինքը բնակվել է Կոռնել Ստենգաչունի հետ նույն սենյակում, իսկ Մարիուսն տեղավորվել է առանձին սենյակում, նույն օրը Կոռնելը և Օլիվերը «Եվրոպա» հյուրանոցից քարտերը բերել են և հանձնել են Մարիուսին: Ինքը դրանք այդ ժամանակ է տեսել, տեղադրված են եղել սև գույնի գուլպայի մեջ, այդ քարտերը մնացածի հետ դրել են սեյֆի մեջ, բայց առանձին: Այդ ընթացքում մի օր ինքն ու Կոռնել Ստենգաչուն գնացել են քաղաք, տարադրամի փո-խանակման կետի առջև նա կանգնեցրել է ավտոմեքենան, իրեն տվել է ՀՀ դրամ և ասել է, որ մտնի ներս և դրանը փոխանակի եվրոյով՝ նշելով, որ սպասելու է դիմացը: Ինքը վախեցել է, սակայն չկարողանալով ոչինչ անել, մտել և դրամով գնել է մի քանի հազար եվրո, ստույգ գու-մարը չի տպավորվել իր հիշողության մեջ, քանի որ նույն կետ մի քանի անգամ է մտել: Գումարը փոխելուց հետո Կոռնելն իրեն տարել է «Վեսթերն Յունիոն» համակարգի մի կետի մոտ, դրա դիմաց տվել է 1000 ԱՄՆ դոլար և ցուցում է տվել այդ գումարն ուղարկել նրա կնոջը, տվել է ստացողի տվյալները՝ Կորինա Ղաբիժա: Ինքը հարցրել է, թե ինչպե՞ս դա անի, Ստենգաչուն ա-սել է, որ հարցեր չտա և կատարի պահանջը:

Ստենգաչունի քարտերի օգտագործման արդյունքում «Կոնգրես» հյուրանոցի իրենց հա-մարի սեյֆում արդեն բավականին գումար է հավաքվել, բայց Կոռնելն ասել է, որ իր աշխատանքը դեռ չի վերջացել, պետք է Մարիուս Լուպունին պատկանող քարտերով էլ գողություն անել: Իր և Մարիուս Լուպունի միջև որևիցե պայմանավորվածություն չի եղել, վերջինիս անձամբ չի ձանաչել, այդ ժամանակ է առաջին անգամ հանդիպել նրա հետ: Նա Կոռնել Ստենգաչունի ընկեր է եղել, երկուսով են գրուցել քարտերով փող գողանալու մասին: Թե ի՞նչ պայմանավորվածություն են նրանք ունեցել, ինքը չի իմացել, բայց «Կոնգրես» հյուրանոցի սենյակում իրեն մոտեցել է Կոռնել Ստենգաչուն և

պահանջել է, որ Մարիուս Լուպուի քարտերով գումար հափշտակի: Ինքն սկզբից հրաժարվել է, հայտնել է տուն վերադառնալու ցանկության մասին, այդ ժամանակ Կոռնելը հարձակվել և սկսել է իրեն ծեծել ոտքերով և ձեռքերով, ասելով, որ հրաժարվելու դեպքում պորբլեմներ է ունենալու Ռումինիայում, սպառնացել է իր մորը և քրոջը: Վախենալով նրանից, ինքը ստիպված համաձայնվել է: Երբ իրենք երկուսով են եղել իրենց հյուրանոցային սենյակում, Կոռնելն ցուցում է տվել Մարիուսի քարտերով հափշտակված գումարների խոշոր մասն աննկատ թաքցնել և դնել նրա քարտերով հափշտակված գումարների հետ: Դրա համար իրեն փոխանցել է մի փոքր պայուսակ և ցուցում է տվել նրա և Մարիուսի քարտերը պահել տարբեր բաժիններում: Բացի դրանից, Կոռնելն ունեցել է քարտեր, որոնք միջոցով արդեն գումար գողանալ հնարավոր չի եղել: Ստենզաչուն ցուցում է տվել դրանք կրկին փորձարկել և փող ստանալու դեպքում դնել նրա բաժնի մեջ, իսկ անհաջող փորձի դեպքում դնել Մարիուսի քարտերի հետ: Վերջինիս հարցին, թե ինչու նրա քարտերով գումարներ չի հաջողվել ելքագրել, Կոռնելը ցուցում է տվել պատասխանել, որ Կատալինն արդեն ամբողջ գումարը հանել է: Ինքն ասել է, որ չի կարող դա անել, բայց Կոռնելը պատասխանել է, որ հրաժարվելու դեպքում ավելի շատ ծեծ է ստանալու, նա կա-րող է Մարիուսին ասել, որ ինքը խաբել է վերջինիս: Երբ ինքը հետաքրքրվել է այդ վարքագծի պատճառներով, Կոռնելն ասել է, որ դեմքի սպին Մարիուսն է խողել ավելի փոքր գումարի համար և առաջարկել է պատկերացնել, թե վերջինս ի՞նչ կարող է անել, եթե իմանա, որ ինքը նրան խաբել է: Նա կատարել է այդ ցուցումները, Մարիուս Լուպուն տեսնելով, որ նրա քարտերով գումար չի հաջողվել ելքագրել, իրեն հարցրել է, թե ինչու՞ դրանք չեն գործել: Ինքը պատասխանել է, որ չգիտի: Ի վերջո նա որոշել է գնալ Հայաստանից և Կոռնել Ստենզաչուն որոշ գումար է վճարել այդ քարտերի դիմաց, դրա մասին նրանք պայմանավորվել են գնչուական լեզվով, իր ենթադրելով, Կոռնելը Մարիուսին տվել է 10-15 հազար եվրո: Երբ վերադարձել են «Կոնգրես» հյու-րանոց, Մարիուս Լուպուն ասել է, որ իրեն գումար վճարել չի կարող, որովհետև քարտերով փող ստանալ չի հաջողվել: Քանի որ Մարիուսի քարտերը «լավը» չեն եղել, իրեն ասել են, որ Կատալինին պետք է բռնել: Ինքն ասել է, որ վերջինիս հեռախոսը չի պատասխանում, երկի գնացել է: Այդ ժամանակ Կոռնելն իրեն ծեծել է և ասել է, որ եթե Կատալինին չբերի «Կոնգրես» հյուրանոց, ապա նորից է իրեն ծեծելու: Երեկոյան մի բանի ժամից հյուրանոց են եկել մարմնավաճառներ, որոնց վճարել են Մա-րիուսը և Կոռնելը, այդ մարմնավաճառներից մեկին ուղարկել են իր սենյակ որպես վարձատրու-թյուն: Մարիուս Լուպուն որոշել է գնալ Հայաստանից, բոլոր քարտերը թողել է Կոռնել Ստենզա-չուի մոտ և վերջինս դրանք դրել է հյուրանոցային համարում գտնվող սեյֆի մեջ: Մարիուս Լուպուն մեկնել է Հայաստանից, ինքը նույնպես ունեցել է ավիատոմս Երևան-Լոնդոն հետադարձ չվերթների համար, սակայն Կոռնելն իրեն թույլ չի տվել մեկնել, չնայած իր բազմաթիվ խնդրանքների: Կոռնելը վերցրել է իր անձնագիրը, ասել է, որ իրեն չի թողնի գնալ, որովհետև ինքը գործը դեռ չի ավարտել, որից հետո գնացել է իրենց թռիչքի օրերը հետաձգելու: Այլընտրանք չունենալով, ինքը ևս 2-3 օր նրա հետ գնացել է բանկոմատներից գումարներ գողա-նալու, վերջին օրերին Կոռնելն անընդհատ գիշեր-ցերեկ անհանգստացրել է իրեն, անգամ առա-վոտյան ժամը 4-ին արթնացրել է և ուղարկել է գողություն կատարելու: Վերջապես օգոստոսի 27-ին Կոռնելն իրեն թույլատրել է մեկնել Հայաստանից, ասելով, որ մնացած քարտերով անձամբ կգբաղվի: Գնալուց առաջ իրեն տվել է 2000 եվրո և ցուցում է տվել այդ գումարը փոխանցել եղ-բորը՝ Բողոյին, ասելով, որ եթե փորձի փախչել այդ փողերի հետ կամ ծախսել դրանք, ապա բազմաթիվ պորբլեմներ կունենա, որ ոչ մի տեղ չի կարող փախչել նրանից: Ինքը վերադարձել է Մեծ Բրիտանիա, տվել է փողերը Բողոյին, մի օր անց վերջինս մտել է իր սենյակ ու ասել է, որ «Քիշտրուլյա»-ն ցանկություն է հայտնել իրեն հանդիպելու: «Քիշտրուլյա»-ն գրույցի ժամանակ առա-ջարկել է վերադառնալ Հայաստան և Կալու անունով նրա մարդկանց մեկի հսկողության ներքո աշխատել անմիջապես նրա համար: Ինքը համաձայնվել է, «Քիշտրուլյա»-ն իր համար գնել է ավիատոմս դեպի Երևան: Երբ «Քիշտրուլյա»-ն գնացել է, ինքը գնացել է այդ ավիագործակալու-թյուն և պահանջել է

վերադարձնել ավիատոմսի գումարը, քանի որ իր գրպանում ընդհանրապես փող չի ունեցել: Վերադարձել է տուն, վերցրել է ճամպրուկները, տեղափոխվել է բնակվելու այլ բնակարան և այդ օրվանից այդ խմբից որևիցե մեկի հետ չի հանդիպել:

Դատապարտյալ Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքների համաձայն՝ Ադի Իոան Բլազան սեփական շահերից ելնելով՝ ցուցմունքներում իրողությունը մի փոքր չափազանցել է: Ինքը Հայաստանում երբևիցե չի ծեծել Ադի Իոան Բլազային, չի ստիպել գողությամբ զբաղվել, քանի որ մարդուն կարելի է 10 անգամ ստիպել փող գողանալ, բայց ոչ 340 անգամ: Եթե ինքը նրան անընդհատ ծեծեր, ապա Բլազան կմեռներ, կամ դրան ականատեսներ կլինեին, դա կլսեին հյուրանոցում: Բլազան Հայաստանում առաջին անգամը չէ, որ իր հետ մասնակցել է գողության: Իրենք միասին գողություններ են կատարել նաև Իտալիայում՝ Վենետիկում և Պադովայում 2008 թվականի ապրիլ ամսին: Միակ բանը, ինչ Բլազան Երևանում «ստիպված» է արել, դա ամեն օր թեթևաբարո կանանց հետ հյուրանոցում ժամանակ անցկացնելն է եղել: Նա իր հետ միասին հափշտակել է բանկային քարտերի տվյալները Լոնդոնում, միասին տիրանալով դրանց, որոշել են գալ Հայաստան, քանի որ Մարիուս Լուպուից ստացել են տեղեկություն, որ Հայաստանում բրիտանական բանկերի քարտերով հնարավոր է բանկոմատներից գումար հափշտակել: Իհարկե, Բլազան Լոնդոնում վախեցել է իրենից, բայց Հայաստանի տարածքում ինքը նրան ոչ մի անգամ չի հարվածել: Մի անգամ նման զրույց եղել է, կասկածանք ունենալով, ինքը որոշել է ստուգել Բլազայի ճամպրուկը և դրա մեջ հայտնաբերել է 300.000 դրամ: Կանչել է, շատ հանգիստ գրուցել են, ինքը հիմար չէ, որ Հայաստանի հյուրանոցում ինչ-որ մեկին ծեծեր, դա կարող էր անել Լոնդոնում կամ Ռու-միմիայում: Իր սխալն այն է եղել, որ Բլազայի խաբեությունը բացահայտելուց հետո վերջինիս կատարած ծառայությունների համար հասանելիք գումարը չի տվել և չեն բաժանվել: Իր կարծիքով, խաբեության բացահայտման ժամանակ Բլազան վախեցել է իրենից, քանի որ ասել է, որ ոչ մի փող չի ուզում: Ինքն ասել է, որ պետք չէ ոչինչ միմյանցից թաքցնել, որ եթե այդպես շարունակեն, ապա կբռնվեն: Բլազան ազատ է տեղաշարժվել, ինչ ուզեցել՝ ձեռք է բերել, անգամ կոստյում է գնել, նույնիսկ փող է ուղարկել տուն՝ հարազատներին:

Իհարկե, Բլազան իր մեղքով է Հայաստանում հայտնվել, դրա պատճառն այն է եղել, որ Բլազան Ֆաուրի լավ ընկերն էր: Ինքը Բլազայի հետ ծանոթ չի եղել, քանի որ Մարոկկոյից նոր էր եկել Լոնդոն: Հանդիպելով Բլազային, ինքը Ֆաուրից հարցրել է, թե ո՞վ է այդ երեխան, վեր-ջինս Բլազային ներկայացրել է որպես կեղծ բանկային քարտերով գողություններ կատարող անձնավորություն, առաջարկել է նրան ներգրավել գողության կատարման մեջ և մի փոքր գու-մար տալ: Իր սեփական փորձից ելնելով կարող է ասել, որ Լոնդոնում ազգությամբ ռումինացի գրեթե բոլոր երիտասարդները դրանով են զբաղվել՝ կամ բանկային քարտերի տեղեկություններն են գողացել, կամ բանկոմատներից գողությամբ են զբաղվել: Դրանով Լոնդոնում կարող է նույ-նիսկ 3 տարեկան երեխան զբաղվել, բանկոմատին փակցնելով համապատասխան սարք: Ինքը նման սարքեր չի ունեցել, Ֆաուրի միջոցով մի տղայից ձեռք է բերել այդ սարքերը, Բլազայի հետ ծանոթանալուց հետո սկսել են միասին գողությամբ զբաղվել: Մեկ-երկու շաբաթվա ընթացքում իրենք բանկային քարտերի տեղեկություններ են հափշտակել, ինքն ու Ֆաուրը փակցրել են այդ սարքը բանկոմատին, իսկ Ադի Իոան Բլազան ժամանակ անց այդ սարքը բերել է և տվել է ի-րենց: Իհարկե, այն բերելն ավելի վտանգավոր է եղել, դրա համար իրենք Բլազային են ուղարկել, օգտագործել են նրան: Բանկային քարտերի վրա գրառված տվյալները հափշտակելուց հետո վերադարձել են տուն և դրանց օգտագործմամբ կեղծ քարտեր են պատրաստել: Այդ կրեդի-տային քարտերի PIN-ծածկագրերը ձեռք է բերել Միհայ Ֆաուրը, Բլազան այդ գործում ոչ մի լուրջ դերակատարում չի ունեցել, նրան ուղարկել են տարբեր մանր գործերով: Այդ երկու շա-բաթվա ընթացքում Մեծ Բրիտանիայում մոտ 200 բանկային քարտերի տվյալներ է հաջողվել ստանալ: Քանի որ այդ ամենն արել են Լոնդոնում, պատրաստված քարտերով պետք է գումար-ներ հափշտակեին և դրա

համար երկիր են որոնել: Լոնդոնում ինքը հանդիպել է Մարիուս Լուպուին, նրա հետ անցյալում ծանոթ են եղել, վերջինս իր երեսը վնասել էր ծեծկռուտքի ժամա-նակ: Ինքը հարցրել է, թե որտե՞ղ է հնարավոր կեղծ բանկային քարտերով գումար հափշտակել, Լուպուին ասել է, որ ինչ-որ մեկին ուղարկել է Հայաստան, երբ տեղեկանա արդյունքների մասին և նրա տղաները գնան Հայաստան, ինքը նույնպես կարող է այնտեղ գնալ: Ինքը հարցրել է, թե ի՞նչ է անհրաժեշտ ուղևորության համար, Լուպուին հայտնել է վիզա ստանալու անհրաժեշտության մասին, բացատրել է մանրամասնությունները: Մարիուս Լուպուին ասել է, որ կողմնակի ան-ձանց այդ տեղեկությունները չհայտնի, որպեսզի նրա եղբոր և «Քիշտրուլյա»-ի հետ պորբլեմներ չլինեն: Իր կարծիքով, վերջիններս հարազատներ են: Սովորաբար, երբ հայտնաբերվել է մի եր-կիր, որտեղ հնարավոր է եղել բանկոմատներից կեղծ քարտերով գումարներ հափշտակել, այնտեղ առաջնահերթ գողության գնացել են հայտնաբերողները: Բայց քանի որ Մարիուս Լուպուին, ժամանակին վնասելով իր երեսը, պարտք է եղել իրեն, մեղքի զգացումից ելնելով փորձել է լավություն անել: Ինքը խոստացել է այդ տեղեկությունը ոչ մեկին չասել: Որոշելով մեկնել Հա-յաստան, ինքը գնացել է տուն, Միհայ Ֆաուրին և բոլորին հարցրել է, թե ո՞վ է ցանկանում իր հետ գնալ: Ադի Իոան Բլագան իր և Ֆաուրի հետ նույն բնակարանում է ապրել Լոնդոնում: Բնա-վորությամբ վախկոտ լինելով, Ֆաուրը հրաժարվել է, ասելով, որ Հայաստանը հետխորհրդային երկիր է, նախընտրել է գնալ Իտալիա, իսկ Բլագան համաձայնվել է ուղեկցել իրեն: Ինքն ու Ֆաուրը կիսել են պատրաստված քարտերը, իր կողմից Ֆաուրին և Բլագային տվել է որոշ քա-նակությամբ քարտեր, քանի որ իր հետ գողություն կատարած անձանց նույնպես պետք է բաժին հասներ: Ադի Իոան Բլագան շատ քիչ քարտեր ուներ, որևիցե պայմանավորվածություն այն մա-սին, թե ինչպե՞ս կիսել գողոնը, նախապես չի եղել, բնական է, որ դրա գերակշիռ մասը՝ մոտ 80 տոկոսը պետք է իրենը լիներ, քանի որ քարտերը պատկանել են իրեն: Դրանից հետո Բլագայի հետ գնացել են Լոնդոնում Հայաստանի դեսպանատուն, միասին դիմել են վիզա ստանալու հա-մար, մի քանի օրից դեսպանատնից վերցրել են անձնագրերը վիզաներով: Ինքն այժմ չգիտի, թե Բլագան ուզեցել է Հայաստան գալ, թե՞ եկել է այստեղ իրենից վախենալով: Ամեն ինչ հնարավոր է, քանի որ Լոնդոնում մի անգամ ինքն ուժեղ հարվածել է նրան, երբ վերջինս սկզբից համա-ձայնվել է փոխանակել նրա գնած «Դոլչե Գաբանա» ժամացույցն իրեն պատկանող «Պոլիս» ժամացույցի հետ, իսկ հետո, մտնելով Միհայ Ֆաուրի սենյակ, վերադարձել և հրաժարվել է փո-խանակումից: Ինքը մտածել է, որ դրա նախածեռնողը Միհայ Ֆաուրն է եղել, պարզաբանել է նրա հետ այդ հարցը և երբ վերջինս հրաժարվել է դրանից, մի անգամ հարվածել է Ադի Իոան Բլագային, որպեսզի իրենց միջև կռիվ չզգի:

Հայաստան գալիս ինքն ուղեկցի կարիք չի ունեցել, իր քարտերը ոչ մեկին չէր վստահել, իսկ Բլագային վստահել է, որովհետև նա երիտասարդ էր և նման չէր խուլիզանի: Հայաստան գալուց կեղծ բանկային քարտերը թաքցվել են Ադի Իոան Բլագայի ուղեբեռում, նա այդ մասին իմացել է: Քանի որ ինքն է ղեկավարել Բլագայի գործողությունները, բնական է, դա անձամբ չէր անելու, ամբողջ վտանգը հասնելու էր Բլագային, իրենք այդպես են պայմանավորվել Լոնդո-նում: Երևանի օդանավակայանում ուղեբեռը ստուգել են և ինքը մտածել է, որ դա վերջն է, սա-կայն ոչինչ չեն նկատել: Այդպես եկել են Երևան, քանի որ առավոտյան ժամը 6-ին են ժամանել, որոշել են ստուգել, թե բանկոմատներից ինչքա՞ն գումար է կարելի հանել: Ադի Իոան Բլագան վերցրել մի 4-5 քարտ, գտել է մի քանի բանկոմատ, որտեղից գումար է հանել և վերադարձել է հյուրանոց, գումարի չափը չի տպավորվել իր հիշողության մեջ: Իր հիշելով, այդ երեկն ինքը Բլագային ասել է, որ փորձի թեթևաբարո աղջիկներ գտնել և բերել հյուրանոց, Ադի Իոան Բլագան եկել է 2-3 աղջիկների հետ, բայց վերջիններիս չեն թողել մտնել հյուրանոց:

Իհարկե, ինքը հետևել է Ադի Իոան Բլագային, նա իր հսկողության տակ է եղել: Օրը 2-3 անգամ դուրս են եկել քաղաք գողություն կատարելու, ինքը Բլագային միանգամից մի 15-20 քարտ է տվել, վերջինս մոտեցել է բանկոմատների մոտ, իսկ ինքը նրան սպասել է: Այն քարտե-րով, որոնց միջոցով առավոտյան հաջողվել է գումար հափշտակել, փորձել են

Լոնդոնի ժամով կեսգիշերից հետո նորից գողություն կատարել, քանի որ դրանք օրեկան լիմիտ են ունեցել: Ինքն իրոք պարբերաբար ստուգել է Բլազայի հագուստը և ուղեբեռը, քանի որ մի անգամ Բլազան սպասվածից քիչ գումար է հանձնել: Ղա իր մեջ կասկած է հարուցել, ստուգելով ուղեբեռը, գույ-պաների մեջ պահած 300.000 դրամ է հայտնաբերել: Կորցնելով Բլազայի հանդեպ վստահու-թյունը, բարկացել և հարցրել է, թե ինչու՞ է այդպիսի բան արել, որ ինքը մինչ այդ հոգացել է նրա բոլոր կարիքները: Բլազան պատասխանել է, որ ինչ-որ հարսանիքի նվերի համար գումար է պահել: Ինչ վերաբերվում է նրան, թե ինքն իբր արգելել է Բլազային մեկնել Հայաստանից և պատռել է Երևան-Ռոսիարեստ չվերթի վերջինիս ավտատոմսը, ապա նման դեպք չի եղել: Ադի Իոան Բլազան հափշտակված գումարները բերել և տվել է իրեն, իսկ ինքը դրանք պահել է սեն-յակում: Ղա տևել է մի 4 օր, մինչև Օլիվեր Ռադուկու Մարիանը ժամանել է Հայաստան, ինչը որևիցե կապ չի ունեցել իր կամ Բլազայի հետ: Օլիվերն իր համար չի եկել Հայաստան, ինքը վերջինիս կարիքը չի ունեցել, քանի որ իր հետ է եղել Ադի Իոան Բլազան: Օլիվերն եկել է սե-փական քարտերով և սեփական նախաձեռնությամբ, մի անգամ Բլազային է առաջարկել դրան-ցով գումար հափշտակել և Բլազան դրան չի համաձայնվել: Օլիվեր Ռադուկու Մարիանը սե-փական քարտերով է գողություն կատարել, դրանց միջոցով շատ քիչ գումար է հաջողվել հափշտակել, քանի որ գերմանական բանկերի քարտեր են եղել: Օլիվերը կանչել է Հայաստան Դանիել Ֆլորին Ֆեռառուին, որի հետ ինքը որևիցե առնչություն չի ունեցել, դա Օլիվերի մարդն է եղել: Քանի որ Օլիվերի քարտերով չի հաջողվել մեծ գումար հափշտակել, նա գումարից շատ նեղն է եղել, մի անգամ գումար է ուզել և ինքը 700.000 դրամ է տվել: Մի օր Օլիվերն եկել է իր մոտ «Էրեբունի» հյուրանոց և իր ճամպուրկի մեջ տեսնելով 22 միլիոն դրամ, հարցրել է, թե արդյոք չի՞ վախճնում այդ գումարները պահել, առաջարկել է փոխարկել: Իմանալով, նա Մարոկկոյում տա-րադրամի փոխանակմամբ է զբաղվել, ինքն ասել է, որ վերցնի այդ գումարը և փոխանակի տա-րադրամով: Այդ օրը նա մի 20.000 եվրո է փոխարկել և բերել իրեն, թե որտե՞ղ, ինքը չի իմացել, նրա հետ չի եղել: Իր կարծիքով, ոչ մի հանցագործություն այդ առումով չեն կատարել, որովհետև Եվրոպայում կարելի է փոխարկել ցանկացած չափի գումար: Հետո Հայաստան է ժամանել Մարիուս Լուպուն՝ սեփական կեղծ քարտերով, երևի Օլի-վերի հետ է գրուցել և տեղեկացել, որ իրենց հաջողվել է բավականին մեծ գումար հափշտակել, որ Ադին «Բլոնդու»-ն բախտավոր տղա է: Հայաստան ժամանելուց հետո Մարիուս Լուպուն մի քանի անգամ իրեն խնդրել է միջնորդել, որ Ադին նրա համար էլ գումար հափշտակի: Բայց Ադին չի համաձայնվել, որովհետև գնչուներին չէր սիրում: Բլազան Մարիուս Լուպուին Լոնդոնում չի ձանաչել, մի զուգե մի անգամ տեսել է իր հետ և ինքը պատմել է, թե ինչ հանգամանքներում է Լուպուն իր երեսը վնասել:

Այնուհետև Հայաստան անսպասելի եկել է Դանիել Ֆլորին Ֆեռառու, որի համար Օլի-վերի մայրն է ավիատոմս: Նա սկսել է փող հափշտակել Օլիվերի՝ «Ռադու»-ի և Մարիուս Լու-պուի համար: Շատ անգամ Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառու գողու-թյուն կատարելու համար վերցրել են նաև Բլազային, միասին փող հափշտակելուց հետո վերա-դարձել են, Օլիվերը Ֆեռառուի հետ օգտագործված քարտերը տվել է Մարիուս Լուպուին: Նրանք շատ քիչ քարտեր են ունեցել՝ մի 30-40 հատ, իսկ Ադի Իոան Բլազան հափշտակված փող-ըն տվել է իրեն: Իր հիշելով, մի օր ոստիկանությունը նկատել է Դանիելին և Օլիվերին բանկոմատի մոտ, դա օգոստոսի 25-ին կամ 26-ին է եղել: Նրանք վախեցած վերադարձել են հյուրանոց և ասել, որ նրանց ոստիկանությունն է նկատել: Ինքը հարցրել է, թե այդ դեպքում ինչու՞ են Օլիվե-րի կողմից շահագործվող մեքենայով եկել հյուրանոց:

Մարիուս Լուպուն իր և Բլազայի հետ ոչ մի գործնական կապ չի ունեցել, նա եկել է սե-փական քարտերով, նրանից առաջ Հայաստանում գործել են «Քիշտուրույա»-ի և Մարիուս Լու-պուի եղբոր մարդիկ: Ինքը նրանց չի ձանաչել, Հայաստանում նրանց պատահական է տեսել, իմացել է, որ Բաքաու քաղաքից են: Անունները չեն տպավորվել իր հիշողության մեջ, երեխաներ են եղել, իսկ ինքն երեխաների հետ աշխատել է չչվովել: Հավանաբար նրանք վախեցել են, որ ինքը կարող է գումարները խլել,

քանի որ հաճախ է այդպես վարվել: Մարիուսն անծամբ է գու-մարներ հափշտակել բանկոմատներից և անծամբ է գողոնը փոխարկել տարադրամով, հետո քարտերի ինչ-որ մաս տվել է Օլիվերին և Դանիել Ֆեռառուին, քանի որ նրանք գումար գրեթե չեն ունեցել, սոված են եղել, բոլորին ինչ-որ ծառայություններ են մատուցել գումարի դիմաց: Գումարներ գողանալով, Մարիուսը որոշել է օգոստոսի 26-ի առաջոտյան գնալ Հայաստանից և մեկնել է ինքնաթիռով: Նույն օրն ինքը Բլազային ասել է, որ տեղափոխվի այլ հյուրանոց, որովհետև ոստիկանների է նկատել հյուրանոցում և մտածել է, որ Բլազային կարող են ճանաչել, քանի որ բանկոմատներից հիմնականում նա է գումար հափշտակել: Բլազան տեղափոխվել է այլ հյուրանոց իր մոտ մնացած բոլոր քարտերով հանդերձ, դրանց միջոցով արդեն գրեթե չի ստացվել գումարներ ստանալ բանկոմատներից: Նույն օրը կամ մի դրանից մի օր առաջ Ադի Իոան Բլազան ավիատոմս է գնել, իսկ առավոտյան մեկնել է Հայաստանից, ինքը վերջինիս նոր-մալ է ճանապարհել, փաթաթվել են եղբայրների պես: Իր հիշելով, Բլազային մեկնելուց առաջ մի 2 հազար եվրո է տվել, իմանալով, որ վերջինս փող է ուղարկել հարազատներին Ռումինիա, ավիատոմս է գնել: Բլազայի գնալու օրը, ժամը 10-ին Օլիվեր Ռադուկու Մարիանը մենակ եկել է իր մոտ, ինքը պատրաստվել է նույնպես փոխել հյուրանոցը: Օլիվերն իրեն առաջարկել է միա-սին սենյակ վարձակալել «Երևան» հյուրանոցում, քանի որ այն բարձրակարգ է և այնտեղ սեյֆեր կան: Ինքը համաձայնվել է, քանի որ այնտեղ աշխատում էր մի աղջիկ, որն իրեն դուր է եկել: Օլիվերի հետ կիսովի այդ սենյակն են վերցրել, իր հիշելով՝ սեյֆում դրվել են միայն իր փողերը, մի 10 քարտ և մոտ 1 միլիոն դրամի չափի գումար, որոնք Բլազան բերել է իրեն մեկնելուց առաջ: Այդ օրն Օլիվեր Ռադուկու Մարիանը և Դանիել Ֆլորին Ֆեռառուն մոտ մի 10000 եվրո են փոխարկել: Օլիվերն ինչ-որ բնակարան է վարձել Երևանում, որովհետև ուզեցել է այստեղ ըն-տանիքը բերել, նրա կնոջ եղբայրը Դանիել Ֆեռառուի հետ մտերիմ ընկերն է եղել: Այդ վար-ձակալած բնակարանից վերադարձել է իր մոտ հյուրանոց, որտեղ ամբողջ օրը մենակ է գտնվել եղել, հյուրանոցի սրճարանում է ժամանակ անցկացրել, հյուր և սուրճ է խմել: Ժամը 17-ի սահ-մաններում Ֆեռառուն և Օլիվերն են եկել, ինքը մի աղջկա հետ պետք է հանդիպեր հյուրանոցի մոտ: Ինքը փոխել է հագուստը ժամադրման համար, վերցրել է մոտ մեկ շաբաթ առաջ Հայաստանում 250.000 դրամով գնած «Վերտու» հեռախոսը, մի 200 ֆունտ ստերլինգ և մոտ 100.000 դրամ, որ շատ փող չծախսի: Երբ գնացել է այդ աղջկա հետ հանդիպելու, տեսել է, թե ինչպես են սռնել Օլիվեր Ռադուկու Մարիանին, իսկ Դանիել Ֆլորին Ֆեռառուին հաջողվել է փախչել: Ինքը Դանիելի հեռախոսահամարը չի ունեցել, նա Օլիվերի մարդն է եղել և ինքը նրան մինչ այդ չի ճանաչել: Այդ ժամանակ իրեն զանգահարել է վերոհիշյալ աղջիկը, ինքը տեսել է, որ հյուրանոցի մոտ ԱԱԾ աշխատակիցներ են և այնտեղ գնալ չի կարելի: Ջանգահարել է Օլիվերին և հարցրել է, թե ինչու՞ են նրան բռնել, վերջինս ասել է, որ անձնագրի հետ կապված խնդրի պատճառով: Օլիվերը խնդրել է Դանիելի միջոցով անձնագիրը «Եվրոպա» հյուրանոցից բերել, բայց ինքը Դանիելի հեռախոսահամարը չի իմացել: Ինքը հարցրել է Դանիելի հեռախոսահամարը, բայց երբ զանգահարել է, վերջինս չի պատասխանել: Իմանալով, որ նա բնակվել է «Եվրոպա» հյուրանոցում, գնացել է այնտեղ և վերցրել է Օլիվերի անձնագրի պատճեն, իրեն այն տվել են սպասարանի աշխատակիցները: «Եվրոպա» հյուրանոցի աստիճաններով իջնելուց տեսել է Դանիել Ֆեռառուին, որն իջնում էր Օլիվերի և նրա ձամայրուկը ձեռքին: Ինքը հարցրել է, թե ինչու՞ չի պատասխանել զանգին, Դանիելը պատասխանել է, որ որոշել է գնալ: Ինքը հարցրել է, թե որտե՞ղ է Օլիվերի անձնագիրը, Դանիելն ասել է, որ նրա մոտ է: Ինքը վախեցել է անծամբ գնալ և անձնագիրը փոխանցել Օլիվերին, ասել է Դանիելին, որ տանի և Օլիվերին հանձնի անձնագիրը: Այդ ընթացքում մի տաքսի է կանգնեցրել, Դանիելն ասել է, որ անձնագիրը ոչ մի տեղ չի տանի, առաջարկել է գնալ այնտեղից: Ճանապարհին ինքը կանգնեցրել է տաքսին և ասել է, որ մի քանի քարտ պետք է պահի, երբ դուրս է եկել քարտերը պահելու, շրջվելուց տեսել է, որ տաքսին Դանիել Ֆեռառուի հետ գնացել է: Ինքը կրկին զանգահարել է Օլիվերին, ասել է, որ պատճեն բերել չի կարող և իմացել է, որ Դանիելն անձնագրով արդեն եկել

է հյուրանոց: Ինքը հարցրել է Օլիվերին, թե ի՞նչ է պատահել, նա խորհուրդ է տվել փախչել, ասելով, որ վիճակը լավ չէ: Հասկանալով վիճակի լրջությունը, որոշել է փախչել Հայաստանից, իր մոտ եղել է միայն անձը հաստատող քարտը, անձնագիրը մնացել է հյուրանոցային համարում: Ինքը չի իմացել, որ այդ քարտով չի կարող մեկնել, դիմել է ծանոթներից մեկին, որն «էրեբունի» հյուրանոցում զբաղ-վել է անվտանգության ապահովմամբ, խնդրել է մի տաքսի գտնել իր համար՝ երկրից մեկնելու համար: Ծանոթը տաքսի է ուղարկել, որով ինքը գնացել է դեպի սահման և հետ է վերադարձել, քանի որ, հասնելով Գորիս, հասկացել է, որ ծեռքին եղած փաստաթղթով չի կարող անցնել սահ-մանը: Որոշել է հետ վերադառնալ, հասնելով Երևան, տեղավորվել է այն հյուրանոցում, որտեղ Բլազան է մնացել վերջին օրը: Ձանգահարել է ռումինական դեսպանատուն, ասել է, որ մեղավոր չէ, իր ընկերները բռնվել են: Դեսպանատնից իրեն ասել են, որ կարող է առավոտյան ժամը 10-ին գալ գրույցի, հաջորդ օրը դրա ընթացքում յուրովի է բացատրել է իրավիճակը, ասել է, որ անմեղ է, խնդրել է իրեն մի անձնագիր տալ՝ Հայաստանից մեկնելու համար: Դեսպանատնից դուրս գալուց նկատել է դրա դիմաց կանգնած մի ոստիկանական ավտոմեքենա, հասկացել է, որ ար-դեն սկսել են հետևել դեսպանատանը: Որոշել է դեսպանատնից դուրս չգալ՝ մինչև փաստաբան գտնելը: Մի շաբաթվա ընթացքում իրեն գտել են փաստաբան, դրանից հետո միայն դուրս է եկել դեսպանատնից, դեսպանի անձնական ավտոմեքենայի մեջ կամավոր եկել է ՀՀ ԱԱԾ շենքի կենտրոնական մուտքի մոտ, որտեղ իրեն դիմավորել են, այնուհետև մեղադրանք են առաջադրել և կալանավորել: Հարցաքնության ժամանակ իր փաստաբանների խորհրդով հրաժարվել է ցուցմունքներ տալուց և միայն վերջերս է հասկացել, որ սխալ է վարվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնվել է Ադի Իոան Բլազան, հասկացել է, որ գործը փակելու հնարավորու-թյուն չկա: Ադի Իոան Բլազայի ցուցմունքների մեծ մասը համապատասխանել է իրականութ-յանը, բացի այն հատվածից, որ ինքը նրան Հայաստանում ծեծել է և ստիպել է փող գողանալ բանկոմատներից: Վերջինիս իրոք ինքն է բերել Հայաստան և շատ է զղջացել, որ այդ իրավիճա-կի մեջ է գցել Բլազային: Կոռնել Կոնստանտին Ստենգաչուի լրացուցիչ ցուցմունքի համաձայն՝ ինքը, Միհայ Ֆաուրը և Բլազան կեղծ քարտերի վրա գրառվող տեղեկություններին տիրացել են «Քիշտրուլ-յա» մակամունով անձնավորության կողմից տրամադրած սկաների և տեսախցիկի միջոցով, որոնք Լոնդոնում բանկոմատներին փակցրել է Ադի Իոան Բլազան, իսկ ինքն ու Ֆաուրը ապա-հովել են վերջինիս անվտանգությունը: Այնուհետև, այդ տեղեկությունները պլաստիկ քարտերի վրա գրառել է «Քիշտրուլյա»-ն, որը նման գեղծարարություններով մոտ 80 տոկոսի համար վճա-րի դիմաց պատրաստել է կեղծ պլաստիկ քարտեր: Վճարը վերցրել է կեղծ բանկային քարտերի տեսքով, այսինքն վերցրել է զողացված տվյալներով պատրաստված քարտերի 40 տոկոսը: «Քիշտրուլյա»-ն հանդիսացել է Մարիուս Լուպուի մորաքրոջ աղջկա ամուսինը: Մարիուս Լու-պուն դեռ Լոնդոնում իրեն ասել է, որ Երևանում գործել են նրա կողմից ուղարկված երկու երի-տասարդ, սակայն իր կարծիքով, ուղղակի գլուխ է գովացել, այդ երիտասարդներից մեկը աշխա-տել է նրա եղբոր Սերջոյի համար, իսկ մյուսը՝ «Քիշտրուլյա»-ի համար, հակառակ դեպիսում Մարիուսն իրեն չէր խնդրի, որ «Քիշտրուլյա»-ից և Սերջիոյից թաքուն պահի այն հանգամանքը, որ Հայաստանի մասին տեղեկատվությունը նրանից է ստացել: Երևանում նա այդ երիտասարդ-ների հետ ընդհանրապես չի հանդիպել, հնարավոր է, որ նրանց իր հեռախոսացի գանգահարել և հանդիպել է Ադի Իոան Բլազան սեփական նախածեռնությամբ՝ բանկոմատների գտնվելու վայ-րերը ճշտելու համար: Կատալին Իոնուց Ապետրի Ֆուրդույի հետ Հայաստանում չեն հանդիպել, նրա հետ հանդիպել է Ռումինիայում 2004 թվականի, վերջինիս տուն գնացել է մի մարմնավա-ճառի հետ: Դատապարտյալ Օլիվեր Ռադուկու Մարիանի դատաքննությամբ հետազոտված նախա-քննական ցուցմունքների համաձայն՝ հազարավոր ռումինացիներ զբաղվել են բանկային քար-տեր կեղծելով և դրանց միջոցով ամբողջ Եվրոպայի տարածքով բանկոմատներից գումարներ գողանալով: Մի քանի տարի առաջ ընտանիքով տեղափոխվել է Լոնդոն

մշտական բնակության և, լինելով ռուսին, արձնչվել է այդ անձանց հետ, որոնք պարբերաբար միավորվել են՝ որևիցե եր-վիր մեկնելու և այնտեղ գողություններ կատարելու նպատակով: Հաճախակի մի անձի կողմից այդ նպատակով հավաքագրված անձինք միմյանց չեն ճանաչել, ճանաչել են միայն կազմա-կերպչին: Նման գործունեություն երկար տարիներ ծավալել են նաև իր ծանոթները՝ ծնունդով Ռուսիայի Բաքաու քաղաքից Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուն և Մարիուս Լուպուն, որոնք, համերկրացիների մոտ ունենալով որոշակի հեղինակություն, հավաքագրել են վերջիններիս բանկոմատներից գողություններ կատարելու նպատակով: Իր իմանալով, Մեծ Բրիտանիայում գործող բանկերի հաճախորդների բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները պատրաստվել են Լոնդոնում, Մարիուս Լուպուի բարեկամի՝ ազգությամբ գնչու «Քիշտրույա» անունով անձի կողմից, որն առաջինն է հավաքագրած անձանց ուղարկել Հայաստան՝ բանկոմատներից գողություններ կատարելու համար: Այնուհետև Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուն և Մարիուս Լուպուն «Քիշտրույա»-ից ձեռք են բերել կեղծ բանկային քարտերի խմբաքանակներ և հավաքագրած անձանց ուղարկել են Հայաստան:

Կոռնելը Լոնդոն քաղաքում իրեն առաջարկել է մեկնել Հայաստան և օգնել գողացված գումարներն արտահանելու գործում, քանի որ ինքը զբաղվել է օրինական ձեռնարկատիրությամբ և ստուգման դեպքում կանխիկ գումարների հայտնաբերումը կասկած չէր հարուցի: Բացի դրանից, ինքը պարտավորվել է Կոռնելի համար Հայաստանում վարձակալել ավտոմեքենաներ, բնակարաններ: Երևանում Կոռնելը մտադիր է եղել անցկացնել ամիսներ, իսկ ինքը գնել է նաև հետադարձ՝ Երևան-Լոնդոն չվերթի ավիատոմս 2008 թվականի օգոստոսի 30-ի համար: Հայաստան ժամանել է Կոռնելից մի քանի օր անց՝ 2008 թվականի օգոստոսի 20-ին, օդանավակայանում ձևակերպել է վիզա, մինչ այդ Կոռնելն իր համար սենյակ է ամրագրել Երևանի «Եվրոպա» հյուրանոցում: Նա տեղավորվել է այդ սենյակում, ծանոթացել է Կոռնելի հավաքագրած անձանց-ցից մեկի Ադի Իոան Բլազայի հետ, վերջինս Կոռնելի հետ բնակվել է «Էրեբունի» հյուրանոցում վարձակալած սենյակում: Ինքն իմացել է, որ Կոռնելը և Բլազան միասին են ժամանել Հայաստան, ինչպես հասկացել է, կեղծ քարտերը Հայաստան են բերվել վերջինիս ուղեբեռում: Բնավորության համաձայն, Կոռնելը միշտ նախընտրել է ռիսկի չդիմել և օգտագործել այլ անձանց հան-ցագործություն կատարելու նպատակով: Բլազան Երևանում աշխատել է Կոռնելի համար, հիմ-նականում զբաղվել է կեղծ բանկային քարտերով բանկոմատներից գումարներ գողանալով:

Կոռնելը հատուցել է իր ավիատոմսի արժեքը, գումար է տրամադրել առօրյա ծախսերի համար: Արդեն Երևանում ինքը պարզել է, որ բացի Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի կազմա-կերպած խմբից, Երևանում այդ ժամանակ գործել են նաև Մարիուս Լուպուի կողմից հավաքագրած անձինք, ընդ որում, Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուն վերահսկել է նրանց աշխատանքը, քանի որ Մարիուսը դեռ Հայաստան չէր ժամանել: Փաստացի, երկու խմբերը գործել են ինքնու-րույն, ուղղակի Մարիուսի խնդրանքով, նրա բացակայության ժամանակ Կոռնելը հսկել է գոր-ծընկերոջ հավաքագրած անձանց, հավաքել է գողացված գումարները՝ Մարիուսին փոխանցելու համար, որոշ դեպքերում Ադի Իոան Բլազան և Մարիուս Լուպուի հավաքագրած անձինք զբաղ-վել են գողությամբ միասին: Ինքն այդ անձանց չի տեսել, նրանց մասին իմացել է Կոռնելի հետ խոսակցություններից, լսել է վերջինիս և այդ անձանց, ինչպես նաև Կոռնելի և Մեծ Բրիտանիա-յում գտնվող Մարիուս Լուպուի հեռախոսազրույցները: 2008 թվականի օգոստոսի 21-ին կամ 22-ին նրանք հանդիպել են «Էրեբունի» հյուրանոցում, Կոռնելը պարզել է, որ Մարիուսի հավաքագրած անձինք գողացված խոշոր գումարների զգալի մասը փոխանցել են Հայաստանից «Վես-թերն Յունիոն» համակարգով, բավականին բարկացել է նրանց վրա, վախենալով, որ այդ պատ-ճառով ամեն ինչ կարող է բացահայտվել: Իմանալով, որ Բլազան նույնպես գումար է փոխանցել «Վեսթերն Յունիոն» համակարգով, Կոռնելը վերջինիս ծեծի է ենթարկել: Ընդհանրապես, Կոռ-նելը հաճախակի է ծեծել Բլազային, վերջինս շատ է վախեցել կազմակերպչից ու կատարել է Կոռնելի յուրաքանչյուր ցուցումը: Մի անգամ իր ներկայությամբ Բլազան ցանկություն է հայտ-նել Ռուսիայի մեկնելու, սակայն Կոռնելը մի քանի

անգամ ապտակել է նրան, պատռել է ավիա-տոմսը և հայտարարել, որ Բլազայի մատուցած ծառայությունների կարիքը դեռ ունի:

Կոռնելի ցուցումով ինքն «Եվրոքար» կազմակերպությունում սկզբից վարձակալել է «Ֆորդ Ֆիեստա» մակնիշի ավտոմեքենա, սակայն դժգոհ լինելով շարժիչի աշխատանքից, մի քանի ժամ անց նույն սրահում այն փոխանակել են «Նիսսան Տիդա» մակնիշի ավտոմեքենայով: Այդ ավտոմեքենան հիմնականում վարել է Ադի Իոան Բլազան:

Քանի որ ձեռքին գումար չի ունեցել, Կոռնելն իրեն տվել է կեղծ բանկային քարտ՝ բանկոմատից գումար ստանալու համար: Ինքն Երևանի փողոցներից մեկում տեղադրված մի բանկոմատից այդ քարտով ստացել է 100.000 դրամ, որից 70.000 դրամը պահել է իրեն՝ հյուրանոցի վարձը վճարելու համար, իսկ մնացածը տվել է Կոռնելին:

Մի քանի անգամ այդ վարձակալած ավտոմեքենայով ինքը, Կոռնել Ստենգաչուն և Ադի Իոան Բլազան Երևանից դուրս են մեկնել: 2008 թվականի օգոստոսի 22-ին ավտոմեքենայով գնացել են Սևան լիճը տեսնելու և բանկոմատներից գողություններ կատարելու համար, ավտոմեքենան վարել է Կոռնելը: Սևան քաղաքում Կոռնելը և Բլազան բանկոմատներից գողություններ են կատարել, կեղծ քարտերը դրա համար տրամադրել է Կոռնելը, որը սկզբից անձամբ է դրանք մուտքագրել բանկոմատի մեջ, իսկ երբ մոտակայքում կանգնել է մի ոստիկանական ավտոմեքենա, արագ հեռացել է, քարտը թողնելով բանկոմատի մեջ, այնուհետև իրեն է ուղարկել գողություն կատարելու:

Որոշ ժամանակ անց Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուն և Ադի Իոան Բլազան «Էրե-բունի» հյուրանոցից տեղափոխվել են «Կոնգրես» հյուրանոց, ուր կրկին բնակվել են նույն հա-մարում: Նույն օրը Երևան է ժամանել Մարիուս Լուպուն, որին օդանավակայանում դիմավորել է Կոռնելը և տեղավորել է «Կոնգրես» հյուրանոցում: Ինքը նրանց այցելել է հյուրանոցում, մաս-նակցել է խոսակցությանը, միասին խմել են:

Մի քանի օր անց Լոնդոնից Կոռնել-Կոնստանտին Ստենգաչուի հրավերով Երևան է ժամանել իր ծանոթը՝ Դանիել Ֆլորին Ֆեռառուն: Վերջինիս հետ Լոնդոնում հանդիպել և հավա-քագրել են Կոռնելի ծանոթները: Երևան ժամանելուց առաջ Դանիելը գանգահարել է իրեն և հայտնել է գալու մասին, գումար չունենալով, ավիատոմսի համար գումարը պարտքով վերցրել է իր մայրից: Օդանավակայանում Դանիելին դիմավորելու գնացել են բոլորը՝ ինքը, Կոռնելը, Մա-րիուսը և Բլազան, Դանիելը տեղավորվել է բնակվելու իր հետ միասին՝ «Եվրոպա» հյուրանոցում վարձակալված սենյակում: Պարզվել է, որ Դանիելը դեռ Լոնդոնում է իմացել Երևանում կատար-վող գողությունների մասին և ժամանել է մի նպատակով՝ ՀՀ դրամի տեսքով գողոնն արտար-ժույթի փոխարկելու համար: Սակայն տեղում սկսել է ժամանակ առ ժամանակ օգնել Ադի Իոան Բլազային՝ վարել է ավտոմեքենան և որոշ դեպքերում նաև գողություններ է կատարել բանկո-մատներից, որի համար կեղծ քարտերը ստացել է Բլազայից:

2008 թվականի օգոստոսի 26-ին Երեկոյան «Կոնգրես» հյուրանոցում, ուր բնակվել են Կոռնելը, Բլազան և Մարիուսը, ինչ-որ դեպք է պատահել և այնտեղ ժամանել են բազմաթիվ ոստիկաններ: Ինքն այդ ամենը չի տեսել, սակայն տեղեկացել է, որ հանցակիցները, վախենալով հնարավոր բացահայտումից, որոշել են ժամանակավորապես դադարեցնել գործունեությունը: Մարիուսը նույն գիշերը մեկնել է Երևանից ինքնաթիռով, իսկ Կոռնելը և Բլազան տեղափոխվել են բնակվելու ինչ-որ այլ հյուրանոց: Հաջորդ օրը Կոռնելը Բլազային ուղեկցել է օդանավակա-յան և ճանապարհել Լոնդոն, որից հետո սենյակ է վարձակալել «Երևան» հյուրանոցում: Իր կարծիքով, գողացված գումարների մի մասը Հայաստանից տարել են Մարիուսը և Բլազան, մնացածը Կոռնելը պահել է իր մոտ և հյուրանոցային համարում՝ քարտերի հետ միասին:

Դատապարտյալ Կոնստանտին Օրեստի Հաջիի դատաքննությամբ հետազոտված նա-խաքննական ցուցմունքների համաձայն՝ 1998 թվականից բնակվել է Լոնդոնում, աշխատել է շի-նարարությունում, այնուհետև 2007 թվականից՝ «DHL» կազմակերպությունում որպես վարորդ:

Կենակցուհու՝ Մարգարիտա Սպրուդզանեի հետ ծանոթացել է 2007 թվականի նոյեմբեր ամսին, նրա քույրը, լինելով ծանր հիվան, տարել է մի քանի վիրահատություններ, ինչի կապակ-ցությամբ Մարգարիտայի մոտ

մեծ պարտքեր են կուտակվել: 2008 թվականի հուլիս ամսին, զրտ-նվելով ֆինանսական դժվար վիճակում, ինքը զանգահարել է ընկերոջը՝ Լոնդոն քաղաք պարբե-րաբար այցելող Ռումինիայի քաղաքացի Շտեֆան Ֆլորին Քուբոռադային և պարտքով խնդրել է 2000 եվրո, վերջինս մերժել է, նշելով, որ ծանոթը՝ Էդրիանը կարող է պարտքով գումար տալ տո-կոսի դիմաց: Շտեֆանը տվել է Էդրիանի հեռախոսահամարը և առաջարկել է խոսել վերջինիս հետ: Ինքը մինչ այդ ծանոթ է եղել Էդրիանի հետ, մոտ 3 տարի առաջ միասին աշխատել են Լոն-դոն քաղաքում՝ շինարարական կազմակերպությունում: 2008 թվականի հունվար ամսին հանդի-պել են ընդհանուր ընկերոջ ծննդյան օրը, խոսակցության ընթացքում Էդրիանը հայտնել է, որ զբաղվում է բանկային քարտերով, մանրամասները չի հայտնել: Շտեֆանի հետո խոսելուց հետո ինքը զանգահարել է Էդրիանին և հայտնել է գումարային պրոբլեմների մասին, վերջինս պա-տասխանել է, որ կզանգահարի մի քանի ժամ անց՝ ինչ-որ ծանոթի հետ խոսելուց հետո: Երեկոյան Էդրիանը զանգահարել է իրեն և ասել, որ ընդհանուր առմամբ կարող է օգնել, առաջարկել է ման-րամասները քննարկել հանդիպման ժամանակ, հիշատակելով, որ այդ թեմայի շուրջ հեռախոսով չարժե խոսել: Հաջորդ օրը, ժամը 20-ի սահմաններում Էդրիանը հեռախոսազանգով իրեն ժա-մադրել է «SHELL» բենզալցակայանի մոտ՝ Գլոստեր Ռոադ վայրում: Պայմանավորված ժամին և վայրում իր կողքին կանգնել է սև գույնի «ԲՄՎ» մակնիշի, 5-րդ սերիայի ավտոմեքենա՝ ըստ պետհամարանիշի 2001 թվականի արտադրության: Ավտոմեքենայի առջևում՝ վարորդի կողքի նստարանին նստած է եղել Էդրիանը, իսկ հետևի նստարանին՝ մի անծանոթ տղամարդ: Էդրիա-նը դուրս է եկել, մի քանի րոպե զրուցելուց հետո հայտնել է, որ ավտոմեքենայում նստած գործըն-կերը կարող է օգնել գումար տրամադրելու հարցում: Վերջինս իջեցրել է ապակին, Էդրիանը նրան ներկայացրել է Մարիուս անունով: Մարիուսն ասել է, որ կարող է գումար տրամադրել՝ իր կողմից 500 հատ պլաստիկ քարտեր Իսպանիա տեղափոխելու դեպքում, որտեղ այդ պահին գոր-ծել են նրա հավաքագրած մարդիք, խոստացել է, որ քարտերը ստանալուց վերջիններս կվճարեն այդ ծառայության դիմաց 2000 եվրո: Հասկանալով, որ խոսքը կեղծ բանկային քարտերի մասին է, ինքը հրաժարվել է մի խմբաքանակով 500 հատ քարտ տանել, խոստացել է մտածելուց հետո զանգահարել Մարիուսին: Վերջինս վերցրել է իր հեռախոսահամարը, ասելով, որ կզանգահարի հաջորդ երեկոյան: Մարիուսը և Էդրիանը հեռացել են, իսկ հաջորդ օրը Մարիուսի հետ հեռախոս-սազրույցի ընթացքում ինքը հրաժարվել է այդ գործից, պատճառաբանելով, որ վտանգը բավա-կանին մեծ է և չի ցանկանում զրկվել օրինական աշխատանքից: Մարիուսն առաջարկել է 1000 եվրոյի դիմաց փոխադրել ընդամենը 70-80 քարտ, խոստանալով, որ Իսպանիա հասնելուց և քարտերը նրա հավաքագրած մարդկանց փոխանցելուց հետո ավիատոմսի արժեքն անմիջապես կհատուցվի վերջիններիս կողմից: Իր վերջնական որոշումն իմանալու համար Մարիուսը զանգա-հարել է հաջորդ երեկոյան և ինքը տվել է համաձայնությունը: Մարիուսը շտապելով ասել է, որ հաջորդ օրը մեկնելու է Ռումինիա, խոստացել է զանգահարել 10-15 րոպե անց՝ մանրամասնու-թյունները հայտնելու համար: Նա զանգահարել է մեկ ժամ անց և ասել է, որ չի կարող հեռախո-սով կապվել Էդրիանի հետ, ցուցում է տվել իր էլեկտրոնային հասցեն SMS-հաղորդագրությամբ ուղարկել նրա բջջային հեռախոսահամարին: Մարիուսը հայտնել է, որ իր էլեկտրոնային հաս-ցեով տվյալներ է ուղարկելու՝ Էդրիանին փոխանցելու համար: Ինքը կատարել է այդ ցուցումը, 5 րոպե անց էլեկտրոնային փոստով ստացել է նամակ՝ թվերի ցուցակով, հեռախոսով զանգահարել է Մարիուսին և հաստատել է նամակը ստանալու հանգամանքը: Մարիուսը համձնարարել է տպել այդ նամակը և հաջորդ օրը ժամը 10-ից հետո այն փոխանցել Էդրիանին, նշելով, որ վեր-ջինս կասի, թե ինչ անել: Սակայն հաջորդ օրն իրեն «DHL» կազմակերպության գրասենյակում ցուցում են տվել նույն գիշերը բեռնատարով մեկնել ֆրանսիայի Լիոն քաղաք: Ինքն այդ մասին հեռախոսով հայտնել է Էդրիանին, նշելով, որ չի կարող մեկնել Իսպանիա, վերջինս չի առարկել, սակայն նրա ծայնից զգացվել է, որ այդ մերժման պատճառով վատ դրության մեջ է ընկել: Էդ-րիանը հարցրել է, թե ինքը Մարիուսից էլեկտրոնային փոստով նամակ ստացե՞լ է, դրական պա-

տասխան ստանալուց հետո առաջարկել է ոչնչացնել այն և մոռանալ դրա մասին: Էդրիանն ասել է, որ այդ խոսակցությանը կարող են անդրադառնալ գործուղումից հետո: Ֆրանսիայից վերա-դառնալուց հետո, 2008 թվականի օգոստոսի 21-ին ինքը և Մարգարիտա Սպրուդզանեն ավտոմե-քենայով մեկնել են Լատվիա, քանի որ գրասենյակից հայտնել են, որ որոշ ժամանակ գործու-ղումներ չեն լինելու և առաջարկել են հանգստանալ: Քանի որ գումար գրեթե չի ունեցել, օգոս-տոսի 23-ին Լատվիայից ստիպված զանգահարել է Էդրիանին և խնդրել է գումար տալ: Էդրիանն առաջարկել է օգնել նույն եղանակով, միայն խնդրել է տալ ստույգ պատասխան՝ այլևս ոչ մեկին վատ իրավիճակի մեջ չդնելու համար: Իր համաձայնությունը ստանալուց հետո էդրիանն առա-ջարկել է 150 հատ պլաստիկ քարտ շտապ տեղափոխել Հայաստան 1000 եվրոյի դիմաց, խոս-տացել է տեղում փոխհատուցել ավիատոմսի արժեքը: Պլաստիկ քարտերը Լոնդոնից իրեն ու-ղարկվել են Ռիգա «Եվրոլայն» առաքիչ կազմակերպության միջոցով, Էդրիանը ծանրոցն ու-ղարկելուց զանգահարել է իրեն և տվել է Մարիուսի նոր հեռախոսահամարը, քանի որ վերջինս, ըստ ընկերոջ խոսքերի, այդ պահին գտնվել է կամ Ռումինիայում, կամ Բուլղարիայում: Ինքը Ռի-գա քաղաքում առաքիչ կազմակերպության գրասենյակից ստացել է մի փակ ծանրոց, դրանից հետո զանգահարել է Մարիուսին և հայտնել է այդ մասին: Մարիուսը նյարդացած ասել է, որ ինքը հնարավորինս արագ գնի ավիատոմս և մեկնի Հայաստան մի երկու օրով, որտեղ քարտերը հանձնելուց հետո կստանա 1000 եվրոն և ավիատոմսի արժեքը: Մարիուսը նաև ցուցում է տվել ավիատոմս գնելուց հետո անմիջապես ուղարկել հաղորդագրություն նրա լոնդոնյան հեռախոսա-համարի վրա, նշելով չվերթի օրը և համարը: Ինքը գումար բանկային քարտի վրա չի ունեցել, ընկերուհին՝ Մարգարիտա Սպրուդզանեն սեփական հաշվեհամարից բանկային քարտով հանել է 250 եվրո, որով ինքը Ռիգա-Երևան 26.08.2008թ. չվերթի ավիատոմսեր է գնել երկուսի համար: Ավիատոմսերը ծեռքին եկել է տուն և Մարգարիտային ասել է, որ պետք է մեկնեն Երևան՝ այն-տեղ գտնվող ընկերոջից գումար վերցնելու նպատակով: Այնուհետև Մարիուսին ուղարկել է հա-ղորդագրություն այն մասին, որ Երևան է ժամանելու օգոստոսի 27-ի առավոտյան, վերջինս պա-տասխան հաղորդագրությամբ ցուցում է տվել Երևան ժամանելուց հետո ուղարկել նոր հաղորդ-ագրություն, որից հետո նույն օրն երեկոյան իր հետ կապի մեջ էին մտնելու Երևանում գործող Մարիուսի հավաքագրած մարդիք: Ինքը քարտերով ծանրոցը չի բացել, այն տեղադրել է ծեռքի ուղեբեռի սպորտային պայուսակի մեջ և շտապելով կատարել Մարիուսի ցուցումը, Ռիգայից մեկնելուց մոռացել է վերցնել բջջային հեռախոսը: Մարգարիտայի հետ ինքնաթիռով ժամանել են Երևան 2008 թվականի օգոստոսի 27-ի առավոտյան ժամը 4:30-ի սահմաններում, օդանավա-կայանում ձևակերպել են վիզաներ, վարձել են տաքսի և գնացել են «Արմենիա Մարիոթ» հյուրա-նոց, քանի որ թռիչքից առաջ Ռիգայից համացանցով ամրագրել են այդ հյուրանոցում սենյակ 2 օրով: Առավոտյան ժամը 6-ի սահմաններում գրանցվել են հյուրանոցում, մտնելով սենյակ, պար-զել է, որ հեռախոսը մոռացել է Ռիգայում և չունի Մարիուսի և Էդրիանի հեռախոսահամարները: Հետո հիշել է, որ ունի իր էլեկտրոնային փոստարկղում պահպանվել է Մարիուսի ուղարկված նա-մակը և էլեկտրոնային հասցեն: Այնուհետև Մարիուսի էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկել է նամակ այն մասին, որ բարեհաջող հասել է Երևան, սակայն մոռացել է հեռախոսը և չունի նրա հեռախոսահամարը, խնդրել է հեռախոսահամարներն ուղարկել և հայտնել, թե ի՞նչ անել այդ քարտերի հետ: Դրանից հետո քնել են, առավոտյան ստուգել է էլեկտրոնային փոստը, սակայն որևիցե նամակ չի ստացել: Մարգարիտային առաջարկել է դուրս գալ ճաշելու, վերջինս գնացել է լոգանք ընդունելու, իսկ ինքը բացել է ծանրոցն ու տեսել մոտ 160-170 հատ պլաստիկ քարտեր: Դրանք մեծամասնությամբ «T-MOBILE», «O2» և «Orange» կազմակերպությունների հեռախոսա-համարների լիցքավորման քարտեր են եղել, մակերեսին ծեռագիր նշված են եղել թվեր և ինքը հասկացել է, որ դրանք PIN-ծածկագրերն են: Ինքը վերցրել է դրանցից երկու հատը և Մարգարի-տայի հետ դուրս են եկել հյուրանոցից: Մարիուսից դրա համար թույլտվություն չի ստացել, ուղ-ղակի գումար չի ունեցել: Մարգարիտան ցանկություն է հայտնել փոխանակելու մոտն եղած

200 ֆուստ ստերլինգը, ինքը ցույց է տվել վերցված երկու հատ քարտերը և ասել է, որ ավելի լավ է այդ քարտերից գումարներ հանել բանկոմատից: Իրենք մոտեցել են հյուրանոցից ոչ հեռու զըտ-մվոդ մի բանկոմատի, ինքը մուտքագրել է սեփական բանկային քարտերը, սակայն բանկոմատն այն չի սպասարկել: Այնուհետև ինքը մուտքագրել է հյուրանոցից վերցված կեղծ քարտերը, հա-վաքել է դրանց վրա նշված PIN-ծածկագրերը, բանկոմատը մեկը կրկին չի սպասարկել, իսկ մյուս կեղծ քարտով իրեն հաջողվել է 6 գործարքով ստանալ ընդհանուր առմամբ 160.000 դրամ: Գու-մարը ստանալուց հետո իրենց մոտեցել են բանկի 2 աշխատակիցներ և խնդրել են անցնել բանկի շենք: Շենք մտնելուց հետո նրանք պահանջել են ցույց տալ անձնագրերը, զրուցել են Մարգարի-տայի հետ ռուսերեն լեզվով, այդ ընթացքում ինքը գնացել է հյուրանոց անձնագրերը վերցնելու, ճանապահին դեն է նետել գողության գործիք հանդիսացող կեղծ քարտը, իսկ մյուս քարտը պա-հել է հյուրանոցի սենյակում: Վերցնելով անձնագրերը, վերադարձել և դրանք ներկայացրել է բանկի աշխատակիցներին, դրանից հետո եկել են ՀՀ ԱԱԾ աշխատակիցները և իրենց բերման են ենթարկել ՀՀ ԱԱԾ վարչական շենք, որտեղ ձերբակալել են:

Վկա, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության վճարային համակարգերի բաժնի գանձապահ Աննա Պարսամյանի դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 11-ին բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անգլերեն լեզվով ցանկություն է հայտնել «Վեսթերն Յունիոն» համակարգով Ռումինիա՝ Լիլիա-նա Կոզմայի տվյալներով փոխանցել 3000 եվրո: Հաճախորդի ձեռքին եղել է ՀՀ դրամ, ինքը բա-ցատրել է, որ այդ վճարային համակարգով գումարը կարելի է փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ցանկություն է հայտնել ՀՀ դրամը փոխարկել ԱՄՆ դոլարով և ուղարկել վերոհիշյալ անձին, ներկայացրել է Կատալին Իոնուց Ապետրի Ֆուրդույի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, տվել է 3000 եվրոյին և 4456.06 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը՝ 1385042.20 դրամ: Հաճախորդն անձամբ է լրացրել ու ստորագրել «Վեսթերն Յունիոն» համակարգով գումարի փոխանցման դի-մումը, նշելով այնտեղ բնակության վայրը և հեռախոսահամարը: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիրը և փաստաթղթերը, երիտասարդը ստորագրել է դրանք, որից հետո ինքը 4456 ԱՄՆ դոլարը փոխանցել է «Վեսթերն Յունիոն» համակարգով և հաճախորդը հեռացել է: 2008 թվականի օգոստոսի 19-ն բանկում իրեն մոտեցել է նույն երիտասարդը, ցանկություն է հայտնել ձեռքին եղած ՀՀ դրամը փոխարկել տարադրամի և «Վեսթերն Յունիոն» համակարգով Ռումինիա՝ Լակրամիոարա Բարլադեանուի տվյալներով փոխանցել 3000 եվրո: Ինքը խընդ-րել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը, երիտասարդը տվել է անձնագիրը և եվ-րոյին ու 4456.06 ԱՄՆ դոլարին համարժեք 1385042 ՀՀ դրամ: Ինքը կազմել է արտարժույթի վա-ճառքի անդորրագիր, լրացրել է փոխանցման համար դիմումը և փաստաթղթերը, վերջինս ստորագրել է դրանք: Դրանից հետո ցանկություն է հայտնել 200 եվրո էլ փոխանցել Ռումինիա Մեր-սեդես Մոկանուի տվյալներով, տվել է այդ գումարին և 296.89 ԱՄՆ դոլարին համարժեք 89.957 ՀՀ դրամ: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, լրացրել է փոխանցման համար դիմումը և փաստաթղթերը, վերջինս ստորագրել է դրանք և հեռացել է:

2008 թվականի օգոստոսի 16-ին իրեն բանկում մոտեցել է մի արտասահմանցի երիտա-սարդ, անգլերեն լեզվով ցանկություն է հայտնել ձեռքին եղած ՀՀ դրամը փոխարկել տարադրա-մի և «Վեսթերն Յունիոն» համակարգով Մեծ Բրիտանիա՝ Լաուրենտիու Կապամարեյի տվյալնե-րով փոխանցել 2500 ֆուստ ստերլինգ: Ինքը բացատրել է, որ այդ վճարային համակարգով գու-մարը կարելի է փոխանցել միայն ԱՄՆ դոլարի տեսքով, խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Դրագոշ Իոնուց Բոտեզատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, տվել է 2500 ֆունթ սթերլինգին և 4813.73 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը՝ 1458560.20 դրամ, անձամբ է լրացրել ու ստորագրել «Վեսթերն Յունիոն» համակարգով գումարի փոխանցման

դիմումը, նշելով այնտեղ բնակության վայրը և հեռախոսահամարը: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիրը և փաստաթղթերը, երիտա-սարդը ստորագրել է դրանք, որից հետո ինքը 4813.73 ԱՄՆ դոլարը փոխանցել է «Վեսթերն Յու-նիոն» համակարգով և հաճախորդը հեռացել է:

Դրագոչ Իոնուց Բոտեզատուն և Կատալին Իոնուս Ապետրի Ֆուրդույը մի քանի անգամ միասին են եկել են իրենց բանկ, իր մոտ տապալորություն է ստաղծվել, որ նրանք եղբայրներ են, միանշանակ նրանք ծանոթ են եղել: Մեկն իր մոտ է փոխանցում կատարել, մյուսն իր գործընկեր-բուհու՝ Քրիստինա Մարտիրոսյանի մոտ: Ըստ նրանց լրացրած փաստաթղթերի, բնակվել են «Ամրոց» հյուրանոցում, հեռախոսահամարները նշել են անծամբ:

Ա.Պարսամյանը դատաքննությամբ պնդեց իր նախաքննական ցուցմունքը: Վկա, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության վճարային համակարգերի բաժնի գանձապահ Քրիստինա Մարտիրոսյանի դատաքննությամբ հետազոտված նախաքննական նույնաբովան-դակ ցուցմունքի համաձայն՝ Դրագոչ Իոնուց Բոտեզատուն և Կատալին Իոնուց Ապետրի Ֆուրդույը «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության միջոցով՝ «Վեսթերն Յունիոն» համակարգով, գումար-ներ են ուղարկել Մեծ Բրիտանիա: Վկա Բ.Մարտիրոսյանը դատաքննությամբ պնդեց իր նախաքննական ցուցմունքը:

Վկա, «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաձյուղի գանձա-պահ Հայկուհի Մարտիրոսյանի ցուցմունքի համաձայն՝ ինքն աշխատել է «Արդշինինվեստ-բանկ» ՓԲ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաձյուղում, որպես գանձապահ: 2008 թվականի օգոստոսի 20-ին բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անգլերեն լեզվով ցանկություն է հայտնել 4000 ԱՄՆ դոլար գնելու, ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և հա-մարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Դրագոչ Իոնուց Բոտեզատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը: Ինքը կազմել է արտարժույթի վաճառքի անդորրագիր, վերջինս ստորագրել է այն և վերցնելով փոխարկված գումարը, հեռացել է:

Վկա, «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Էրեբունի» մասնաձյուղի գանձապահ Կարինե Հարությունյանի դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքի համա-ձայն՝ ամբաստանյալ Դ.Բոտեզատուն 2008թ. օգոստոսի 19-ին՝ բանկում, 1.510.000 դրամը փո-խարկել է 5000 ԱՄՆ դոլարի:

Վկա Կ.Հարությունյանը դատաքննությամբ պնդեց իր նախաքննական ցուցմունքը:

Վկա, «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Երևան» մասնաձյուղի գանձապահ Մա-սիս Իսաղույանի ցուցմունքի համաձայն՝ 2008թ. աշխատել է «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերությունում՝ Երևանի մասնաձյուղում: 2008թ. օգոստոսի 19-ին Դրագոչ Բոտեզատու տվյալներով քաղաքացին իր մոտ 1.515.000 դրամը փոխարկել է 5000 ԱՄՆ դոլարի և նույն օրը մեկ այլ աշխատակցի միջոցով փոխանցում է կատարել:

Վկա, «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաձյուղի գանձա-պահ Ամալյա Պողոսյանի ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 20-ին բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անգլերեն լեզվով ցանկություն է հայտնել 5000 ԱՄՆ դոլար փոխանցել Մեծ Բրիտանիա Լաուրենտիու Կապմարտի տվյալներով: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Դրագոչ Իոնուց Բոտեզատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, որպես բնակու-թյան հասցե նշել է «Դվին» հյուրանոցը: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, վերջինս ստորագրել է այն և հեռացել է:

Վկա, «Արարատբանկ» ՓԲ ընկերության «Ամիրյան» մասնաձյուղի դրամարկղի վարիչ Ալբինա Հակոբյանի դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքի համաձայն՝ Դրագոչ Բոտեզատուն 2008թ. օգոստոսի 12-ին բանկում 1.490.720 դրամը փոխարկել է 4928 ԱՄՆ դոլարով:

Վկա Ա.Հակոբյանը դատաքննությամբ պնդեց իր նախաքննական

ցուցմունքը:

Վկա, «Արդշինհնվեստբանկ» ՓԲ ընկերության «էրեբունի» մասնաձյուղի հաշվապահության մասնագետ Մուսաննա Անտոնյանի դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 19-ին Դրագոշ Իոնուոց Բոտեգատուն իր մի-ջոցով 5000 ԱՄՆ դոլար է փոխանցել Մեծ Բրիտանիա՝ Լաուրենտիու Կապմարտեյի տվյալներով:

Վկա Ս.Անտոնյանը դատաքննությամբ պնդեց իր նախաքննական ցուցմունքը:

Վկա, «Արարատբանկ» ՓԲ ընկերության «Ամիրյան» մասնաձյուղի հաշվապահ-գանձա-պահ Նարինե Թավաքայանի դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքի հա-մաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 12-ին Դրագոշ Իոնուոց Բոտեգատուն իրենց մասնաձյուղում << դրամը փոխարկել է 4928 ԱՄՆ դոլարով և իր միջոցով այդ գումարը փոխանցել է Մեծ Բրի-տանիա՝ Լաուրենտիու Կապմարտեյի տվյալներով:

Վկա, «Արդշինհնվեստբանկ» ՓԲ ընկերության «Տիգրան Մեծ» մասնաձյուղի գանձա-պահ Արմինե Ադամյանի ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 19-ին բանկում իրեն մոտեցել է մի արտասահմանցի երիտասարդ, անզլերեն լեզվով ցանկություն է հայտնել 5000 ԱՄՆ դոլար փոխանցել Ռումինիա Գաբրիելա Օանա Ռուսուի տվյալներով: Ինքը խնդրել է ներ-կայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Կատալին Իոնուց Ապետրի Ֆուրդույի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, որպես բնակության հասցե նշել է «Ղվին» հյուրանոցը: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, վերջինս ստորագրել է այն և հեռացել է:

Վկա, «Յունիբանկ» ՓԲ ընկերության «Կենտրոն» մասնաձյուղի մենեջեր Լիլիթ Աթաբեկյանի ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 15-ին բանկում իրեն մոտեցել է մի ար-տասահմանցի երիտասարդ, ցանկություն է հայտնել 3000 ԱՄՆ դոլար փոխանցել Ռումինիա Լիլիանա Կոզմայի տվյալներով: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Կատալին Իոնուց Ապետրի Ֆուրդույի տվյալներով Ռումի-նիայի քաղաքացու անձնագիրը, որպես բնակության հասցե նշել է «Ամրոց» հյուրանոցը: Ինքը վերցրել է գումարը, կազմել է փոխանցման ձևաթուղթը, վերջինս ստորագրել է այն և հեռացել է, իսկ ինքը գումարը փոխանցել է նշված հասցեով:

Վկա, «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության մասնավոր փոխանցումների խմբի ղեկավար Անա-հիտ Մովսիսյանի ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 12-ին բանկում իրեն մոտե-ցել է մի արտասահմանցի երիտասարդ, անզլերեն լեզվով ցանկություն է հայտնել մոտն եղած 4966 ԱՄՆ դոլարը փոխանցել Մեծ Բրիտանիա Լաուրենտիու Կապմարտեյի տվյալներով: Ինքը խնդրել է ներկայացնել անձնագիրը և համարժեք գումարը: Երիտասարդը ներկայացրել է Դրա-գոշ Իոնուց Բոտեգատուի տվյալներով Ռումինիայի քաղաքացու անձնագիրը, որպես բնակու-թյան հասցե նշել է «Ամրոց» հյուրանոցը: Ինքը կազմել է փոխանցման ձևաթուղթը, վերջինս ստորագրել է, տվել է գումարը և հեռացել, իսկ ինքը «Վեսթերն Յունիոն» համակարգով այն փո-խանցել է նշված հասցեով: 2008թ. օգոստոսի 16-ին բանկում Կ.Ֆուրդույը, ներկայացնելով Ռումինիայի քաղաքացու իր անձնագիրը և որպես բնակության հասցե նշելով «Ամրոց» հյուրանոցը, 1.346.216 դրամը փո-խարկել է ԱՄՆ դոլարի և 4450.3 ԱՄՆ դոլար է փոխանցել Ռումինիա:

2008թ. օգոստոսի 20-ին բանկում նույն անձը 1.383.960 դրամ է փոխարկել ԱՄՆ դոլարի և 4560 ԱՄՆ դոլար է փոխանցել Ռումինիա:

«Իրեղեն ապացույց ճանաչելու և քրեական գործին կցելու մասին» 21.11.2011թ. որոշման համաձայն՝ «ՎՏԲ Հայաստան բանկ», «Անելիք բանկ» և «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունների բանկոմատներից հայտնաբերված բանկային քարտերի կեղծ կրկնօրինակները ճանաչվել են իրեղեն ապացույց:

«Այլ փաստաթղթերն ապացույց ճանաչելու և քրեական գործին կցելու վերաբերյալ» 21.11.2011թ. որոշման համաձայն՝ ապացույց են ճանաչվել. 2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Վեսթերն Յունիոն» համակարգով դրամային փոխանցում կատարելու 12.08.2008թ. դիմումը և

կանխիկ մուտքի հ. 000138 հայտա-րարագիրը, ըստ որոնց՝ նշված օրը
Դրագոշ Իոնուց Բոտեղատուն «Արարատ Բանկ» ԲԲ ընկերության
«Ամիրյան» մասնաձյուղից 4.928 ԱՄՆ դոլար է փոխանցել Մեծ
Բրիտանիա՝ Լաուրեն-տիու Կապմարեյին:

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ արտարժույթի
վաճառքի AAA 153427 համարի 16.08.2008թ. անդորրագիրը, ըստ որի՝
Դրագոշ Իոնուց Բոտեղատուն «ԱմերիաԲանկ» ՓԲ ընկերության
ք.Երևանի Վ.Սարգսյան փողոցի հ. 2 հասցեում գործող մասնաձյուղում
1.458.000 դրամը փոխարկել է 4.813,73 ԱՄՆ դոլարով,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Վեսթերն Յունիոն»
համակարգով դրամային փոխանցում կատարելու 16.08.2008թ. դիմումն ու
օրդերը, ըստ որոնց՝ նշված օրն Դրագոշ Իոնուց Բոտեղատուն
«ԱմերիաԲանկ» ՓԲ ընկերության՝ ք.Երևանի Վ.Սարգսյան փողոցի հ. 2
հասցեում գործող մասնաձյուղից 4813 ԱՄՆ դոլար է փոխանցել Մեծ
Բրիտանիա՝ Լաուրենտիու Կապմարեյին,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ արտարժույթի
վաճառքի AAA 002093 համարով 14.08.2008թ. անդորրագիրը, ըստ որի՝
Դրագոշ Իոնուց Բոտեղատուն «ԱմերիաԲանկ» ՓԲ ընկերության
ք.Երևանի Վ.Սարգսյան փողոցի հ. 2 հասցեում գործող մասնաձյուղում
1.520.000 դրամը փոխարկել է 5000 ԱՄՆ դոլարով:

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Վեսթերն Յունիոն»
համակարգով դրամային փոխանցում կատարելու 14.08.2008թ. դիմումն և
օրդերը, ըստ որոնց՝ նշված օրն ամ-բաստանյալը «ԱմերիաԲանկ» ՓԲ
ընկերության՝ ք.Երևանի Վ.Սարգսյան փողոցի հ. 2 հասցեում գործող
մասնաձյուղից 5000 ԱՄՆ դոլար է փոխանցել Մեծ Բրիտանիա՝
Լաուրենտիու Կապմարեյին, որպես բնակության վայր՝ նշելով «Ամրոց»
հյուրանոցը,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ արտարժույթի
փոխանակման 808200-0374509 համարով 20.08.2008թ. անդորրագիրը,
ըստ որի՝ Դրագոշ Իոնուց Բոտեղատուն «Արդ-շինհնվեստբանկ» ՓԲԸ
«Տիգրան Մեծ» մասնաձյուղում 1.208.000 դրամը փոխարկել է 4.000 ԱՄՆ
դոլարով,

2008 թվականի դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Մոնեյ Գրամ»
համակարգով դրամային փոխանցում կատարելու մասին 20.08.2008թ.
դիմումը և անդորրագիրը, ըստ որոնց՝ նշված օրն Դրագոշ Իոնուց
Բոտեղատուն «Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ «Տիգրան Մեծ» մասնա-
ձյուղից Լաուրենտիու Կապմարեյի անվամբ Մեծ Բրիտանիա է փոխանցել
5.000 ԱՄՆ դոլար և որպես բնակության վայր՝ նշել է «Ղվին» հյուրանոցը,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ արտարժույթի
փոխանակման 8081-900155189 համարով 19.08.2008թ. անդորրագիրը,
ըստ որի՝ նշված օրն Դրագոշ Իոնուց Բոտեղատուն
«Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ «Երևան» մասնաձյուղում 1.515.000 դրամը
փոխարկել է 5.000 ԱՄՆ դոլարով,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Մոնեյ Գրամ»
համակարգով դրամային փոխանցում կատարելու մասին 19.08.2008թ.
դիմումը, ըստ որի՝ նշված օրն Դրագոշ Իոնուց Բոտեղատուն
«Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ «Երևան» մասնաձյուղից Լաուրենտիու
Կապմարեյի անվամբ Մեծ Բրիտանիա է փոխանցել 5.000 ԱՄՆ դոլար՝
որպես բնակության վայր նշելով «Ավիատրանս» հյուրանոցը,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ արտարժույթի
փոխանակման 80819-00498235 համարով 19.08.2008թ. անդորրագիրը,
ըստ որի՝ ամբաստանյալն «Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ «Էրեբունի»
մասնաձյուղում 1.510.000 դրամը փոխարկել է 5.000 ԱՄՆ դոլարով,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Վեսթերն Յունիոն»
համակարգով դրամային փոխանցում կատարելու 12.08.2008թ.
արտարժույթի մուտքի օրդերը և անդորրագիրը, ըստ որոնց՝ նշված օրն
ամբաստանյալը «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության «Թունանյան 17» մաս-
նաձյուղից Լաուրենտիու Կապմարեյի անվամբ Մեծ Բրիտանիա է
փոխանցել 4.966 ԱՄՆ դոլար,

2008թ. դեկտեմբերի 11-ին առգրավված և զննված՝ «Վեսթերն Յունիոն»
համակարգով դրամային փոխանցում կատարելու մասին 11.08.2008թ.
արտարժույթի մուտքի օրդերը և անդորրագիրը, ըստ որոնց՝ նշված օրն

